203. Արդյունագործության չափաբանակ-**Норма промысла-Hunting quota, Trapping norm**-Բնական որոշ պաշարների (անտառ, ցամաքային ու ծովային կենդանիներ, այդ թվում՝ ծկներ, հատապտուղ, սունկ և այլն) օգտագործման չափաբաժն, որի դեպքում դրանք կարող են ինքնավերականագնել կամ աստիճանաբար օգտագործել:

204. Արդյունագործություն-**Промысел-Hunting**, Trapping-Տնտեսական նպատակներով (որսորդություն, անտառահատում, ծկնորսություն և այլն) կենսազանգվածի ինչ-որ մասի իրացումն օգտակար արտադրանքի տեսքով՝ գլխավորապես առանց շահագործվող օբյեկտների արհեստական բազմացման: Երբեմն օգտագործվում են արհեստական վերականգնման մեթոդներ (օր.՝ ծկնաբուծական կայաններ, արհեստական անտառատնկումներ և այլն):

205. Արդյունավետ ճառագայթում-**Эффективное излучение-Effective radiation**-Երկրագնդի մակերևույթի ճառագայթման և այն կլամած մրնուրուի հանդիպակաց ճառագայթման տարբերությունը:

206. Արդյունավետ տեղումներ-**Эффективные осадки-Effective precipitation**-Մընուրուտային տեղումների մաս, որը մնում է հողում (չի հոսում), և բույսերը կարող են օգտագործել:

207. Արեգակնային ակտիվություն-**Солнечная активность-Solar activity**-Արեգակին բնորոշ գոյացումների և երևույթների (արեգակնային բժեր, բռնկումներ, ժայթքալեզուներ) կանոնավոր առաջացումը: Գոյաւթյուն ունի արեգակնային ակտիվության տարեշրջանների մոտավորապես 11-ամյա պարբերականություն: Արեգակնային ակտիվությունն իր ազդեցությունն ունի երկրային գործընթացների (մագնիսական փորորիկներ, գագերի իննացում, մշակաբույսերի բերքատվություն ու համաճարակներ) վրա:

208. Արեգակնային ճառագայթում-**Солнечная радиация-Solar radiation**-Արեգակի էլեկտրամագնիսական և մանրամասնիկ ճառագայթումը: Էլեկտրամագնիսական ճառագայթումը (արեգակի լուսասփյուռ էներգիան) տարածվում է 300000 կմ/վ արագությամբ: Մանրամասնիկ ճառագայթումը հիմնականում կազմված է պրոտոններից, որոնք շարժվում են 300-1500 կմ/վ արագությամբ և գործնականորեն լրիվ որսվում են երկրագնդի մագնիսուրուտի կողմից: Արեգակնային ճառագայթումը երկ-

բազմության մակերևույթի վրա և մքնուրտում տեղի ունեցող արտածին գործընթացների էներգիայի միակ աղբյուրն է:

209. Արխեօֆիտ-Archeophyte-սես Հնաբույ:

210. Արիեստական ընտրություն-Իշխառական ռոմբ-*Artificial selection*-  
Բուսական և կենդանական աշխարհների անհրաժեշտ տնտեսական հատկանիշներ  
ունեցող առանձնյակների գիտակցված և չգիտակցված ընտրասերում:

**211. Արհեստական տարածասահման-Առկուստավենինի գրառադաշտության առաջնային գործառնությունները:**

**212. Արհեստակենսուլորտ-Արտօնութեառարկան** կամ Արհեստակենսուլորտի մարդու կողմից յուրացվող շերտը, որտեղ կան բնակելի արհեստական արբանյակներ:

**213. Արմատաբնակ-Բիզոբնոմ-Rhizobiont-Անորային բույսերի արմատամերձ տարածքում բնակվող օրգանիզմներ:**

**214. Արմատական կենսաերկրահամակեցություն-Կօթոնոյ բιոգեօզենզ-Primary biogeocoenosis-Բնական պայմաններին համապատասխանող և նարդու գործունեության հետևանքով գրեթե չխախտված կենսաերկրահամակեցություն:**

**215. Արոտավայրի տարողություն-Էմքոստ՝ *pasture capacity*-Որոշակի արոտավայրում կամ դրա միավոր մակերեսի վրա մեկ անվա ընթացքում արածող կենդանիների թիվը:**

**216. Արտագոտի բուսականություն-Էքտրազոնալիա բաշխությունը**  
**Extrazonal vegetation-Բուսական համակեցություն, որը նման է բնական որևէ գոտու բուսականությանը, բայց աճում է դրանից դուրս այնպիսի վայրերում, որտեղ կան քննորոշ պայմաններ: Օրինակ՝ տափաստանային բուսականության կղզակներ լեռների հարավային լանջերին, անտառային գոտու սահմաններում:**

217. Արտադրական միջավայր-Промышленная среда-Working environment-Արտադրական ծերնարկությունում նարդուն շրջապատող միջավայրը:

**218. Արտադրող-Պրոդյուսեր-Producer-ի նընատուն և քիմիատուն (արկի և քիմիական ռեակցիաների էներգիան օգտագործող) օրգանիզմներ, որոնք պարզ անօրգանական բաղադրամասերից ստեղծում են օրգանական նյութեր:**

**219. Արտադրության գոյապահպանացում-Էկոլոգիզացիա պրոցեսում**-Ecologization of Industry-Բնության վրա արդյունաբերական վնասակար ազդեցությունը կանխարգելելու միջոցառումներ: Այդ նպատակով մշակվում են անբափուն լիան սակավաթափող տեխնոլոգիաներ, ստեղծվում ուեալ մաքրման համակարգեր:

220. Արտադրության ջրատարողություն-Վodoемкость производства-Water capacity of production-Միավոր պատրաստի արտադրանք ստանալու համար օգտագործվող ջրի քանակը:

221. Արտադրության վճասակարության գործակից-Կօզֆիզւուու արժեքությունը՝  
կազմության համար՝  $I_h = \frac{C}{\sum_{i=1}^n C_i}$

**222. Արտազուգավորում-Այտքացման-Outbreeding-4-6** սերունդներում անմիջական ազգակցական կապեր չունեցող (մերձավոր նախնիների բացակայություն) նույն տեսակի առանձնյակների տրամախաչում անասնաբրությունում:

**223. Արտաթորանք-Էկսքրետ-Excrete-Օրգանիզմի նյութափոխանակության վերջնական արդյունքը:**

**224.** Արտածին գործընթացներ-Էկզոգեններ պրոցեսս-Exogenous processes-Երկրագնդի մակերևույթի վրա և երկրակեղեկի վերին շերտի երկրաբանական գործընթացները: Պայմանավորված են արեգակնային ճառագայթման էներգիայով, ծանրության ուժով և օրգանիզմների կենսագործունեությամբ (հողմնահարում, ջրի, սառուցիչ, քանու և այլ ազդեցություններ):

**225.** Արտակենդանացիր-Էռուսօօք-Erizoocchoro-Բույսեր, որոնց պտուղները, սերմերը և սպորները տարածվում են կենդանիների արտաքին ծածկույթի (մազիկներ, փետուրներ) և ծայրանդամների միջոցով:

**226.** Արտամակարույժ-Էկտոպարազ-ectoparasite-Տիրոջ (կենդանու, բույսի) մաշկի վրա մակարուծվող օրգանիզմներ:

**227.** Արտամդում-Էլլազա-Ellason-Գոյության փոփոխվող պայմանների պատճառով համակեցությունից տեսակի դուրս մղում:

**228.** Արտանետման չափարաժին-Նօրմա վայրության չափարաժին-Նօրմա վայրության ծեռնարկության շրջակա միջավայրն աղտոտող գազանման կամ հեղուկ բույսատրելի թափոնների քանակը:

**229.** Արտանետում-Վայրության չափարաժին-Նօրմա վայրության ու տրանսպորտի տեխնոլոգիական գործընթացներում առաջացող և շրջակա միջավայր թափանցող աղտոտիչ նյութեր:

**230.** Արտաշերմ-Էկտոթերմ-ectotherm-Օրգանիզմներ, որոնք առանց ջերմության արտաքին աղբյուրների գոյություն ունենալ չեն կարող (օր.՝ բույսեր):

**231.** Արտաքին միջավայր-Ցանակային սրածառացում-Outdoor environment-Ուսումնասիրվող օբյեկտից և սուբյեկտից դուրս գտնվող բնության ուժերը և երևույթները, նյութերը և տարածքները, մարդու գործունեությունը:

**232.** Արտաքին միջավայրի պայմանների նշանացույց-Ինդիկատոր չեղանակամական սրածառացում-Outdoor environment condition indicator-Գլխավորապես կենդանի օրգանիզմ - նշանացույցներ կամ նշանացույցային համակեցություններ, որոնք արտաքին միջավայրի ընդհանուր վիճակի ցուցիչներ են: Ընդգրկում են ֆիզիկական, քիմիական, կենսարանական և այլ գործոններ, դրանց ուժգնությունը և հարաբերակցությունը, փոփոխման արագությունը և աստիճանը:

**233.** Արտեզյան ջուր-Արտեզյան ջուր-Artesian water-Ջրակայում շերտերով սահմանափակված ստորգետնյա ավազանների ջուրը: Ավելցուկային ճնշման դեպքում դուրս է գալիս գետնի երես կամ շատրվանում է:

**234.** Արտոլորտ-Էկզոսֆերա-Exosphere-Երկրագնդի մակերևույթից ամենահեռու գտնվող (800-1600 կմ) քաղանթը, որտեղ դեռ նկատելի են մընուրտի գագերը, և ոտեղից տեղի է ունենում ատոմների (հիմնականում ջրածնի և հելիումի) հոսք տիեզերական տարածություն:

**235.** Արևաբուժություն-Գելատոթերապի-Heliotherapy-Երկրագնդի մակերևույթից ամենահեռու թուժման և կանխարգելման, նյութափոխանակության խթանման, վարակամերժության քարձրացման նպատակով արևային ճառագայթների օգտագործումը: Զնորանը կատարվում է հատուկ կահավորված շինություններում: Զարաշահումը վտանգավոր է առողջության համար: Դակացուցված է որոշ հիվանդությունների ժամանակ:

**236.** Արևաբույս-Գելատի-Heliotherapy-Արևի լույսով պայմանավորված վայրերը գերադասող բույսերը (լայնատերևն և փշատերև ծառերի, հացագինների մեծամասնությունը):

**237.** Արևակներգետիկա-Գելազներգետիկա-Helioenergetics-Արևից էներգիայի ստացում: Կամ արևային էներգետիկայի մի քանի տեխնոլոգիաներ: Հեռանկարային է ՀՀ-ի համար:

**238. Արևալոգարան-**Solarium**-Արևալոգամքներ ընդունելու ոչ մեծ հրապարակ:** Ստեղծվում է զրոսայգիներում, անտառապուրակներում, բաց, լավ արևակող վայուերում:

**239. Արևասեր-**Գևաօֆիս-**Heliophiles**-Կյանքի և զարգացման համար լուսավոր Վայրեր գերադասող օրգանիզմներ:****

**240. Արևասուն-**Գևաօթրօֆ-**Heliotroph**-Արևի էներգիայի շնորհիվ անօրգանականից օրգանական նյութեր սինթեզող օրգանիզմ:****

**241. Արևափայլքի տևողություն-**Prolongation** ժամանակը (օրվա, ամսվա, տարվա մի մասի բազմամյա միջինը), երբ տվյալ վայրում արեւ հորիզոնի վրա է և ծածկված չէ ամպերով, մառախուղով, նշուշով և այլն: Արտահայտվում է ժամերով կամ տվյալ ժամանակահատվածի և ցերեկվա տևողության տոկոսային հարաբերակցությամբ:**

**242. Արևնակ-**Եալեւեդը-**Balvedere**-Ծենքի վրա աշտարակ կամ հրապարակ, առանձին կառույց բարձրադիր վայրում, որտեղից դիտվում է գեղատեսիլ շրջակայքը:****

**243. Ացիդոֆիլ-**Ազածօֆիս-**Acidophiles**-1.** Թթվային (քացախաթթվային, կարնաթթվային) միջավայրում ապրող մանրէներ: 2. Թթու հողերի բույսեր:**

**244. Առոտէկոլոգիա-**Առէէոլոգիա-**Autecology**-տես հնքնագոյապահպանություն:****

**245. Ափահովիկ-**ԲրաՅ-**Breaze-**Ուղղության օրական պարբերականություն ունեցող տեղական քամի ծովերի, լճերի, երբեմն գետերի ափերին: Պայմանավորված է ցամաքի և ջրատարածքի ջերմաստիճանների տարրերությամբ: Ցերեկային (այսինքն՝ ծովային) ափահովիկը փշում է ծովից դեպի ավելի տաք ցամաքը, գիշերայինը (ափայինը) ավելի հովացած ցամաքից դեպի ծովը: Ափահովիկն ընդգրկում է ափի համենատարար ներ շերտ (մինչև մի քանի տասնյակ կմ): Դատկապես լավ է արտահայտված արևադարձերում:****

**246. Աֆիցիդ-**Ափակա-**Aphicidē-տես Տիզասպան:******

## Ը

**247. Բազիֆիլ-**Բազսֆալ-**Basiphile-տես Նիմնասեր******

**248. Բազիֆիտ-**Բազսֆիմ-**Basiphyte-տես Նիմնարույս:******

**249. Բազմաթթվածնաբնակ-**Էպրուօսիսօմ-**Euryoxysiont**-Զրային օրգանիզմներ, որոնք ունակ են դիմանալու ջրում լուծված թթվածնի զգակի տատանումներին:****

**250. Բազմալույս-**Էպրսֆոմ-**Euphrasit**-Լուսային ռեժիմի ու ճառագայթման ամենատարեր պայմաններում բնականոն զարգանալու և գոյություն ունենալու ունակ օրգանիզմ:****

**251. Բազմածնություն-**Պոլիվոլուտինուտ-**Polyvoltinity**-Նիմնականում միջատների տարվա ընթացքում մի քանի սերունդ ունենալու հատկությունը:****

**252. Բազմակեր-**Պոլսֆար-**Polyphage**-Տարբեր և բազմազան կերերով սնվող օրգանիզմ, որը, սակայն, ամենակեր չէ: Գերադասում է ընդարձակ, բայց համեմատարար ամբողջական համակարգային կատեգորիայի (օր.՝ անողնաշարավորներ, սնկեր և այլն) կերերի խումբ:****

**253. Բազմածնություն-**Պոլիմօրֆիզմ-**Polytrophism**-Տեղախնիքի տարածասահմանում մեկից ավելի ծագումնաբանորեն տարբեր ձևեր ունենալու երևույթը: Այն տեղախումբը պահպանում է որպես մեկ ամբողջական համակարգ:****

**254. Բազմանեխ-**Պոլիսառօբ-**Polyzootrope**-Խիստ աղտոտված ջրավազաննե-****

րում բնակվող անօդակյաց օրգանիզմներ: Կարող են ընդունվել որպես կենսածին նյութերով ջրի մեջ աղտոտվածության կենսանշանացույցներ:

255. Բազմանեխս ջրավագան-**Պոլիսարոբնամ անձօսմ**-Polysaprobe pond-Օրգանական նյութերի մեջ պարունակություն և այդ պատճառով բազմատիղմածին օրգանիզմներով բնակեցված ջրավագան: Դաճախ ծևավորվում է կեղտաջրերի բափման տեղերում:

256. Բազմացերմ-**Էպրտերմ**-Eurytherm-Ծրջակա միջավայրի ջերմաստիճանի գգալի տատանումների պայմաններում ապրելու ունակ օրգանիզմ:

257. Բազմացերմարնակ-**Էպրտերմօնսոմ**-Eurythermobiont-Ջերմաստիճանի մեջ տատանումներին դիմացող օրգանիզմներ (օր.՝ բարեխսառն գոտու կենդանիները և բույսերը):

258. Բազմասուն-**Էպրտրօֆ**-Eurytroph-ՍԱԾԻՒ բազմազան տեսակով սնվող օրգանիզմ:

259. Բազմատեղաբնակ-**Էպրտոնօնոմ**-Eurytropobiont-Բուսական և կենդանական օրգանիզմներ, որոնց տարածված են գոյության բազմազան պայմաններ ու նեցող վայրերում: Օրինակ՝ սովորական եղեգը, որն աճում է ջրամբարների ափերին, ջրում, աղուտներում, աղակալած հողերում:

260. Բազմացիր-**Ալոչօք-Allochore**-ԲՈՒՅՄԵՐ, որոնց սաղմերը (պտուղները, սերմերը, սպորները) տարածվում են քանու, ջրի, կենդանիների և մարդկանց միջոցով:

261. Բազմացման գաղր-**Անադրոմիա** Միգրացիա-Anadromous migration-Բազմացման համար ջրային կենդանիների անցումը ծովերից գետերը:

262. Բազմացման իներցիա-**Իներցիա քազմոխենա**-Reproduction Inertia-1. Բազմացման հասակի օրգանիզմների շատացնան և ծերացած օրգանների երկարակեցության հետևանքով առանձնյակների թվաքանակի կայուն ավելացում: 2. Չնայած կերի անբավարարությանը՝ տեղախնդիր առանձնյակների քանակի ավելացում, որը հետազոյս բերում է դրանց մեծաքանակ ոչնչացմանը:

263. Բաթիալ-**Բատիալ**-Bathyal-Աբիսալի վերին շերտը: Սովորաբար ջրի մակերևույթից 200-500-ից 1000-1500 մ խորությունը, որը համապատասխանում է մայրացման լանջին:

264. Բաժնետադար-**Ճառայազ-Ճառայս**-Հողվածոտանի կենդանիների (այդ թվում՝ միջատների) բնախոսական վիճակը, երբ դադարում են ծևագոյացնող գործընթացները, և իշխում է նյութափոխսանակության ընդհանուր մակարդակը: Ծրջակա միջավայրի անբարենպաստ սեղոնային պայմաններին հարմարվելու եղանակներից մեկն է:

265. Բախարագելիչ գոտի-**Եցիքարան զոնա**-Buffery zone-Արգելոցի, արգելավայրի, ազգային պարկի շուրջը տարածք (սովորաբար՝ թիզ թե շատ լայն գոտի), որտեղ սահմանափակված է տնտեսական գործունեությունը: Նպատակ ունի օժանդակել հիմնական տարածքում (արգելոց, ազգային պարկ և այլն) հաստատուն հավասարակշռության պահպանմանը:

266. Բակտերիոֆագ-**Բակտերիոֆագ**-տեսն Մանրէակեր:

267. Բանական ուղրու-**Նոօսֆերա**-Noosphere-տեսն Ստաղլորտ:

268. Բանջարբուսուկ-**Իզմօրօզ**-Soft rime, Rime deposits-Ծառերի ճյուղերի, հաղորդաբարերի և այլ առարկաների վրա մառախուղի մամանակ սառույցի մանր բյուրեղների նատվածքի առաջացում: օդի ջերմաստիճանի բարձրացման ընթացում ջրային գոլորշու ցնդման հետևանքով: Սովորաբար լինում է խաղաղ, ցուրտ եղանակին:

269. Բարենպաստ կենավայր-**Ստացալ ուղարկանա**-Station of experiences-Կյանքի համար բացարկի բարենպաստ պայմաններով ցամաքային կամ ջրային տա-

րածք, որտեղ տեսակը պահպանվում է իր համար ամենածանր շրջանում:

270. Բարձրաջերմ-*Megatherm*-*Megatherm*- Բույսեր, որոնք հիմնականում բնորոշ են  $20^{\circ}\text{C}$ -ից ոչ ցածր տարեկան միջին ջերմաստիճան և խոնակ կլիմա ունեցող արևադարձային գոտուն:

271. Բարձրաֆաներաբույս-*Megaphanerophyte*-30 մ-ից բարձր ծառեր:

272. Բարձունքային գոտիականություն-*Высотная зональность*- Vertical differentiation-Լանջափտների օրինաչափ հերթափոխը լեռներուն պայմանավորված ծովի մակարդակից ունեցած բարձրությամբ և լանջի տեղադիրքով: Գլխավորապես կապված է ջերմության պակասի և տեղումների քանակի փոփոխության հետ: Արտահայտվում է կլիմայի, հողերի, բուսածածկույթի, ռելիէֆագոյացող գործընթացների փոփոխությամբ:

273. Բարձունքային հիվանդություն-*Высотная болезнь*-Altitudinal sickness- Հիվանդություն, որը պայմանավորված է 2000 մ-ից ավելի բարձրություն ունեցող տարածքների լանջափտակլիմայական յուրահատուկություններով, մասնավորապես՝ գերկարծ մանուշակագույն մեծ ճառագայթմամբ, ցածր ջերմաստիճաններով, մթնոլորտի ցածր ճնշմամբ, մթնոլորտում թթվածնի պակասությամբ: Դայտնի են ծնակուրությունը, թքերի այտուցունք, տեղաբնակների քրոնիկական լեռնային հիվանդությունը:

274. Բարձունքային ջերմաստիճանային աստիճանափոխություն-*Вертикальный температурный градиент*-Altitudinal temperature gradient-Օդի ջերմաստիճանի ուղղաձիգ փոփոխունք տարածության միավորի վրա: Դրական է համարվում, եթե ըստ բարձրության ջերմաստիճանն իջնում է: Դակառակ դեպքում (ջերմաստիճանի շրջում) բարձունքային ջերմաստիճանային աստիճանափոխունքը բացասական է: Աստիճանափոխման նշանակությունը հյուսիսային կիսագնդի միջին լայնություններում մոտավորապես յուրաքանչյուր 100 մ բարձրանալիս  $0,65^{\circ}\text{C}$  է:

275. Բացասական սրբես-*Distress*-Oդգանդզմի բացասական ոչ բնորոշ հակագնեցությունը իրեն ուղղված արտաքին ցանկացած ազդեցությամբ («վատ սրբես»):

276. Բացարձակ առավելագույն-*Absolutum*-Absolute maximum- *максимум*- ժամանակի ընթացքում փոփոխվող օդերևութաբանական որևէ տարրի (օդի ջերմաստիճան, մթնոլորտային ճնշում և այլն) բազմամյա ամենամեծ նշանակությունը տվյալ կետում, մարզում, երկրում կամ ամբողջ երկրագնդում:

277. Բացարձակ խոնավություն-*Absolutum* ռազմություն-*влажность*-Absolute humidity- Օդում ջրային գոլորշու խոռությունը՝ արտահայտված գ/մ<sup>3</sup>-ով:

278. Բացարձակ նվազագույն-*Absolutum* մինիմում-*Absolute minimum*-Ժամանակի ընթացքում փոփոխվող օդերևութաբանական որևէ տարրի (օդի ջերմաստիճան, մթնոլորտային ճնշում և այլն) բազմամյա ամենափոքր նշանակությունը տվյալ կետում, մարզում, երկրում կամ ամբողջ երկրագնդում:

279. Բաց բուսահամակեցություն-*Открытые растительные сообщества*- Open plant community-Բուսական համակեցություն, որը բնորոշվում է անկայուն տեսակային կազմով, ձևավորված կառուցվածքի և տեսակների փոխագործության բացակայությամբ: Նոր տեսակները հեշտությամբ են բափանցում այդ համակեցություն: Բնորոշ է սուրբեսիաների սկզբանական փուլերին:

280. Բեղլենդ-*Бедленд*-Bad lands-Բառացիորեն՝ վատ հողեր: Խիստ ու բարդ ստրատված, հիմնականում ցածրավեռ ռելիէֆ, որը հողագործության համար պիտահի չէ: Առաջանում է հիմնականում չորային կլիմա ունեցող մարգերում՝ անջրաբա-

փանց կավային ապարների վրա՝ առավելագույն տեղումների ժամանակահատվածում՝ մակերեսային ջրերի լվացման հետևանքով։ Դասական բեղլենդը զարգացած է Յուսիսային Ամերիկայի ժայռոտ լեռների արևելյան լանջերին։ ՀՀ-ում հանդիպում է հարավային շրջաններում։

281. Բեղունության գործակից-Կօզֆիպսուում լուծարություն-Reproduction rate-1000 բնակչի (առանձնյակների) կամ 1000 կնոջ (էգերի, բազմացող առանձնյակների) հաշվով մեկ տարում ծնվածների քանակը:

282. ԲԵՂՈՒՅՆԻՔՅՈՒՆ-ՊԼՈՋՈՎԱԿՈՏԾԵ-Fecundity-ԿԵՆԴՐԱՆԻՑԵՐԻ ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒՆԵՐՆ և արտաքին ազդեցություններով ծեռք բերած բազմացման արագության աստիճանը: Արտաքին ազդեցություններից են վարակասպանները և այլ քիմիական միացություններ, ծանալին և այլ աղտոտիչներ:

**283. ԲԵՆԹՈՍ-ԲԵՆԹՈՍ-Benthos-Ջրամբարների հատակին ապրող օրգանիզմների ամբողջությունը:** ԱՅՆԻ օրեւէստ են ծկների և այլ օրային օրգանիզմների համար:

284. Բերգմանի կանոն-**Բերգման-Bergman's rule**-Ղեպի տարածաշրջանի հյուսիս էվուլյուցիայի ընթացքում կենդանիների նույն տեսակի առանձնյակների մարմնների չափսերն ավելի մեծանում են:

285. Բերրիություն-Ուղարկություն-Fertility-Բույսերին սննդանյութերով ու խոնակությանը բավարարելու հողի համակարգություն:

**286. Բերքատվություն-Յրօխանոսť-Productivity, Yield-Առավելագույն օգտակար արտադրանք տալու մշակաբույսերի հատկությունը կամ միավոր մակերեսից ստացվող առավելագույն արտադրանքը:**

287. Բլեկմանի օրենք-Զակոն Բլեկման-Bleckman's law-Չափարկված գործոնների ընդհանուր ազդեցությունը կարող է գերազանցել այլ գործոնների գումարային լրացուցիչ ներգործությունը:

288. Բժավոր տարածաշրջան-Պլատստի օքեան-Spotify area-Տեսակի, այլ կարգաբանական խմբի կամ համակեցության տարածաշրջան, որը նարդու գործունեությանը բաժանված է ոչ մեծ մեկուսացված հատվածների: Արհեստական տարածաշրջաննի տպառատեսակ է:

**289.** Բնարդգելոցային օբյեկտ-Պրորազօնավեճին մշակութառողջարարական, գիտական, գոյապահպանական պահանջները բավարարելու համար նախատեսված բնական օբյեկտ: Ստեղծվում է տնտեսական կան տնտեսառեկրեացիոն լրիվ կամ մասնակի օգտագործումից այլ օբյեկտներո ապահանելու համար:

290. Բնախոսական նվազագույնին համապատասխանող խտություն-  
Плотность, соответствующая физиологическому минимуму-Physiological mini-  
mum corresponding density-Տարածության բնակեցման խտություն, որի մեջացման  
դեպքում օգանիզմն առողեն գոլության համար նվազագույն պայմաններ չի ունենա:

**291. Різущописака́н зоруївріпін-Фізіоло́гіческа́я сухосте́-Physiologicaі drought-Зсуїсісіа́жін երկрінірі կամ բարձրісінінажін հողերі վիճակ, երբ հողін եղած հեղուկը բույսіні չեն կարող օգտագործել: Різущописака́н зоруївріпін պատ-ճаюніні են հողի ցածր ջերմасістінін, բարձր թթվајмінівріпін, թթվаծնի ամբա-վարарпітінін, աղայін լուծույքі բարձր խտույքін, մոլեկулажін օրգанізма́н նітілերі արևատіріпін. Մնասսанар աղեղո կամ թունінівріліքі:**

**292.** Բնախոսուլորտ-Փիզիոսֆերա-*Physiosphere*-Երկրագնդի ոլորտ, որը կազմված է ոչ եւնասածի եւկրաուլորտներից (քարուլորտ, օքուլորտ, մենուլորտ):

**293. Բնածին-Աբոստոն-Autochthon-Տվյալ տեղանքում առաջացած և այնտեղ էլ ներկայաւում գործություն ունեցող տեսակ կամ կարգաբանական այլ միավոր (օր.**

բաղակտուցը և նվենին Ավստրալիայում):

294. Բնակակցություն-**Синодика-Synolda**-տես՝ Շամագոյություն:

295. Բնական աղտոտում-**Естественное загрязнение-Natural pollution**-Աղտոտում, որն առաջանում է որևէ բնական, սովորաբար աղետալի պատճաներից (հրաբխի ժայթքում, սելավի հոսք և այլն): Երբեմն լինում է նարդկանց կողմից բնության վրա անուղղակի ազդեցության հետևանքով:

296. Բնական բարիքներ-**Природные блага-Natural wealth**-Բնական պաշարների և հասարակության կյանքի բնական պայմանների անբողջություն, որն օգտագործվում է ներկայումս կամ կարող է օգտագործվել տեսանելի ապագայում:

297. Բնական բուսականություն-**Естественная растительность-Natural vegetation**-Մարդու ազդեցությանը (վարուցանք, հատումներ, արածեցում, խոտանարկած առաջնային բուսականություն):

298. Բնական գազ-**Природный газ-Natural gas**-Տարբեր երկրաբանական պայմաններում բնականորեն առաջացող այրվող գազ: Կան նավթային, այդ թվում՝ ուղեկցող, ինքնուրույն գազային, բարձր ծննդամբ գազախտացված հանքավայրեր և այլն: Բնական գազի սովորական բաղադրությունն է մեթան (մինչև 98%), էթան, պրոպան, բութան, խլորոֆրան և պենտան:

299. Բնական գործոն-**Природный фактор-Natural factor**-Մարդուց անկախ կամ միայն նրա կենսաբանական եռթյան հետ կապված բնության կամ բնական միջավայրի ազդեցությունը:

300. Բնական լանդշաֆտ-**Природный ландшафт-Natural landscape**-Միայն բնական գործոնների ազդեցությամբ ձևավորված կամ ձևավորվող (մարդկային գործունեության ազդեցությունը չկրած) լանդշաֆտ:

301. Բնական համալիր-**Природный комплекс-Natural complex**-1. Բնության ցանկացած փոխկապակցված երևույթները: Այն ավելի լայն հասկացություն է, քան լանդշաֆտը: 2. Տերմին, որը նշում է հողերի, բուսականության, լանդշաֆտների օրինացափ տարածական համադրությունները:

302. Բնական համակարգերի ստորակարգություն-**Иерархия природных систем-Hierarchy of natural systems**-Բնության գործառնական համակարգերի համաստորադասությունը: Սկսվում է միջուկային տարրական մասնիկով և պարտվում է տիեզերքով: Փոքր համակարգերը կազմում են մեծ համակարգերի ենթահամակարգեր (օր.՝ մասնիկները կազմում են ատոմ, իսկ վերջինները՝ մոլեկուլներ):

303. Բնական համակարգի ինքնակարգավորում-**Саморегуляция природной системы-Self-regulation of natural system**-Բնական կամ մարդագիտական ներգործությունից հետո համակարգի վերականգնվելու ունակությունը: Սովորաբար հիմնված է առանձին ենթահամակարգերի ու գոյապահպանական բաղադրամասերի հակառակ կապի սկզբունքի վրա և այդ պատճառով իրագործվում է ինքնաբերաբար:

304. Բնական համակարգի հուսալիություն-**Надежность природной системы-Reliability of natural system**-Կենսաերկրահամակաբներյան, լանդշաֆտի և բնական այլ համակարգի առանց կառուցվածքների և գործընթացների կտրուկ փոփոխությունների անվերջ գործներու հատկությունը:

305. Բնական համակարգի շարժմանքի որակ-**Динамическая характеристика природной системы-Dynamical quality of natural system**-Բնական համակարգերի՝ ժամանակի ընթացքում փոփոխվելու և կառուցվածքագործառնական բնութագրերը պահպանելու հատկությունը: Առանձնացվում են դիմամիկ մի քանի որակներ՝ մատչելիություն, մեկուսացվածություն, հուսալիություն, կայունություն և այլն:

306. Բնական համակեցություն-**Естественное сообщество-Natural community**-

Առանց մարդու ուղղակի ազդեցության առաջացած ու զարգացող համակեցություն:

307. Բնական համապատկեր-**Պրոբակտիրոֆիլ**-**բակտերիական համականք** կամ ազդակների խտության կամ ազդեցության աստիճանը: Օրգանիզմի նորմալ ապրելակերպը կոնկրետ վայրում համապատասխանում է էվլուվիցիայի ընթացքում բնական համապատկերի ազդեցության որոշակի մակարդակին: Առանձին նյութերի շատ կամ քիչ պարունակությունը բնության մեջ կարող է առաջացնել հիվանդագին փոփոխություններ օրգանիզմներում:

308. Բնական հավասարակշռության խախտում-**Կարսություն** պրոբակտիրոֆիլ բաղադրամանաբերի կամ տարրերի փոփոխություն, որը հանգեցնում է դրա վերակառուցմանը և այլ գոյահամակարգով փաստացի փոխարինմանը: Օրինակ՝ չորային գոտու անտառների հատումը կարող է պատճառ դառնալ դրա փոխարինմանը թվուտային գոյահամակարգով:

309. Բնական հավասարակշռություն-**Եռութեանություն** բաղադրամանաբերի կամ մարդու գործունեությամբ բույլ փոփոխված միջավայրատեղը բաղադրամանաբերի և բնական գործընթացների հիմնա վրա: Բնական հավասարակշռության նշանացույց է գոյապահպանական համակարգերի՝ սուբժետայի կլիմաքսային փուլերից հետո զարգանալու հատկությունը:

310. Բնական հարստություն-**Պրոբակտիրոֆիլ** բարձրություն-**Բնական ռեսուրսների** (պաշարների) միազումարությունը:

311. Բնական միջավայր-**Պրոբակտիրոֆիլ** սուբժետ-**Մարդու և մյուս օրգանիզմների** վրա ազդող բնական ու մարդու գործունեությամբ փոփոխված ոչ կենսածին և կենսածին գործուների ամբողջությունը: Շրջակա միջավայրի մյուս բաղդրիչներից տարբերվում է մարդու միջամտության բացակայությամբ, ինքնապահպաննան և ինքնակարգավորման հատկությամբ:

312. Բնական միջավայրի գոյապահպանական վճաս-**Էկոլոգիական արգելություն** բաղադրամանաբերի կամ սպառնալիք ստեղծող բացասական վայրություններ, որոնք առաջանում են բնական միջավայրի աղտոտման, բնական պաշարների սպառնան, գոյապահպանական համակարգերի վնասնան կամ քայլայման պատճառով: Դրանցից են բնախոսական և ծագումնաբանական վճասները: Ուղղելի գոյապահպանական վճասը փոխառությունը է բնական միջավայրի առանձին բաղադրամանաբերի վերականգնման, բնական ռեսուրսների վերարտադրության, շրջակա միջավայրի առողջացման միջոցով:

313. Բնական միջավայրի հսկողություն-**Կոնտրօլ** պրոբակտիրոֆիլ սուբժետ-**Պետական և հասարակական միջոցառումների** համակարգ, որը նպատակաւուղված է բնական միջավայրի և դրա առանձին օբյեկտների վիճակի ստուգմանն ու դիտարկումների կազմակերպմանը, բնության պահպանության միջոցառումների կատարմանը, բնական պաշարների նպատակահարմար օգտագործմանը, շրջակա միջավայրի առողջացմանը:

314. Բնական միջավայրի մարդածին աղտոտում-**Անտրոպոգենիություն** պրոբակտիրոֆիլ սուբժետ-**Անտրոպոգենի բարձրություն** բնական միջավայրի ֆիզիկաքիմիական, կենսաբանական որակական փոփոխություն, որը տեղի է ունենում տնտեսական գործունեության հետևանքով և գերազանցում է վնասակար ազդեցության նպատեսված չափանիշները: Տարբերում են ճառագայթային, ջերմային,

կենսաբանական, փոշու, գազային, ծայնային, բուրմունքային և այլ աղտոտումներ:

315. Բնական միջավայրի պահպանություն-**Охрана природной среды**-Environmental protection-տես Միջավայրի պահպանություն:

316. Բնական միջավայրի սպառում-**Истощение природной среды-Natural environment exhaustion**-Բնական օբյեկտի, շրջապատող բնական միջավայրի կենսապահովող գործառնությունների լրիվ կամ մասնակի դադարում՝ բնության վրա մարդածին բացասական ազդեցության հետևանքով: Արտահայտվում է բնական միջավայրի արտադրողականության, ինքնակարգավորման, վերականգնման, վերարտադրման, նյութերի և էներգիայի փոխանակության հատկությունների կորստով:

317. Բնական միջավայրի վատթարացում-**Деградация природной среды-Natural environment degradation**-Բնության մեջ, բնության ու մարդու միջև նյութափոխանակությունն ու էներգափոխանակությունն ապահովող գոյապահպանական կապերի քայլայում կամ էական խախտում, որն առաջանում է առանց բնության զարգացման օրենքները հաշվի առնելու մարդու կողմից իրագործվող տնտեսական գործունեությամբ:

318. Բնական միջավայրի վնաս-**Вред природной среды-Natural environment damage**-Բնապահտապանական օրենսդրության խախտման, մարդու չնտառված գործունեության հետևանքով բնական միջավայրում առաջացած բացասական փոփոխություններ: Տարբերում են անուղղելի և ուղղելի բացասական հետևանքներով վնասներ:

319. Բնական միջավայրի տարողունակություն-**Емкость природной среды-Natural environment capacity**-Բնական միջավայրի ունակությունը՝ կրելու սոցիալ-տնտեսական ծանրաբեռնվածություն (ժողովրդատնտեսական, ռեկրեացիոն, մշակութառողջապահական և այլն), առանց էակեն խախտելու իրագործվող կենսապահովման գործառնությունը: Պարտադիր ցուցանիշ է հասարակության տնտեսական ու սոցիալական զարգացումը պլանավորելիս:

320. Բնական միջավայրի տնտեսական վնաս-**Экономическая вред природной среды-Economical damage of natural environment**-Բնական միջավայրի բացասական փոփոխությունները (աղտոտում, բնական ռեսուրսների սպառում, գոյապահպանական համակարգերի վնասում կամ քայլայում): Փչացնում են ապրանքանյութական արժեքները, մեծացնում խախտված բնական միջավայրի վերականգնման ծախսերը, չեն արդարացվում ներդրված ծախսերը, չեն ստացվում պլանավորված օգուտները:

321. Բնական ներուժ-**Природный потенциал-Natural potential**-Գոյապահպահատնտեսական ցուցանիշների խումբ, որն արտահայտում է բնական համակարգերի (երկրահամակարգ, գոյահանակարգ և այլն) տնտեսության մեջ որևէ աշխատանք կատարելու կամ արտադրանք տալու հատկությունը:

322. Բնական նորացում-**Естественное израшивание-Natural self-thinning**-Երբանակության (գոյապահպանական խորշ զբաղեցնող տեղախնդիր կամ մի շարք տեղախնդիր բարձր խտություն) պատճառով բույսերի չորացում և կենդանիների ոչնչացում:

323. Բնական շղթայական փոխագոյում-**Природная цепная реакция-Natural chain reaction**-Երևույթ, որը բերում է իր հետ կապված այլ երևույթների փոփոխության: Օրինակ՝ փոշոտող միջատի անհետացումը անհնար է դարձնում պտղաբերությը, հետևաբես և սերմերով բազմացող բույսերի նոր սերունդների հայտնվելը, որն իր հերթին բերում է այդ բույսով սնվող կենդանիների վերացնմանը և այլն:

324. Բնական պայմաններ-**Природные условия-Natural conditions**-1. Մարդու

գործունեությունից անկախ (առանձին դեպքերում նրա կողմից վերափոխված) օրգանիզմների, մարմինների, երևոյթների ամբողջությունը, որն ազդում է ուսումնասիրվող համակարգում կենտրոնական համարվող ուրիշ օրգանիզմների, մարմինների և երևոյթների վրա: 2. Տնտեսաշխարհագրական ինստուվ՝ մարդկային հասարակության կյանքի ու գործունեության համար էական, բայց մարդկանց նյութական արտադրությունում ու ոչ արտադրական գործունեությունում աննիջական մասնակցություն չունեցող բնության պայմանները, մարմինները և ուժերը:

325. Բնական պարկ-**Կառուցածքային պարկ-Natural park**-Առաջնային պարագաներով անձեռնմխելի գործելակարգ ունեցող յուրօինակ և գեղատեսիլ բնական տարածքների պահպանության ձև: Երբեմն ընդգրկում է սահմանափակ տնտեսական օգտագործմամբ հողիանդակներ, որը թույլ է տալիս այդ դեպքում այն համարել ոչ թե բնական, այլ բնատնտեսական պարկ:

326. Բնական ջրերի որակ-**Կառուցածքային ջր-Natural water quality**-հմելու, արդյունաբերության և գյուղատնտեսության համար օգտագործվող ջրերի ֆիզիկաքիմիական ու կենսաբանական բնութագրերի համապատասխանության ասիդանց:

327. Բնական ռեսուրսներ (պաշարներ)-**Պրորուծածքային պաշարներ**-Բնական օրյեկտներ և երևոյթներ, ուղղակի կամ անուղղակի օգտագործման համար բնության բոլոր բարիքները, որոնց նպաստում են նյութական արժեքներ ստեղծելուն, աշխատանքային ռեսուրսները վերարտադրելուն, շրջակա միջավայրի պայմաններին աջակցելուն ու կյանքի որակը բարելավելուն: Քաղաքատնտեսական իմաստով՝ բնության մարմիններ և ուժեր (բնական բարիքներ), որոնց հասարակական օգտակարությունը՝ դրական կամ բացասական, փոփոխվում է մարդու աշխատանքային գործունեության հետևանքով: Օգտագործվում են (կամ օգտագործման համար պիտանի են) որպես աշխատանքի միջոցներ (հող, ջրային ուղիներ, ռոռոգման հողեր), ենթակայի աղբյուրներ (ջրաէներգիա, ատոմային վառելիք, այրվող հանածոների պաշարներ), հումք և նյութեր (միներալներ, անտառներ, տեխնիկական ջրի պաշարներ), աննիջապես սպառնան նպատակով օգտագործվող նյութեր (խմելու ջուր, վայրի հատապտուղներ, պտուղներ), ռեկրեացիա (բնության գրկում հանգստի վայրեր), ծագումաբանական պահեստապաշարի բանկ (գոյահանակարգի հուսալիության ռեսուրսներ, նոր սորտերի ու տեսակների ստեղծում) կամ շրջապատող աշխարհի մասին տեղեկությունների աղբյուրներ (դեկավարող հնեաբանական ձևեր, կենսանշանացույցներ): Լինում են ներուժային, անփոխարինելի, փոխհատուցվող, վերականգնվող, չվերականգնվող, բուսական, կենդանական, հողային:

328. Բնական ռեսուրսների (պաշարների) անվճար օգտագործում-**Ենուանություն ու օգտագործում ռեսուրսների պահպան**-Բնական ռեսուրսի օգտագործումից դուրսքերում կամ արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ ժամանակավոր օգտագործում՝ առանց տնտեսական շահագործման համար պարզ վճարելու:

329. Բնական ռեսուրսների (պաշարների) աշխարհագրություն-**Գեոգրաֆայի պրորուծածքային պահպան**-Natural resources geography-Աշխարհագրության բաժին, որն ուսումնասիրում է բնական ռեսուրսների առանձին տեսակների ու գուգակցությունների տեղաբաշխումը, դրանց գնահատման, համալիր օգտագործման ու վերարտադրման խնդիրները:

330. Բնական ռեսուրսների (պաշարների) լրացում-**Եօսոլուհես պրորուծածքային պահպան**-Fill up the natural resources-Երկրաբանահետախուզական և այլ որոնողական ու հետազոտական աշխատանքների ընթացքում բնական նոր պաշարների և

աղբյուրների հայտնաբերումը:

331. Բնական ռեսուրսների (պաշարների)կադաստր-**Կալաստր որոշման քանակական ու որակական վիճակի, դրանց գոյապահպանական և տնտեսական գնահատման մասին տեղեկությունների ամբողջությունը: Գոյություն ունեն հողային, ջրային, անտառային, ընդերքի, կենդանական աշխարհի և այլ կադաստրներ:**

332. Բնական ռեսուրսների (պաշարների) կադաստրային գնահատում-**Կալաստրովայ օւղեկա որոշման քանակական ու որակական վիճակի, դրանց գոյապահպանական և տնտեսական գնահատման մասին տեղեկությունների ամբողջությունը: Կարող է օգտագործվել հեռանկարային պահանանտեսական հաշվարկները և երկրի գումարային ազգային հարստությունը ծցտելու համար:**

333. Բնական ռեսուրսների (պաշարների) հաշվառում-**Կամ ետք առաջարկությունը պահանանտեսական ռեսուրսների քանակի և որակի բացահայտումը: Ուսուրաները կարող են գույքագրվել որևէ դասակարգմանը (ենթգետիկ, նավթի և այլ պաշարներ), բնական շտենարանների ծավալներով (ծովի, անուշահամ ջրերի պաշարներ և այլն) և միասնական հաշվի առնելով մեկ տեսակի ռեսուրսի ազդեցությունը ուրիշների վրա (օր.՝ անտառի ազդեցությունը ջրային պաշարների վրա):**

334. Բնական ռեսուրսների (պաշարների) սահմանափակության օրենք-**Զաkon օրգանականության որոշումին պահանանտեսական ռեսուրսները և պայմանները սպառվող են: Մեր նոյորակը սահմանափակ ամբողջություն է և չի կարող ունենալ անսահմանափակ մասեր: Ցանկացած անսպառ կոչված ռեսուրսը հարաբերական ինաստ ունի:**

335. Բնական ռեսուրսների (պաշարների) սոցիալ-տնտեսական գնահատում-**Հասարակական օւղեկա որոշման քանակական արտադրության մեջ բնական ռեսուրսների օգտագործման սոցիալ-տնտեսական արդյունավետության որոշումը:**

336. Բնական ռեսուրսների (պաշարների) սպառում-**Առողջություն որոշման քանակական համակարգերից դրանց հանելու անվտանգ չափորոշիչների և հասարակության կարիքների միջև անհամապատասխանությունը, բնության արգասավորության և վերականգնման հատկության խախտումը (վերականգնվող ռեսուրսների արդյունահանման տեսքերն ու ծավալը բնական վերականգնման տեմպերի ու ծավալի համեմատությամբ ավելացնելիս: չափից ավելի հատում, որսում և այլն):**

337. Բնական ռեսուրսների (պաշարների) վերականգնում-**Եղանակ որոշման պահանջման համապատասխան ռեսուրսների ակտիվ շրջապատճենի շնորհիվ ռեսուրսների (օր.՝ բուսական ծածկույթի, անուշահամ ջրերի և այլն) վերականգնում: Հաջողությամբ տեղի է ունենում այնպիսի պայմաններում, եթե մարդու կողմից ռեսուրսների օգտագործման արագությունը չի գերազանցում դրանց բնական վերականգնման ունակությունը: 2. Հարաբերականորեն նախկին քանակով բնական ռեսուրսներ ստանալուն ուղղված համալիր միջոցառումներ: Իրագործվում է այդ ռեսուրսների լրիվ կամ մասնակի սպառումից հետո (օր.՝ անտառների վերականգնում):**

338. Բնական ռեսուրսների (պաշարների) վերարտադրություն-**Վետրական պահանջման համապատասխան ռեսուրսների արտադրության հատուկ ոլորտ, որը կազմված է մի շարք տնտեսական ճյուղերից և ուղղված է բնական պաշարների ընդլայնված ստացմանն ու ապահովմանը կամ թիզ շատ նախկին քանակով ու որակով պահպանմանը՝ բնական գործընթացների գիտականո-**

የኔ ከዚህዋቁጥር ስለሚከተሉት የዚህዋቁጥር በመስጠት እንደሆነ የሚያስፈልግ ይገልጻል፡፡

340. Բնական ռեսուրսների (պաշարների) տնտեսագիտական գնահատում-  
Экономическая оценка природных ресурсов-Natural resources economic estimation-Բնական ռեսուրսի տնտեսագիտական արժեքավորության որոշումը՝ հաշվի առ-  
ելով դրա շահագործման տնտեսական հետևանքները և գոյապահպանական փո-  
փոխությունների շղթայում հետազ կորուստներն ու շահումները:

341. Բնական ռեսուրսների (պաշարների) տնտեսական գնահատում-Хозяйственная оценка природных ресурсов-Natural resources economy estimation-Բնական ռեսուրսների ծյուղային արժեքի որոշում՝ առանց հաշվի առնելու հասարակական արտադրության մեջ գնահատվողի և այլ ռեսուրսների փոխհարաբերությունը:

342. Բնական ռեսուրսների (պաշարների) ուժասպառություն-Օբյեկտավահանք բրոդիկա թեավում նաև հարստացնան ու վերամշակման) ծախսերը մոտենում են վերջնական նյութի ստացնան գնին: Այդ դեպքում դրա օգտագործումը սոցիալապես և տնտեսապես դաշնում է անշահութաբեր:

344. Բնական տարածասահման-Եռութեանի առաջ-Natural area-Սարդկարգության գործունեությամբ չփոփոխված (ընդարձակված, նեղացած և այլն) տարածասահման:

**345. Բնական տարածքային համալիր-Պրոբուզական տերրիտորիական կոմպլեքս-Natural territorial complex-**Աշխարհագրական համալիր, Երկրահանալիր: Բարդ փոխազդեցության մեջ գտնվող և տարբեր մակարդակների (սկսած աշխարհագրական թաղանթից մինչև ֆացիան) միասնական հանակարգ առաջացնող աշխարհագրական բաղադրամասերի օրինաչափ գուգակցում: Ֆիզիկական աշխարհագրության հիմնական հասկացությունն է: Բնական տարածքային համալիրը սովորաբար ընդգրկում է Երկրակեղեկի մի հատված, որն ունի բնորոշ ռելիեֆ, մընոլորտի Երկրամերձ շերտ, մակերևության ու ստորգետնյա ջրեր, հողեր, համակեցություններ և այլն: Առանձին բնական տարածքային համալիրների ու դրանց բաղադրամասերի միջև կատարվում է նյութափոխանակություն և եներգափոխանակություն:

346. Բնական օբյեկտների արտանեսագիտական գնահատում-  
Внекономическая оценка природных объектов-Out economic estimation of nat-  
ural objects-Օբյեկտի տնտեսական ցուցանիշներով չարտահայտվող, սոցիալ-հոգե-

բանական (բարոյական ու մշակութային), հավատքապաշտամունքային և այլ արժեքների սահմանում:

347. Բնական օբյեկտների տնտեսագիտական գնահատում-**Экономическая оценка природных объектов-Economic estimation of natural objects**-Օբյեկտի դրամական կամ ապրանքային արժեքի որոշումը բացարձակ կամ հարաբերական ցուցանիշներով (դրամական կամ բալային միավորներով):

348. Բնակատեղ-**Местообитание-Site**-Ցամաքային կամ ջրային տարածքի հատված, որը զբաղեցված է որոշակի օրգանիզմով, մի տեսակի առանձնյակների խմբով, կենսահամակեցությունով կամ սինուլիայով և ունի դրանց գոյությանն անհրաժեշտ բոլոր պայմանները (վլխնա, ռելիեֆ, հողեր և այլն):

349. Բնակարանների օդ-**Воздух** ուսումնական-**Room's air**-Պատերով և պատուհաններով մասսամբ զտված մբնոլորտի տաք կամ սառն օդը: Չափ է ածխաթրու գազը, և քիչ է թթվածինը, սովորաբար բարձր է ինքնաճառագայթումը (հատկապես որոշ տեսակի բետոնից և սիլիկատային սալիկներից կառուցված շենքերում):

350. Բնակչության շարժընթաց-**Динамика населения-Dynamics of population**:

1. Բնակչության տեղաշարժի (այդ թվում՝ ժամանակի և տարածության մեջ) տարբեր ծեները: 2. Փոփոխություններ կենսաբանական համակեցությունների կազմում և կառուցվածքում՝ կապված ժամանակի ընթացքում տարբեր տեսակների առանձնյակների քանակի կամ աստիճանի ավելացման կամ պակասեցման հետ:

351. Բնակչության վերարտադրություն-**Воспроизведение населения-Restoration of population**-Ցամաքական արտադրության հատուկ ծեռություն կազմված արտադրական և ոչ արտադրական տնտեսական ծյուղերից, միջոցառումներից (սոցիալական ապահովում և այլն), ծառայություններից (հանգիստ, այլ ծառայությունների ոլորտ), որն ապահովում է մարդկային սերունդների պլանաչափ փոփոխումը, մարդկանց առողջության պահպանումը և բարելավումը, նրանց կրթական ու մշակութային, ինչպես նաև մարդու այլ պահանջմունքների մակարդակի բարձրացումը: Դրանք ել վերջին հաշվով բարձրացնում են աշխատանքի արտադրողականությունը և մեծացնում ազգային հարստությունը: Մարդկության վերարտադրությունն անմիջականորեն կապված է բնօգտագործման ու բնության պահպանության հետ:

352. Բնակության միջավայր-**Среда обитания-Habitat**-Որոշակի կենսածին և ոչ կենսածին պայմանների ամրողությամբ տարածք, որտեղ բնակվում են առանձնյակը, տեղախումբը կամ տեսակը:

353. Բնակության պայմաններ-**Условия обитания-Habitat conditions**-Կենդանի օրգանիզմի ապրելու բնական յուրահատկությունների ամրողությունը (ընդգրկում է ոչ կենսածին և կենսածին գործոնները):

354. Բնամարդածին գործելակարգ-**Режим природоохранного-Nature anthropogenic balance**-Երկրորդային գոյապահպանական հավասարակշռություն, որը ձևավորվում է մարդու գործունեությանը փոփոխված միջավայրաստեղծ հաղարանասերի և բնական գործընթացների հիման վրա: Կարող է լինել տարբեր մակարդակների՝ սկսած համակեցությունների հնարավոր վերականգնումից մինչև տարածքի կայուն անապատացումը:

355. Բնամարդածին հավասարակշռություն-**Природоохранное равновесие-Nature-anthropogenic balance**-Երկրորդային գոյապահպանական հավասարակշռություն, որը ձևավորվում է մարդու գործունեությանը փոփոխված միջավայրաստեղծ հաղարանասերի և բնական գործընթացների հիման վրա: Կարող է լինել տարբեր մակարդակների՝ սկսած համակեցությունների հնարավոր վերականգնումից մինչև տարածքի կայուն անապատացումը:

356. Բնապահպանական ազդ-**Природоохранный аншлаг-Nature protection bold out**-Բնավոր կամ գրավոր հայտարարություն (վերջին դեպքում, որպես կանոն).

գեղարվեստորեն ծևավորված), որը կոչ է անում խնամքով վերաբերվել բնությանը կամ ծանուցում է բնօգտագործման որոշ տեսակների (որսորդություն, այցելություն արգելավայրեր և այլն) սահմանափակման կամ արգելման մասին:

357. **Բնապահպանական աշխարհայացք-Պրիրօճօքքառիօք միրօզրենություն**-**Vision of conservation**-Ազգբունքների, հայացքների և համոզմունքների անբողջությունը, որը որոշում է առանձին նարդու, ամբողջ հասարակութան վերաբերմունքը բնության հիմնահարցերի նկատմամբ:

358. **Բնապահպանական լուսավորություն-Պրիրօճօքքառիօք որոշակացնություն**-**Nature protection education**-Մարդկության ժամանակակից և ապագա սերունդների կարիքների համար հասարակության դաստիարակումը և կրթումը երկրագոնի ու տիեզերքի բնական հարստությունների նկատմամբ հոգատար վերաբերմունքի ոգով:

359. **Բնապատմական օրենք-Եպություն-Կառուցական օրենք-Naturally-historical law**-Առարկաների և երևույթների անհրաժեշտ զարգացումը (դրանց կարևորագույն գծերն ու միտումները) պայմանավորող ներքին կայուն կապ:

360. **Բնաշնչում-Դեվաստացա-Devastation**-Մարդու, կենդանիների և բույսերի համաճարակային ու զանգվածային հիվանդությունների հարուցիչների ոչնչացման համալիր միջոցառումներ:

361. **Բնավայր-Սրութիւն-Uroshlischesche, Stow-1.** Ֆիզիկաաշխարհագրական շրջանացման ստորին կարգի միավորներից մեկը, աշխարհագրական լանդշաֆտի ծևաբանական մաս (օր. մորենային բլուր, աղուտային իջվածք և այլն): Ստորաբաժանվում է բավականին միատեսակ հիմնամյութ, խոնավություն և հողարուսածածկ ունեցող ֆացիաների: 2. Լայն ինաստով՝ շրջապատից տարբերվող տեղանքի ցանկացած մաս:

362. **Բնատնտեսական համալիր-Պրիրօճօքզայնտենինի կոմպլեք-****Environmental-economy complex**-Համապատասխան տարածաշրջանի բնատնտեսական օրյեկտների ամբողջությունը:

363. **Բնատնտեսական օրյեկտ-Պրիրօճօքզայնտենինի օբյեկտ-Environmental-economy object**-Հասարակության տնտեսական և մշակութառողջապահական կարիքների բավարարման համար նախատեսված բնական օրյեկտ: Ըստ տնտեսական ռեսուրսային նախատեսվածության ստորաբաժանվում է առանձին հիմնապաշարների: Այսպես հայտնի են հողային, ջրային, անտառային, ընդերքի հիմնապաշարներ:

364. **Բնիկ-Ածօրուց-Aborigen-Որևէ տեղանքում շատ վաղուց ապրող հիմնական օրգանիզմ, բնակիչ:**

365. **Բնություն տեսակ-Կարգություն ամպ-Characteristic species**-Որոշակի բուսական զուգակցությունում բացարձակապես կամ առավելապես հանդիպող բուսատեսակ:

366. **Բնության անշրջելի փոփոխություն-Необратимые изменения природы**-**Inevitable changes of nature**-Բնության փոփոխություններ, որոնք ժամանակի ընթացքում չեն փոխհատուցվում: Կարող է առաջանալ նաև մարդու ազդեցությամբ:

367. «**Բնության համաշխարհային խարտիա»»-«**Всемирная карта природы**»-«**The World Charter of Nature**»-ԱԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1982-ին ընդունած փաստաթուղթ, ըստ որի՝ հիմնական բնական գործընթացները (նյութերի համընդիանութ շրջապատույտ և այլն) պետք է պահպանվեն համեմատաբար անփոփոխ մակարդակի վրա, իսկ կյանքի բոլոր ձևերի համար պետք է ապահովի գոյության հնարավորություն:**

368. **Բնության հուշարձան-Պահպան պրիրօճօք-Natural monument**-Բնական առանձին օրյեկտ, որն իր գիտական, ուսումնալուսավորական, պատմահուշային

կամ մշակութագեղադիտական նշանակության շնորհիվ պահպանվում է կամ արժանի է պահպանման: Բնական հուշարձանի օրինակներ են ջրվեժը, քարանձավը, ժայռը, երկրաբանական եզակի բացվածքը, արժանահիշատակ ծառը և այլն: Ավելի լայն հնաստով՝ բնության հուշարձաններ են համարվում նաև ցամաքային և ջրային տարրածքների տեսարժան հատվածները (պահպանվող բնատարածքներ), օրինակ երկնաքարային խառնարան, հազվագյուտ ծառերի պուրակ, հովտի և առափի հատված, լիճ, ջուրածոց և այլն: Բնության հուշարձանների մեծ մասի համար հաստատվում է արգելոցային, ավելի արժեքավորների համար՝ արգելավայրային գործելակարգ:

369. Բնության մարդածին փոփոխություններ-**Անտրոպոգեններ**՝ Անտրոպոգեններ պրիրածական մեջ տեղի ունեցող փոփոխությունները:

370. Բնության շրջելի փոփոխություններ-**Օբրատման պահումներ**՝ Ռեվերսիլ փոփոխություններ: Բնության շրջելի փոփոխությունները կարաքերական հասկացություն է, որով հետև կազմում է էվոլյուցիոն անշրջելի գործընթացների մի մասը:

371. Բնության պահպանության միջազգային միություն-**Մաշտական պահպանի միջազգային միություն**-**Մաշտական պահպանի միջազգային միություն** (IUCN)-**Միջազգային կառավարական կազմակերպություն**: Կատարում է բնության պահպանության ու բնական ռեսուրսների հաշվեմկատ օգտագործման հետազոտություններ ու քարոզչություն: Մտնելով է 1948-ին:

372. Բնության պահպանություն-**Օքրանա պրիրածական պահպան** (դրա առանձին մասերի՝ բնական լանդշաֆտների և մարդածին լանդշաֆտների բնական բաղադրամասերի) ռեսուրսավերարտադրող և միջավայրավերարտադրող գործառույթների պահպանության հնարավորության, ինչպես նաև չվերականգնվող պաշարների պահպանություն ապահովող միջոցառումների համակարգի (տեխնոլոգիական, տնտեսական, վարչական վարչական, կենսատեխնիկական, լուսավորական և քարոզչական) ընդհանուր անվանումը: Դասկացության ինաստը պատմականորեն փոփոխվել է: Ժամանակակից հասկացողությամբ՝ բնության պահպանումն ընդգրկում է բնական ռեսուրսների նպատակահարմար, խնայողական օգտագործումը, շրջակա միջավայրի, ծագումնաֆոննի, ինչպես նաև բնական բազմազանության պահպանումը:

373. Բնության պաշտպանություն-**Կոնսերվացիա պրիրածական պահպան**՝ Անգլերենում ընդունված տերմին, որը համապատասխանում է «բնության պասսիվ պահպանություն» հասկացությանը:

374. Բնության վերափոխում-**Պրեօբրազում** պրիրածական պահպանական արդյունավետությունը կամ բնական համակարների տնտեսական արտադրողականությունն ավելացնելու նպատակով բնական միջավայրի և ծևավորված գոյապահպանական հավասարակշռության բաղադրամասերի հարաբերակցության արհետական փոփոխում: Կարող է նպատակառուղիված լինել նոր տարածքների տնտեսական յուրացմանը, գոյահամակարգերի կամ ազրոհամակարգերի կորսված օգտակար հատկանիշների վերականգնմանը: Սերտորեն կապված է բնության պահպանության հետ:

375. Բնության քրոնիկոն-**Լետոռուս** պրիրածական համակարգերի գնահատման նպատակով կազմվող գոյահամակարգերի ու դրանց բաղադրիչների վիճակի և փոփոխությունների ամենամյա տվյալների ամփոփագիր:

376. Բնություն-**Պրիրածական**-1. Մարդկությանը շրջապատող նյութական աշ-

խարիծ ծևերի ողջ բազմազանությամբ: 2. Մարդկային հասարակության գոյության բնական պայմանների և ստեղծված նյութական արժեքների ամբողջությունը: Տես նաև Շրջակա միջավայր:

377. Բնօգտագործման էներգետիկ արդյունավետության նվազման օրենք-*Закон снижения энергетической эффективности природопользования-Law of energy efficiency reduction of nature use-* Բնական համակարգերից ստացված օգտակար արտադրանքի միավորի վրա ժամանակի ընթացքում ծախսվում է ավելի շատ էներգիա:

378. Բնօգտագործման լարվածություն-*Интенсивность природопользования-Environmental management rate*-Հասարակության համար բնական ռեսուրսների շահագործման արդյունավետության աստիճանը: Արտաքին դրսւորումն է գյուղական և քաղաքային համակարգերում բնական գոյահամակարգերի վերափոխման թափը կամ բնական գոյահամակարգերի ամբողջ պաշարից կորզող օգտակար արտադրանքի բաժնը: Կարող է որոշվել նաև բնական ռեսուրսների վերարտադրման մեջ կատարվող կապիտալ ներդրումներով:

379. Բնօգտագործման կրոստի փոխհատուցում-*Возмещение ущерба в природопользовании-Compensation of damage in environmental management*-1. Սեկ բնօգտագործողի լրացուցիչ ծախսների փոխհատուցումը նյութ բնօգտագործողի կողմից: Կորուստը (վնասը) առաջանում է բնական ռեսուրսների կամ տեխնոլոգիական գործնքացների փոփոխման ու որակի վատրարացման հետևանքով: 2. Ֆիզիկական անձանց վնասների (առաջանում են շրջակա միջավայրի աղտոտման կամ դրա այլ անբարենպաստ փոփոխությունների հետևանքով) փոխհատուցում: Իրագործվում է վնաս պատճառողների՝ իրավաբանական անձանց (ծեռնարկություններ) կամ առանձին քաղաքացիների միջոցներով:

380. Բնօգտագործման հաստատագրում-*Лицензирование природопользования-Environmental management license*-Բնօգտագործման իրավական փաստաթուրերի մշակումը, ծևավորումը և իրագործման հսկողությունը:

381. Բնօգտագործում-*Природопользование-Environmental management*-Հասարակական-արտադրական գործունեության ոլորտ, որն ուղղված է ներկա և ապագա սերունդների պահանջմունքները բավարարելուն, շրջապատող բնական միջավայրի, բնական ռեսուրսների օգտագործման որակի բարելավմանը: Տնտեսության մի ճյուղի շահերի համար օգտակար հատկությունների կորզումը բերում է այլ հատկությունների «օգտակարության» աստիճանի փոփոխման: Օրինակ՝ անտառատումները կարող են հանգեցնել տարավացման ուժեղացմանը, լանջափառ ջրային գործելակարգի փոփոխմանը, ջրամբարների աղտոտվածության մեծացմանը և այլն:

382. Բոլիտետ-*Бонитет-Quality*-տես Որակում:

383. Բուժահարմարում-*Натурализация-Naturalization*-Կլիմայավարժեցված տեսակի ամրացումը նոր վայրում. նախկինում օտար գոյապահպանական խորչում վերջնական տեղ գրավելը:

384. Բույսերի գոյապահպանություն-*Экология растений-Plant ecology, Phytoecology*-Գոյապահպանության բաժին, որն ուսումնասիրում է բուսական օրգանիզմների, համակեցությունների ու դրանց գոյության միջավայրի միջև փոխադարձ կախվածությունը և փոխազդեցությունը:

385. Բույսերի խոնավապահովվածություն-*Благосостоянность растений-Plant water provided*-Հողում եղած արդյունավետ խոնավության պաշարի հարաբերակցությունը մշակաբույսերի զարգացման տվյալ փուլի համար խոնավության ամենաբարենպաստ պաշարին:

**386. Բույսերի ներմուծում-Հայոց բազմական բազմագույն պայմաններ ունեցող երկրներից բույսերի ներմուծում և բազմացում:**

**387. Բույսերի պաշտպանություն-Յապատճենագործություն-Plant conservation-Սահմանական մշակովի հողի հանդական բազմագույն պայմանների դեմ պայքարի ազդութեխնիկական, կենսաբանական, մեխանիկական, քիմիական և այլ միջոցառումներ:**

**388. Բույսերի վնասատու-Երանությունը բարձր է կենդանիների, բույսերի, սմկերի և միկրոօրգանիզմների այնպիսի տեսակների համար, որոնք առաջացնում են բույսերի կենսագործունեության տնտեսական կամ գոյապահպանական նշանակալի խախտումներ: Այն տեսակները, որոնք պատճառում են աննշան վնասվածքներ, չեն առաջացնում տնտեսական կորուստներ և առնչվում են ոչ մեծ թվով բույսերի, վնասատուներ չեն համարվում: Բույսերի վնասատուներ չեն համարվում նաև այն տեսակները, որոնց արժեքավորությունը բարձր է իրենց օգտագործած բուսական կերի արժեքից:**

**389. Բուսաբենքու-Փիտոբենիոս-Զրամբարների հատակում ապրող բուսական օրգանիզմների (գլխավորապես ջրիմուներ, որոշ ծաղկավորներ և այլն) ամբողջությունը:**

**390. Բուսագանգված-Փիտոմաս-Phytomass-Բուսահամակեցության բոլոր բուսական օրգանիզմների, դրանց խմբերի կամ առանձին բույսերի ընդհանուր զանգվածը: Չափվում է նույն միավորներով, ինչ կենսագանգվածը:**

**391. Բուսածածկ-Բառությունը ու ուռությունը-Plant cover, Vegetation cover-ու բուսականություն:**

**392. Բուսական գուգակցություն-Բառությունը ասոցիացիա-Plant association-1. Տարածաշրջանում գոյության նույն պայմաններ ունեցող բուսականություն, որը միատարր է տեսակային կազմով, կենսածերի հարաբերության արդյունավետությամբ, նյութերի շրջանառության ու զարգացման միտումներով: 2. Միատիպ համակարգեր ներկայացնող բուսահամակեցությունների միավորում: Այն հիմնական միավոր է, ունի որոշակի արտաքին տեսք և բնորոշվում է համակեցությունում համապատկեր ստեղծող տեսակով:**

**393. Բուսական գուգակցությունների համալիր- Կոմպլեքս բառությունների համականական ասոցիացիա-Plant community complex, Plant association complex-Միկրոռելիչեֆի, հողածածկի և այլ յուրահատկություններով պայմանավորված տարածքում իրար փոխարինող տարրեր գուգակցությունների ամբողջությունը (օր: գուգակցությունների համալիրներ կիսաանապատում, տունդրայի շատ տիպերում և այլն):**

**394. Բուսական համակեցություն-Բառությունը ասոցիացիա-Plant community-Որոշակի տարածքում բույսերի պատմականորեն ձևավորված գուգակցում: Ունի որոշակի տեսակային կազմ, կառուցվածք և ածելավայր, ստեղծում է իր բուսամիջավայրը: Բնույթը կարող է փոփոխվել՝ ըստ տարվա եղանակների: Արտաքին փոփոխված պայմանների հետևանքով համակեցությունը կարող է անհետանալ և փոխարինվել նորով: Դամակեցության տեսակների միջև գոյություն ունի մշտական պայքար: Ըստ իրենց ծագման՝ համակեցությունները լինում են բնական կամ մարդածին: Տարբերում են բաց, փակ և կայուն բուսական համակեցություններ:**

**395. Բուսական տատանում-Բառությունը ասոցիացիա-Vegetational fluctuation-Բուսահամակեցության տարրեր տարիների փոփոխությունները՝ պայմանավորված այդ տարիների ընթացքում շրջակա միջավայրի փոփոխություններով: Բնորոշվում է չուղղորդվածությամբ, հետղարձությամբ և բուսական կազմի հարաբերական**

կայունությամբ:

396. Բուսականության հերթափոխ-Ընթացքը-**Բուսականության փոփոխումը զարգացնան ընթացքը:** Տես նաև Սուլըցիսիա:

397. Բուսականության սեզոնային տեսույթներ-**Հաջողականություն**-**Առանձին բուսատեսակների զարգացման փուլերի հերթափոխով և հատկապես այս կամ այն բույսի զանգվածային ծաղկմանը բնութագրվող բուսական համակեցության արտաքին տեսքը ու, դրանով պայմանավորված, բուսածածկույթի բնորոշ գույնը:**

398. Բուսականության տիպ-**Տիպ բարձրավագականություն**-**Type of vegetation**-**Բուսածածկի կարգաբանական կատեգորիա**, որը կազմավորում է միջավայրի պայմանների հետ: Ստեղծվում է նույն գոյաբանաձևաբանականին բնորոշ տիրապետող տեսակներով (օր. տափաստան, մարգագետին և այլն): Ըստ տարբեր հեղինակների բուսականության տիպերի թիվը 4-ից 22 է:

399. Բուսականության ուղղաձիգ գոտիականություն-**Վերտիկալիական զոնալություն**-**Altitudinal zonality of vegetation**-**Բուսական գոտիների հերթափոխ**, որը կապված է կլիմայի և հողերի փոփոխության հետ՝ պայմանավորված ծովի մակարդակից ունեցած բարձրությամբ: ՀՀ-ում, օրինակ, ըստ բարձրության կիսաանապատային բուսականությունը հաջորդաբար հերթափոխվում է տափաստանային, անտառային, մերձալայան և ալպյան մարգագետինների գոտիներով:

400. Բուսականություն-**Բարձրավագություն**-**Vegetation**-**Երկրագնդի կամ առանձին տարածաշրջանների բուսական համակեցությունների ամբողջությունը:** Կենսուլորտի կարևոր բաղադրամասն է, որն անընդհատ փոխադրվությամբ սերտորեն կապված է շրջակա միջավայրի հետ: Դիմունականում գոտիական բնույթ ունի և կապված է արևային ճառագայթման ու մթնոլորտային տեղումների հետ: Կարևոր ունի բնության մեջ նյութերի շրջապատճենում, եներգիայի վերափոխման ու օրգանական նյութերի սկզբնական սինթեզում:

401. Բուսակեր-**Փյուֆագ-Phytophage**-Կենդանիներ, որոնք սնվում են միայն բուսական կերով: Օրինակ՝ կարնասուններից՝ բոլոր կծղակավորները, միջատներից՝ մորեխները:

402. Բուսակլիմա-**Փյուոկլիմա-Phytoclimate**-**Օդերևութաբանական** (միկրոկլիմայական) պայմանները բույսերի գոյամիջավայրում (օր. խոտածածկում, ծառերի սաղարթում):

403. Բուսակյաց-**Էռոժություն-Eriphyte**-**Բուսական օրգանիզմներ**, որոնք ապրում են ուրիշ բույսերի վրա և սննդանյութերը ստանում են շրջապատող միջավայրից: Մակարույններ չեն: Հատկապես լայնորեն տարածված են խոնավ արևադարձային անտառներում (խոլորձներ, պտերանմաններ):

404. Բուսահամակեցություն-**Փյուուզոզ-Phytocoenosis**-**Կենսահամակեցության մաս**, բույսերի միագումարություն, որն զբաղեցնում է երկրի մակերևույթի միատարր հատված, բնորոշվում է որոշակի կազմով, կառուցվածքով, դասավորությամբ և ինչպես միմյանց, այնպես էլ շրջակա միջավայրի հետ բույսերի փոխկապակցվածությամբ:

405. Բուսահամակեցությունների շարժընթաց-**Համակական փյուուզոզականություն**-**Dynamics of phytocoenoses**-**Համակեցությունների փոփոխությունների տարբեր տեսակներ**: Տարբերում են սեզոնային և կլիմայական փոփոխություններ, համակեցության հերթափոխմանը և այլն:

406. Բուսաշխարհ-**Փլորա-Flora**-Որևէ տեղանքին, երկրին կամ երկրաբանական ժամանակաշրջանի որոշակի հատվածին բնորոշ բուսատեսակների (կամ դասա-

կարգման այլ կարգաբանությունների) ամբողջությունը: Տերմինն օգտագործվում է նաև որևէ կարգաբանության համար. օրինակ՝ ջրիմունքների բուսաշխարհ:

407. Բուսապահնետուն-Փիտոլանկտոն-*Phytolankton*-Պլանկտոնի նասը կազմող բուսական օրգանիզմների ամբողջությունը: Թթվածնի և օրգանական նյութերի աղբյուր է ջրային այլ օրգանիզմների համար:

408. Բուսասպան-Փիտոնցիդ-Սանրեների, սնկերի, պարզագույն օրգանիզմների և մանր միջատների անց ճնշող կամ սպանիչ ներգործող պաշտպանական բունավոր, ցնող նյութերի ոչ մեծ չափաքանակներ առաջացնելու բույսերի հատկությունը (ընկույզնի, դափնի, բժիշկի, ցախակեռաս և այլն):

409. Բուսահողաբնակ-Փիտօձաֆոն-*Phytoedaphon*-Հողային բուսական միկրոօրգանիզմների (սնկեր, ջրիմունքներ և այլն) ամբողջությունը:

410. Բուսոլիորս-Փիտոսֆերա-*Phytosphere*-Երկրագնդի մինչև 150մ խորությամբ շերտ, որտեղ միջավայրի պամանները հիմնականում որոշվում են բուսականությամբ:

411. Բուրաստան-Դյաստոմ սադ-Fragrant garden-Պարտեզ, որտեղ գերակշռում են բուրումնավետ և ախորժաբույր բույսերը:

412. Բուք-Մետուль, Վյուգա-Snow-storm-Հնախառն քամի ներքնոլորտի գետնամերձ շերտում: Առաջանում է ուժեղ քամու և բացասական ջերմաստիճանի պայմաններում: Փակում է ճանապարհները, ցրտահարում աշնանացան նշակաբույսերը:

#### Գ

413. Գազադիմացկուն բույս-*Газоустойчивое растение*-Gas-resistant plant-Բույս, որը դիմանում է արդյունաբերական օբյեկտների և ավտոտրամապորտի արտանետումներում եղած բունավոր գազերի մեջ քանակին:

414. Գազազտում-Կազօօչստիկ-*Gasdecontamination*-Արյունաբերական գազերի վնասակար խառնուրդների տեխնիկական և կենսաբանական գոտում:

415. Գազակայունություն-*Газоустойчивость*-Gas resistance-Մթնոլորտի վնասակար գազերի մեջ խտություններին դիմանալու օրգանիզմների և դրանց համակեցությունների հատկությունը:

416. Գազային հաշվեկշիռ-*Газовый баланс*-Gas balance-Սիջավայր (մքնոլորտ, ջուր, հող) մտնող և այնտեղից հեռացող գազերի հարաբերակցությունը:

417. Գազատար-*Газопровод-Main gas-line*-Կազառական այրվող գազը ստացման կամ արտադրման վայրից օգտագործման վայրերը տեղափոխելու համար: Գազատարների երկարությունը ամբողջ աշխարհում գերազանցում է 900000 կմ-ը:

418. Գազուվածություն-*Загазованность*-Gas content-Վնասակար գազաննանցությունը որոշակի խտության առկայությունն օղում: Կարող է աղետալի հետևանքներ ունենալ:

419. Գաղր-*Миграция*-Migration-տե՛ս Քոչ:

420. Գաճաճառելիք-*Nanorelief*-Ուլիկեֆի մանր ձևեր (մինչև մի քանի տասնյակ սմ բարձրությամբ), որոնք առաջանում են սիֆուզիոն-կարստային, ջերմակարստային, հավերժական սառուցի տարալվացման, էլային և հողառաջացման գործնքացների, ինչպես նաև կենդանիների (ընտանի, հողափոր կրծողներ) և մարդու կենսագործունեության հետևանքով:

421. Գաճաճառիաներույս-*Nanophanerophyte*-Սանր թփեր:

422. Գաճաճ ձև-*Карликовая форма*-Dwarf form, Dwarfish form-Ցածրահասակ բուսական օրգանիզմ, որը սովորաբար զարգանում է շրջակա միջավայրի անբարեն-

պաստ պայմանների դեպքում:

423. Գարնանային հորդացում-**Վեշնոս ոլովօծ**-Spring flood, Flood caused by snowmelt, Freshet-Գետի ջրային ռեժիմի փուլ, որը հարթավայրային գետերում բնութագրվում է ջրի մեծ ու երկարատև բարձրացմամբ՝ պայմանավորված ծյան գարնանային հալոցքով:

424. Գեղագարդիչ բույս-**Դեկօրատիվիօթ բաշենութեան բույս**-Decorative plant-Հատուկ տնկարաններում, ջերմոցներում, ծաղկատնտեսություններում կանաչապատման համար աճեցվող ծառեր, թփեր, խոտեր: Աչքի են ընկնում ուրվագծի բարեկազմությամբ, սաղարթի գեղատեսիլությամբ, ծաղիկների առատությամբ, ծաղկման երկարատևությամբ, քաղաքային միջավայրի ազդեցության նկատմամբ կայունությամբ:

425. Գեն-**Գեն-Գեն**-Ռեզօքսիիրոններկեինաթթվի (ՂՆԹ) մոլեկուլներ, որոնք իրականացնում են օրգանիզմների կառուցվածքային ու գործառնական բոլոր հատկանիշների, հատկությունների ծևավորումը, կայուն կերպով դրանք փոխանցում են սերնդից սերումը: Ժառանգականության նյութական կրողներ են: Կարող է փոփոխվել մուտացիայի հետևանքով:

426. Գենագոյապահպանություն-**Գենէկոլոգի-Genecology**-Ներտեսակային խմբերն ու դրանց գենոֆոններ ուսումնասիրող կենսաբանության բաժին:

427. Գենոտիպ-**Գենոտոպ-Genotype**-Օրգանիզմի բոլոր ժառանգական մեխանիզմների, գործոնների ու հատկանիշների (ժառանգական հիմք), մուտացիայի դեպքում՝ նաև մուտանտ գենների աճրողությունը: Դրանով է պայմանավորված արտաքին միջավայրի տարրեր պայմաններում օրգանիզմի ցուցաբերած հակագրման չափը, հատկությունների ու հատկանիշների դրսնորումը:

428. Գենոֆոնդ-**Գենօֆոնդ-Genofund**-Կենդանի օրգանիզմների տեսակների աճրողությունը՝ իրենց ժառանգական տվյալներով: Յուրաքանչյուր տեսակի համար ենթադրաբար հավասար է  $10^{50}$  վերափոխությունների:

429. Գեորոտանիկ շերտ-**Գեօբոտանիկական շերտ-Geobotanic layer**-Մեկ բուսական գոյակենսածնով (ժառատեսակներով, թփերով, խոտերով) առաջացած և բուսառագաստների (տերևածածկի, բների) ու շարահարկերի (վերգետնյա, արմատային) մասնատվող ստվարաշերտ:

430. Գեորոտանիկ քարտեզ-**Գեօբոտանիկական քարտ-Geobotanic map**-Քարտեզ, որը պատկերում է բուսականության տիպարանական ստորաբաժանումների (զուգակցություն, զուգակցությունների խմբեր, կազմավորումներ) տարածումը, ինչպես նաև դրանց տարածական համակցությունները (համալիրներ, զուգություններ, շարքեր):

431. Գեոտոպ-**Geotop**-Երես Երկրատեղ:

432. Գետային տարալվացում-**Քռամա քրօմա-Stream erosion**-Հոսող ջրի լվացող գործունեությունը: Տարբերում են խորքային, կողային և հետօնթաց (հակադարձ) տարալվացում:

433. Գետավարարում-**Պոլովօծ**-High water-Ամեն տարի, սովորաբար նույն սեզոնին, ջրի համեմատաբար երկարատև և զգալի ավելացում գետում: Առաջանում է գետի մակարդակի բարձրացում: Սովորաբար ուղեկցվում է գետահունից ջրերի դրվագ զալով և ողողահունը ջրածածկերով: Գետավարարումն առաջանում է հարթավայրերում՝ ծյան գարնանային հալոցքով (գարնանային գետավարարում), լեռներում՝ ծյան և սառցի ամառային հալոցքով (ամառային գետավարարում), մուսսոնային կլիմայի շրջաններում՝ առավելագույն տեղումների սեզոնում:

434. Գետի ջրայնություն-**Ջունոսություն**-Discharge of stream-Ջրի քանակ, որ բերում են գետերը որևէ ժամանակահատվածի (տասնօրյակ, ամիս, սեզոն,

առանձին տարի կամ տարիների շարք) ընթացում՝ բազմամյա տարիների միջին քանակների համեմատությամբ:

**435. Գետի տեղափոխող հատկություն-Տրանսպորտարույուած ռոսօնիություն**-*Carrying capacity of river, Carrying power of river-Ռոռշակի քանակով կարծր բերուկներ (կախված և քաշվող) տեղափոխելու գետի հատկությունը:* Կախված է գետի ջրառատությունից և հոսանքի արագությունից: Օրինակ՝ Միսսիսիպի գետը օրական օվկիանոս է հասցնում 2 միլիոն տ բերուկներ:

**436. Գետնահողմ-Պոզեմոկ-Storm of drifting snow-Ձյան տեղումների բացակայության պայմաններում ծնածածկի մակերեսի ծյան տեղափոխումը քամու միջոցով:**

**437. Գետնատարած մառախուղու-Պոզեմոկ դուման-Ground fog-Մառախուղու,**որն առաջանում է երկրի մակերեսից մի քանի մ բարձրության վրա՝ գիշերային սառցման հետևանքով: Գետնատարած մառախուղու առաջացմանը նպաստում է ռելիեֆի բացասական ծերի (օր.՝ գետահովտներ, փոսորակներ), ճահիճների առկայությունը:

**438. Գերակա-Դոմինանտ-Dominant-Տեսակ, որը գերակշռում է տվյալ համակեցությունում կամ գոյապահպանական բուրգում (նույն մակարդակի ծերի համեմատությամբ):**

**439. Գերակայություն-Դոմինանտություն-Dominant-Դաշտակեցություններում գլխավոր դիրք գրավելու և ներքին գործընթացների, այդ բվում կենսամիջավայրի առաջացման վրա տիրապետող ազդեցություն ունենալու որոշ տեսակների ունակությունը:**

**440. Գերարածեցում-Աքսեմերին բարակացում-Overbrowsing, Overgrazing-Անասունների անվերահսկելի արածեցում, որը բերում է արոտավայրի բուսականության վատքարացմանը և արտադրողականության անկմանը: Չորային և մերձչորային գոտիներում ընտանի կենդանիների գլխաքանակի անվերահսկելի ավելացումը հանգեցնում է արոտավայրերի անապատացմանը:**

**441. Գերբնակեցվածություն-Պորոպուլացիա-Overpopulation-Գոյահանակարգի ժամանակավոր վիճակ, երբ մեկ կամ մի քանի տեսակներում առանձնյակների քանակը գերազանցում է այն մեծությունը, որը համապատասխանում է դրանց բնականոն գոյության պայմաններին, այդ բվում՝ առանձնյակների՝ միմյանց վրա փոխազդելու առավելացույն բույլատրելի սահմանին: Մարդկային հասարակության դեպքում իր մեջ, ֆիզիկականից բացի, ընդգրկում է նաև սոցիալ-տնտեսական և սոցիալ-հոգեբանական գործոնները:**

**442. Գերծխաճարակ-Հապերկալի-Hypercapny-Ձարկերակային արյան մեջ ածխաթթվի գերապարունակությամբ առաջացող բարձր ճնշում:** Առաջացնում է հիվանդագին վիճակ: Կարող է լինել նաև թքանյութերով քունավորման կամ այլ պատճառներով: Բերում է քնառության, սուր դեպքերում՝ մահվան: Լայնորեն տարածված է աղսոտված մթնոլորտ ունեցող քաղաքներում:

**443. Գերմակաբույժ-Հապերռազմ-Hyperparasite-Մակաբույժի վրա մակարուծվող օրգանիզմ:**

**444. Գերսառած ջուր-Պերօռլաքսենայա ջուր-Supercooled water-0° C-ից ցածր ջերմաստիճանում հեղուկ վիճակում գտնվող ջուր:** Մթնոլորտում (ամպերում, մառախուղում) գերսառած ջրի կարիլները կարող են ունենալ մինչև -30°, -40° C ջերմաստիճան:

**445. Գերսնդացում-Եստրոֆիկացիա-Еստրոֆիկացիա-Ձրավազաններում կենսածին տարրերի կուտակում բնական կամ մարդածին գործոնների ազդեցությամբ:** Դրա հետևանքով սկզբում բարձանում է ջրավազանի արդյունավետությունը, ավելի ուշ

բնաջնջվում են օրգանիզմները (թթվածի պակասի հետևանքով):

446. Գիշատիչ-Խափառ-Predator-1. Որպես սննդի աղբյուր այլ կենդանիներ օգտագործող կենդանի կամ բույս: 2. Կարգաբանորեն մոտ կանգնած տեսակներով սնվող կենդանի:

447. Գիշերային ճառագայթում-Հօգիս Առաջնակ-*Nocturnal radiation*-Արդյունավետ ճառագայթում գիշերվա ընթացում, երբ այն չի հավասարակշռվում արեգակի գումարային ճառագայթման ներհոսքով:

448. Գիպսասեր բույս-*Gypsofila* համար բառում է գիպսով հարուստ հողերում (որոշ գագեր, ուրցեր, սմախ և այլն):

449. Գլոգերի կանոն-*Правило Глогера*-*Gloger's rule*-հող-խոնավ վայրերում ապրող կենդանիները սովորաբար ավելի մուգ են գունավորված, քան չոր վայրերում ապրող նույն տեսակները:

450. Գօային տարավացում-*Линейная эрозия*-*Linear erosion*-Երկրի մակերևույթի ներ շերտի լվացումը ջրհոսքով և դրանով ուղիեցի բացասական ձևերի (հովիտ, հեղեղատ, ծորակ) ստեղծումը:

451. Գոլորշիացում-*Испарение*-*Evaporation*, *Vaporization*-Դեղուկ կամ պինդ նյութի գազաննանի (գոլորշու) անցնան գործընթացը: Բնության մեջ ջրագոլորշին մթնոլորտ է անցնում ջրի, հողի, ձյան, սառուցի, բուսականության մակերեսներից:

452. Գոլորշունակություն-*Испаряемость*-*Evaporative capacity*, *Potential evaporation*-Պայմանական մեծություն, որը բնութագրում է տվյալ վայրի կլիմայական պայմաններում խոնավության անսամբլակ քանակության հնարավոր գոլորշիացիումը: Արտահայտվում է մն-ով: Կարող է խիստ տարբերվել, հատկապես անապատում, փաստացի գոլորշիացումից:

453. Գոյազարգացում-*Экоразвитие*-*Ecodevelopment*-Ազրտեխնիկայի, գոյապահանական պլանավորման ու սահմանափակումների վրա հիմնված քաղաքական ու տնտեսական լուծումներ:

454. Գոյաթեքում-*Экоклимат*-*Ecoclimate*-Տեսակի տարածասահմանում որևէ գործոնի ծնակի մասնամբ համապատասխան փոփոխվող միջավայրին ծագումնաբանորեն և ֆենոլոգիապես հարմարված կենսատիպերի շարք:

455. Գոյահրավական կանոններ-*Экологические нормы*-*Ecology lawful standards*-Պայմանականորեն այսպես են կոչվում օրենսդրական կանոնները, որոնք ծառայում են որպես իրավունքի գոյապահպանական գործընթացը իրականացնող միջոց: Ըստ ծկի՝ առաջանում ու զարգանում են իրավաբանական օրենքներին համապատասխան, իսկ ըստ եռթյան՝ արտահայտում են հասարակության ու բնության փոխազդեցության օբյեկտիվ օրինաչափությունները: Այսինքն՝ գոյապահպանահրավական կանոնների ամբողջությունը, մի կողմից, իրավունքի համակարգի մաս է, մյուս կողմից՝ սոցիալական գոյապահպանության անմիջական մաս:

456. Գոյածագում-*Экогенез*-*Ecogenesis*-Օրգանիզմների և շրջակա միջավայրի հարաբերությունների գարգացման գործընթացը երկրագնդի պատմության ընթացքում:

457. Գոյակենսածն-*Экобиоморф*-*Ecobiomorph*-Լման ծևաբանական գծեր, կենսաբանական ոիթմ, գոյաբնախոսական, այդ բվում՝ միջավայրաստեղծ յուրահատկություններ ունեցող, հետևական համակեցություններում նույնանման դեր կատարող տեսակների ամբողջությունը:

458. Գոյահամակարգ-*Экосистема*-*Ecosystem*-Եվոլյուցիայի ընթացքում ծևագորված համակարգ, որտեղ հանդես են գալիս, մի կողմից, օրգանիզմները,

դրանց խմբերը կամ միագումարությունները (առանձնյակներ, տեսակներ, տեղախնդիր, համակեցություններ), մյուս կողմից միջավայրը, ապրելավայրի գործոնների ամբողջությունը: Տերմինն օգտագործվում է և այնպիսի համակարգերի համար, որոնց կազմում միայն մեկ օրգանիզմ է, և այնպիսի համակարգերի համար, որոնց կազմում օրգանիզմների միագումարություն է: Կան փոքր գոյահամակարգեր (օր. արջի որջը), միջին գոյահամակարգեր (լիճ, անտառ և այլն), մեծ գոյահամակարգեր (մայրցամաք, օվկիանոս և այլն):

**459. Գոյահամակարգի դարավոր շարժընթաց-Եկовայ դինամիկա էկոսիստեմա-***Century dynamics of ecosystem*-Դամակեցության շրջելի կամ անշրջելի փոփոխություններ, որոնք պայմանավորված են տարրեր պարբերական գործոններով և ընթանում են շատ երկար ժամանակահատվածում (դարեր):

**460. Գոյահամակարգի դիմացկունություն-Ժաւաչություն էկոսիստեմա-***Ecosystem vitality*-Գոյահամակարգի ունակությունը՝ դիմանալու միջավայրի մարդասին բեռնվածության հետևանքով առաջացող կտրուկ տատանումներին:

**461. Գոյահամակարգի մարդասին շարժընթաց-Անտրոպոգենիա դինամիկա էկոսիստեմա-***Anthropogenic dynamics of ecosystem*-Մարդկային գործունեության ազդեցության տակ համակեցության կամ սուրցեսիայի փոփոխությունները: Որպես կանոն՝ դրանք աղետաբեր բնույթի են (օր. անտառի հատումից հետո):

**462. Գոյահամակարգի շարժընթացի հատկություն-Դինամիկակա տարրությունների նկատմամբ գոյապահպանական համակարգերի հակազդման ձև: Խախտում է դրանց շարժընթացային հավասարակշռությունը: Գոյահամակարգերի շարժընթացային հատկությունների (ճատչելիություն, մեկուսացվածություն, կայունություն և այլն) տեսությունը թույլ է մշակված, և այդ պատճառով տերմինների բացատրությունները տարբեր են:**

**463. Գոյահամակարգի կառուցվածք-Структура էկոսիստեմա-***Structure of ecosystem*-Գոյահամակարգի գործառնական ու կազմաբանական բաժանումը կառուցվածքային ենթահամակարգերի: Դրանցից են տեղախնդիրը, բուսականության շարահարկերը, սինուզիաները և այլն:

**464. Գոյահամակարգի կենսունակություն-Ժաւաչություն էկոսիստեմա-***Viability of ecosystem*-Ոչ կենսածին միջավայրի կտրուկ տատանումներին, զանգվածային բազմացմանը, առանձին տեսակների անհետացմանը և մարդկային բեռնվածությանը դիմանալու գոյահամակարգի ունակությունը:

**465. Գոյահամակարգի կղզիացում-Ինсулյարություն էկոսիստեմա-***Insularity of ecosystem*-Մարդասին պատճառներով գոյահամակարգի տրոհումը առանձին, միայնակ հետ չհաղորդակցվող մասերի կամ սուրցեսիաների տարրեր հասակում գտնվող տեղամասերի:

**466. Գոյահամակարգի շարժընթաց որակներ-Դինամիկակա տարրություններ-Բնական համակարգերի հատկությունը՝ ժամանակի ընթացքում պահպանելու կամ փոփոխելու իրենց կառուցվածքային - գործառնական բնութագիրը:**

**467. Գոյահամակարգի չափ-Размер էկոսիստեմա-***Ecosystem dimension*-Այն տարրածքը, որի առկայության դեպքում հնարավոր է իրագործել համակարգը կազմող տարրերի ամբողջության ինքնակարգավորման և ինքնակերականգնման գործընթացները: Ցանկացած համակարգի, այդ թվում գոյապահպանականի, մեծությունը չի կարող չափվել ֆիզիկական միավորներով (երկարությամբ, մակերեսով, ծավալով), այլ միայն համակարգային չափով, որը հաշվի է առնում փոխանակության ու

դեկավարման իրականալիությունը:

468. Գոյահամակարգի սահման-**Граница экосистемы-Boundary of ecosystem**-Անցումային գոտի, որի սահմաններում փոխվում է միջավայրաստեղծ (գոյապահպանական) բաղադրամասերի հարաբերակցությունը, հետևապես փոխվում են միջավայրի գործոնները և կենսույքի տեսակային կազմը: Սովորաբար ցայտուն չի լինում, որովհետև ոչ այնքան կազմաբանական է, որքան գործառնական ու համակարգային:

469. Գոյահամակարգի սեզոնային շարժընթաց-**Сезонная динамика экосистемы-Seasonal dynamics of ecosystem**-Դաշտակեցության պարբերական փոփոխությունների ձևերից մեկը, որը կապված է տարվա սեզոնների հերթափոխման հետ:

470. Գոյածն-**Экоморф-Еcomorph-**տես Գոյակենսածն:

471. Գոյալորտ-**Экосфера-Ecosphere**-Երկրագնդի վրա կյանքի զարգացման համար պայմաններ ստեղծող առանձնահատկությունների ամբողջությունը: Տարածականորեն ընդգրկում է մթնոլորտը, կենսուրությը, ջրուրությը և քարուրությի ու երկրամիջուկի խորքային այն գործառնական մասը, որը ստեղծում է կյանքի երկրածնաբանական, երկրաֆիզիկական և երկրաքիմիական բնութագրերը:

472. Գոյապահպանաբանություն-**Экологистика-Ecologistics**-Ժամանակակից գոյապահպանական հիմնահարցերի լուծման ուղղված գիտական բնագավառների և ուղղությունների ամբողջությունը:

473. Գոյապահպանական աղետ-**Экологическая катастрофа-Ecological catastrophe**-1. Բնական գործընթացների վրա մարդու գործունեության ազդեցության հետևանքով առաջացող երկարատև չորություն, անասունների ու կենդանիների զանգվածային ոչնչացում: Կարող է հասցնել մինչև իսկ բնակչության զանգվածային մական: 2. Տեխնիկական խոշոր վրար, որն առաջացնում է միջավայրի կործանարար փոփոխություն և դրանով՝ կենդանի օրգանիզմների ոչնչացում և տնտեսական մեծ վնաս:

474. Գոյապահպանական անվտանգություն-**Экологическая безопасность-Ecological safety**-1.Գործողությունների, վիճակների և գործընթացների ամբողջություն, որն ուղղակի կամ անուղղակի չի բերում կենսական վնասներ (կամ այդպիսի վնասների սպառնալիք) բնական միջավայրին, առանձին մարդկանց և մարդկությանը: 2. Վիճակների, երևույթների ու գործողությունների համալիր, որն ապահովում է գոյապահպանական հաշվեկշիռ երկրագնդի վրա և դրա առանձին տարածաշրջաններում այնպիսի մակարդակով, որին ֆիզիկապես, սոցիալ-տնտեսապես, տեխնոլոգիապես և քաղաքականապես պատրաստ է մարդկությունը: Գոյապահպանական անվտանգությունը սահմանափակված է ժամանակով և իրագործվող գործողությունների քափով. կարծամակետ ազդեցությունը կարող է հարաբերականորեն անվտանգ լինել, իսկ երկարաժամկետը՝ վտանգավոր, սահմանափակ շրջանակներում փոփոխությունը գրեթե անվնաս է, իսկ լայնամասշտարը՝ կործանարար:

475. Գոյապահպանական ապակյունացում-**Экологическая депривация-Ecological deprivation**-Կենսահամակեցության պարզեցման հետևանքով գոյապահպանական կայունության խիստ անկում:

476. Գոյապահպանական արժեքականություն-**Экологическая валентность-Ecological valence**-Ծրջակա միջավայրի բազմազան պայմաններում օրգանիզմի տեսակի գոյության հնարավորության սահմանները: Փոքր գոյապահպանական արժեքականություն ունեցող տեսակը կարող է դիմանալ գոյապահպանական գործոնների միայն սահմանափակ տարատեսակություններին: Մեծ արժեքականություն ունեցող տեսակը կարող է զբաղեցնել տարբեր գոյատեղեր կամ շատ փոփոխական պայման-

ներով գոյավայրեր:

477. Գոյապահպանական արտակարգ իրավիճակ-Էկոլոգիկական սույացալ-*Ecologically critical situation*-Բնակչության առողջությանը մեծ վնաս հասցնող և գոյահամակարգերը վատքարացնող տարերային աղետներ և արտադրական խոչըր վրաբներ:

478. Գոյապահպանական բաղադրամաս-Էկոլոգիկական կոմպոնենտ-*Ecological component*-Գոյապահպանական համակարգերի հիմնական նյութակներ-գետիկ մասերը էներգիան, օազային կազմը (մթնոլորտ), ջուրը, հողը (սննդատու միջավայր), բույսերը (օրգանական նյութերի ստեղծողներ), օրգանիզմները (օրգանական նյութերով սնվողներ և դրանք քայլայողներ):

479. Գոյապահպանական բաղադրամասերի հաշվեկշիռ-**Բալանս էկոլոգիկական կոմպոնենտներ**-*Balance of ecological components*-Բնական հավասարակշռություն ապահովող գոյապահպանական բաղադրամասերի քանակական գուգորդում: Օրինակ՝ անտառի ածի համար անհրաժեշտ են որոշակի խոնավություն ու հողային պայմաններ: Սակայն խոնավությունը կախված է բուսականության առկայությունից, իսկ հողերը ծավորվում են վերջինիս կենսագործունեության հետևանքով:

480. Գոյապահպանական բաղադրամասերի հավելյալ ուժության օրենք-**Զաkon ձովոնառությունիւն էկոլոգիկական կոմպոնենտներ**-*Law of ecological components supplementarity*-Գոյահամակարգում բաղադրամասերը միմյանց լրացնում են այնպես, որ դրանցից ցանկացածի միջին բազմամյա քանակի երկարատև փոփոխությունը բերում է նյութների որակական, քանակական և ամբողջ գոյահամակարգի բնույթի փոփոխմանը:

481. Գոյապահպանական բարոյականություն-**Էկոլոգիկական առաքակ**-*Ecological ethics*-Ուսմունք շրջակա միջավայրի նկատմամբ մարդու և նրա տնտեսական գործունեության պատշաճ վերաբերմունքի մասին, որը հիմնված է ներքին բարոյական սկզբունքների վրա:

482. Գոյապահպանական բժշկություն-**Էկոլոգիկական մեծացնականություն**-*Ecological medicine*-Դանալիք գիտական նյութ: Ուսումնասիրում է մարդու առողջության վրա շրջապատող միջավայրի ազդեցության բոլոր տեսակետները, ըստ որում՝ հիմնական ուշադրություն է դարձվում այն գործուներին, որոնք բերում են «միջավայրի հիվանդացմանը»: Այն գնահատում է նաև արդյունաբերության մեջ և կենցաղում դեղերի, քիմիական նյութերի, շինանյութերի և վարակասպանների օգտագործման վտանգը, ուսումնասիրում է արդյունաբերության և գյուղատնտեսության թունավոր թափոնների ազդեցությունը, իրագործում է կյանքի միջավայրի մաքրության հսկողություն և այլն:

483. Գոյապահպանական բուրգ-**Էկոլոգիկական պիրամիդ**-*Ecological pyramid*-Գոյահամակարգի արտադրողների, օգտագործողների և վերականգնողների սնուցողական մակարդակներից յուրաքանչյուրում առանձնյակների թիվը, որանց կենացանցվածի կամ դրանցում ներփակված էներգիայի քանակն արտահայտող գծագրական մոդել. յուրաքանչյուր բաղադրիչ ուղղանկյուն է, ունի բուրգի տեսք:

484. Գոյապահպանական գործուն-**Էկոլոգիկական ֆակտոր**-*Ecological factor*-Արտաքին միջավայրի տարրեր, որոնք որոշում են օրգանիզմների գոյության պայմանները: Լինում են անօրգանական և նարդաշին:

485. Գոյապահպանական գործուների փոխազդեցության օրենք-**Զաkon բառամօճմամբառական էկոլոգիկական ֆակտորներ**-*Law of ecological factors interaction*-Օրգանիզմի այն նյութը, որն ունի ավելի մեծ խտություն, մասնակիորեն կարող է փոխարինել ավելի քիչ խտություն ունեցող նյութին (օր.՝ կալցիումի պակասորդի դեպքում

դրան կարող է փոխարինել ստրոնցիումը):

486. Գոյապահպանական էներգետիկա-Էկոլոգիческая энергетика-Ecological energetics-1. Կենսաբանական աղբյուրներից ստացվող էներգիան (օր.՝ աղբավայրերից ստացվող մեթանը): 2. Գոյապահպանական տեսակետից անվնաս աղբյուրներից ստացվող էներգիան:

487. Գոյապահպանական զոհ-Էկոլոգիческая жертва-Ecological prey-Անբարենպաստ պայմանների ու երևությունների ազդեցությամբ բնական միջավայրի բնակիչների, այդ թվում՝ մարդու կյանքի վատրարացումը, մինչև իսկ մահանալը:

488. Գոյապահպանական լավագույն-Էկոլոգիչеский оптимум-Ecological optimum-1. Կենսաբանական տեսակի պայմաններ ամենամեծ կենսունակությամբ. բազմացման ունակություն, առողջություն և հարմարվածություն ոչ կենսածին գոյապահպանական գործոններին: 2. Կենսածին համակեցության պայմաններ, որոնցում տվյալ համակեցությունն առավելություններ ունի մյուսների նկատմամբ: 3. Գոյահամակարգի համար միջավայրաստեղծ բաղադրանասերի հաշվեկշռային համադրություն, որը դրանց բնական բոլորապատույտի պայմաններում ապահովում է կլիմաքսային գոյահամակարգում բնական հավասարակշռությունը կամ սուրցեսիայի գործընթացն ուղղում է կլիմաքսի առաջացման կողմը:

489. Գոյապահպանական լարված իրավիճակ-Էկոլոգիчески-напрякенная ситуация-Ecologically tense situation-Գոյապահպանական հավասարակշռության աստիճանական խախտման ու քայլայման հանգեցնող շրջակա միջավայրի փոփոխությունը:

490. Գոյապահպանական լուսավորություն-Էկոլոգիческое просвещение-Ecological education-Գոյապահպանական գործընթացների հետ մարդկության սերտ կափի փաստը ընթանուի հասարակության դաստիարակումը և կրթումը:

491. Գոյապահպանական խորշ-Էկոլոգическая ниша-Ecological niche-Գոյահամակարգի ներսում կյանքի պայմանների ամբողջությունը, որը համապատասխանում է շրջակա պայմաններին տեսակի կամ տեղախնդիր պահանջներին: Այդ պայմաններում ապրող օրգանիզմները ծեռք են բերում հարմարվողական նոր հատկանիշներ: Նման հարմարվողականությունը չունեցող օրգանիզմներն այդպիսի տեղանասեր զբաղեցնել չեն կարող: Միևնույն տեսակը կարող է զբաղեցնել տարբեր գոյապահպանական խորշեր տարածքի տարրեր մասսերում: Նույն խորշը տարրեր աշխարհագրական կետերում կարող է զբաղեցված լինել տարրեր տեսակներով:

492. Գոյապահպանական խորշերը լրացնելու կանոն-Правило заполнения экологических ниш-Rule of obligatory ecological niche filling-Ատարկ գոյապահպանական խորշեր գոյություն չունեն: Երբեմն դրանց լցումը են ամենաանսպասելի ձևով:

493. Գոյապահպանական կադաստր-Էկոլոգическая караистр-Ecological cadastre-Որոշակի տարածքի բնական միջավայրի յուրահատկությունների ամբողջության բնութագիրը, որն ուղեկցվում է դրանց գործնական նշանակության համարի գնահատականով:

494. Գոյապահպանական կանխագուշակում-Էկոլոգическая проактивизация-Ecological forecasting-Բնական գործընթացների և դրանց վրա մարդու ազդեցության միջոցով համակարգերի ու բաղադրանասերի վարքի կանխատեսումը:

495. Գոյապահպանական կանոններ-Էկոլոգическая правила-Ecological rules-Միջավայրի հետ օրգանիզմի, այդ թվում՝ մարդու, փոխկապակցությունը որոշող օրինաչափությունների խումբ: Դայտնի են Ալենի, Բերգմանի, Պառլինգտոնի, Զորդամի և այլ կանոններ:

496. Գոյապահպանական կոլլաց-**Ecological collapse**-Տարածության ու ժամանակի մեջ գործնականում անշրջելի բնական և մարդասին երևույթներ:

497. Գոյապահպանական համակարգ-**Ecological system**-տես Գոյահամակարգ:

498. Գոյապահպանական համատեղելիություն-**Ecological compatibility**-Նույն կամ շատ նման գոյապահպանական խորշերի սահմաններում գոյություն ունենալու տեղախմբի ունակությունը:

499. Գոյապահպանական հավասարակշռության խախտում-**Harmful effect**-էկոլոգիկ քանակական հավասարակշռության խախտում:

500. Գոյապահպանական հավասարակշռություն-**Ecological balance**-Միջավայրաստեղծ բաղադրամասերի և բնական գործնքացների հաշվեկշիռ, որը սուբյեկտիվ գարգացման ընթացքում բերում է տվյալ գոյահամակարգի երկարատև գոյությանը կամ զարգացմանը: Գոյապահպանական հավասարակշռության նշանացույց կարող է ծառայել ածանցյալ համակեցությունների ենթադրյալ հատկությունը՝ զարգանալու դեպի սուբյեկտիվ զոնակի լիմայական վերջնական փուլերը:

501. Գոյապահպանական հարաբերակցության օրենք-**Закон экологических корреляций**-**Ecological correlation law**-Գոյահամակարգի բոլոր տեսակները գործանուկանորեն համապատասխանում են միմյանց: Դրանով պայմանավորված մեկ տեսակի կամ տեսակների ոչնչացումը նշտապես բերում է փոխկապակցված տեսակների անհետացմանը:

502. Գոյապահպանական հուսալիություն-**Ecological reliability**-Գոյապահպանական համակարգի մշտապես էներգարտադրողական աշխատանք կատարելու հատկությունը: Դրա ընթացքում (օրական, սեզոնային, տարեկան ու դարավոր տատանումների ժամանակ) հարաբերականորեն ինքնավերականգնվում և ինքնակարգավորվում է:

503. Գոյապահպանական ճարտարագիտություն-**Ecological engineering**-Գոյապահպանական հիմնավորումների և եղանակների վրա հիմնված տնտեսական միջոցառումների իրագործումը:

504. Գոյապահպանական ճարտարապետություն-**Ecological architecture**-ճարտարապետության և հատակագծման ուղղություն, որը զգույն է առավելագույն հաշվի առնել մարդու (ծննդից մինչև ծննդություն) սոցիալ-տնտեսական և գոյապահպանական կարիքները: Զգույն է մարդկանց նոտեցնել բնությանը (բնակելի զանգվածների և տների մոտ հանգստի գոտիների, փոքրիկ պարտեզների ստեղծումով և այլն), նրանց ազատել քաղաքային տարածքի միօրինակությունից, անշարժությունից, բնակչությանը հավասարաչափ տեղաբաշխել տարածքի վրա (100 մարդուց ոչ ավելի 1 հա վրա, բարձրահարկ և ցածրահարկ շինարարության համամասնությունը՝ 3:7), բնակելի տարածքի 50 %-ից ոչ պակաս հատկացնել կանաչ տնկարկների համար, բնակչությանը նեկուսացնել մայրուղիներից, պայմաններ ստեղծել մարդկանց շփման համար և այլն:

505. Գոյապահպանական ճգնաժամ-**Ecological crisis**-Մարդկության և բնության միջև փոխհարաբերությունների լարված վիճակ, որը բնորոշվում է հասարակության արտադրողական ուժերի և արտադրողական հարաբերությունների զարգացման ու կենսուրությի ռեսուրսագոյապահպանական հնարավորությունների անհամապատասխանությամբ: Ամենից հայտնի են խոշոր կենդանիների անհամապատասխանությամբ:

րի ոչնչացման (10-50 հազար տարի առաջ) և մարդու ժամանակակից գործունեությամբ պայմանավորված գոյապահպանական ճգնաժամերը:

506. Գոյապահպանական ծկունություն-Էկոլոգիկական ուժամանական ապահովանք-  
Ecological plasticity-Միջավայրի գործուների ազդեցության նկատմամբ օրգանիզմի կամ համակեցությունների դիմացկունության ասիդանը:

507. Գոյապահպանական միջություն-Էկոլոգիկական առողջություն-  
Ecological amplitude-Միջավայրի փոփոխվող պայմաններին տեսակի կամ համակեցության հարմարվողականության սահմանները:

508. Գոյապահպանական մշակույթ-Էկոլոգիկական կուլտուրա-  
Ecological culture-Սարդկության զարգացման փուլ: Գիտակցություն է գոյապահպանական հիմնախնդիրների առաջնահերթ ու լիարժեք լուծման խիստ անհրաժեշտությունը:

509. Գոյապահպանական նախահարմարում-Էկոլոգիկական պրեադապացում-  
Ecological preadaptation-Տեսակի համար նոր՝ կույուցիայի ընթացքում ծեղք բերած հատկանիշներ, որոնք կյանքի փոփոխվող պայմաններին հարմարվելու (սննդի կուտակում, քուն մտնել և այլն) ժառանգական նեխանիզմներ են ստեղծում:

510. Գոյապահպանական նպատակահարմար հավասարակշռություն-  
Целесообразное экологическое равновесие-Expedient ecological balance-Բնական և մարդածին (Երկրորդային գոյապահպանական) հավասարակշռություն, առավելագույն սոցիալ-տնտեսական ներգործության նակարդակով միջավայրաստեղծ բաղդրանասերի և բնական գործընթացների հաշվեկշիռ: Դրա նշանացույցն է սուրցեսիայի զարգացման ընթացքում հանգուցային համակեցություններին հասմելու գոյահանակարգերի հատկությունը:

511. Գոյապահպանական շարք-Էկոլոգիկական բարձրացույց-  
Ecological series-Գոյապահպանական որևէ գործոնի ազդեցության աճով կամ նվազմամբ պայմանավորված բույսերի կամ համակեցությունների դասավորությունը: Օրինակ՝ բույսերի և համակեցությունների դասավորությունը՝ պայմանավորված ռելիեֆով, եթե ներքեւ վերև ծևավորվում է խոնավության ուժեղացման գոյապահպանական շարքը:

512. Գոյապահպանական չափամաժանում-Էկոլոգիկական հարմարացում-  
Ecological standardization-Վնասակար ու թունավոր նյութերով միջավայրի հնարավոր աղոտուման նվազագույն թույլատրելի չափարաժինների կանխորոշումը:

513. Գոյապահպանական չափանիշ-Էկոլոգիկական կրառում-  
Ecological criteria-Չափանիշ, որի հիմնա վրա իրագործվում է գոյապահպանական համակարգերի, գործընթացների ու երևույթների գնահատումը և դասակարգումը: Շատ կարևոր է նախագծի գոյապահպանական հիմնավորման և կատարելիք պլանավորման ու կանխատեսման, փորձաքննության, բնօգտագործման միջոցառումների բոլոր տեսակների գոյապահպանական ու տնտեսական գնահատման համար:

514. Գոյապահպանական պահանջմունք-Էկոլոգիկական ուժություն-  
Ecological need-Օրգանիզմի տեղախնդիր կամ տեսակի պահանջմների միագումարությունը, որն ընդգրկում է միջավայրաստեղծ բաղդրանասերը, սնուցումը, նույն այլ տեսակների օրգանիզմների հետ փոխհարաբերությունը և այլն:

515. Գոյապահպանական պայմանների փոխարինման Ալյոխինի կանոն-  
Правило Альехина замещения экологических условий-Alyokhin's rule of substitution  
of ecological conditions-Միջավայրի ցանկացած գործոն կարող է փոխարինվել մեկ ուրիշով: Այսինքն՝ արտաքին միանման ազդեցության դեպքում գոյապահպանական երևույթների ներքին պատճառները կարող են լինել տարբեր:

516. Գոյապահպանական պլանավորում-Էկոլոգիկական հարմարացում-  
Ecological planning-Գյուղատնտեսական տեսակետից նպատակահարմար, առանց

գոյապահպանական հաշվեկշռի էական խախտումների, բնական ռեսուրսների կամ տարածքների ներուժի օգտագործման կամ շահագործման հաշվարկը:

517. Գոյապահպանական ռեսուրսներ-Էկոլոգիչесկայ ռեսուրսы-Ecological resources-Կենսուրուտում և ենթաբաժիններում (Ենթիա, գազային կազմ, ջուր, բնահող, արտադրողներ, սպառողներ, վերականգնողներ) գոյապահպանական հավասարակշռությունն ապահովող միջավայրաստեղծ բաղադրամասերի ամբողջությունը:

518. Գոյապահպանական ռիսկ-Էկոլոգիչесկայ ռիսк-Ecological risk-Գոյահանակարգերի ստորակարգության տարրեր մակարդակների հաշվեկշռում բնական միջավայրի ցանկացած մարդածին փոփոխությունների (ֆիզիկաքիմիական, օտար տեսակների ներմուծման) հնարավոր անբարենպաստ հետևանքները:

519. Գոյապահպանական ռիսկի գոտի-Յօնա էկոլոգիչеского ռիսка-Ecological risk zone-Յանաքային և ջրային տարածքներ, որտեղ մարդկային գործունեությունը կարող է ստեղծել վտանգավոր գոյապահպանական իրավիճակներ: Օրինակ՝ նավքի ստորջրյա հանույթի գոտիներ, նավքատար նավերի անցման համար վտանգավոր հատվածներ և այլն:

520. Գոյապահպանական սահմանափակում-Էկոլոգիչесկայ օրգանիզացիա-  
Ecological limitation-Բնական ռեսուրսների և բնակության միջավայրի շահագործման ու ծեսափոխման սահմանափակում (օր.՝ անտառի բնապահպանական իրավիճակը չխախտող անտառահատումների թույլատրում և այլն): Նկատի է առնվում, որ ցանկացած տնտեսական լայնանասշտար գործունեությունը բերում է բնության խախտման անբարենպաստ հետևանքների:

521. Գոյապահպանական սուրբեսիա-Էկոլոգիչеская сукцессия-Ecological succession-Ներքին ու արտաքին պայմանների ազդեցությամբ գոյահամակարգի աստիճանական փոփոխությունը:

522. Գոյապահպանական վտանգավոր իրավիճակ-Էկոլոգիչеский-опасная ситуаций-Ecologically hazardous situation-Սարդկային կյանքի, աշխատանքի, հանգստի նորմալ պայմանները խախտող մարդ-շրջակա միջավայր գոյապահպանական հավասարակշռության փոփոխությունը:

523. Գոյապահպանական տեղախումբ-Էկոլոգիչеская популяция-Ecological population-Տեղախումբ, որը տարածված է մեկ կենսահամակեցությունում: Տարրական տեղախմբերի ամբողջություն է և հարևաններից թույլ է մեկուսացված: Այդ պատճառով է ունի միայն ժամանակավոր ծևաբանական գծեր:

524. Գոյապահպանական տիպ-Էկոլոգիչеская тип-Ecological type-Ներտեսակային ձևեր, որոնք, որոշակի լանդշաֆտներին ու կենսատեղերին հարմարվելով, տարբերվում են կազմաբանորեն, ծևաբանորեն և գոյապահպանորեն:

525. Գոյապահպանական տիպօրինակ-Էկոլոգիչеский стандарт-Ecological standard-Շրջակա բնական միջավայրի վրա վնասակար մարդածին ազդեցության հնարավոր թույլատրելի չափորոշիչ, որի գերազանցումը սպառնալիք է մարդու գոյության և շրջակա միջավայրի բնականուն պայմանների պահպանման համար: Սահմանվում է մընոլորտի, ջրամբարների, հողի, տնտեսական, բնակելի ու ռեկրեացիոն նպատակներով օգտագործվող բնական միջավայրի համար:

526. Գոյապահպանական ցնցակաթված-Էկոլոգիչеская шок-Ecological shock-Մարդկության տոցիալ-տնտեսական զարգացման որոշակի փուլում գոյապահպանական դժվար լուծվող խնդիրների հանկարծակի գիտակցում: Լինում են գոյապահպանական ճգնաժամ, գոյապահպանական աղետ, գոյապահպանական կոլապս:

527. Գոյապահպանական փոխգոյություն-Էկոլոգիչеская викуриат-

**Ecological vicariat**-Սիևուույն աշխարհագրական տարածքում, սակայն գոյապահպանական տարբեր պայմաններում և տարբեր տեղանասերում կենդանիների նման տեսակների գոյությունը (օր.՝ ավազային անապատներում ապրում է թավոտ ճագարանուկը, իսկ կավային անապատներում փոքր ճագարամուկը):

528. Գոյապահպանական փորձաքննություն-**Էկոլոգիկալ ռեսուրսական գոյապահպանական կանոններին համապատասխանության նպատակով հատուկ անցկացվող տեսական հաշվարկների ու միջոցառումների, շինարարության ու արտադրատնտեսական օբյեկտների տեղաբաշխման նախագծերի, շահագործման հանձնվող ծեռնարկությունների ու կառուցների, արտադրվող և օգտագործվող արտադրանքների ու նյութերի տեխնոլոգիական գործընթացների, գյուտերի, հայտնագործությունների, գնվող սարքավորման ազդեցության գնահատում:**

529. Գոյապահպանության՝ Բ. Կոմմոներ-**Ecological B. Commoner's law**-Առաջին օրենք - Բոլորը կապված են միմյանց հետ: Երրորդ օրենք - Ամբողջ պետք է ինչ-որ տեղ կորչի: Երրորդ օրենք - Բնությունն ավելի լավ գտնի: Չորրորդ օրենք - Ոչ մի բան հենց այնպես չի տրվում:

530. Գոյապահպանություն-**Էկոլոգիա-Ecology**-Սկզբնակես նշանակում էր բուսական ու կենդանական աշխարհների օրգանիզմների և միջավայրի փոխադարձ կապի մասին կենսաբանության բաժին: Ներկայումս տերմինի, այնպես էլ բազմաթիվ ածանցյալների (օր.՝ գոյապահպանական մտածողություն, ճգնաժամ և այլն) մեկնաբանության խիստ բազմազանություն կա: Տերմինի լայն օգտագործումը բացատրվում է բնության «կենդանի» մասի և մարդու՝ պահպաննան հարցերի նկատմամբ հետաքրքրության կտրուկ աճով: Ժամանակակից իմաստներն են 1. գոյապահպանությունը կենսաբանական գիտություններից մեկն է, որն ուսումնասիրում է օրգանիզմների և միջավայրի փոխարաբերությունները, 2. համալիր վերգիտություն է, որը համարում է բնության ու մարդկության փոխազդեցության մասին հասարակական գիտությունների բոլոր բնապատմական գիտելիքները և եզրակացությունները, 3. օրգանիզմների, կենսաբանական համակարգերի և միջավայրի փոխազդեցության խնդիրների հետազոտման հատուկ ընդհանուր գիտական մոտեցում է, 4. մարդու և բնության փոխազդեցության գիտական ու գործնական խնդիրների ամբողջությունն է: Ավելի քիչ գոյապահպանություն տերմինն օգտագործվում է բնական համակարգերում հետազոտությունների կողմնորոշումն ընդգծելու համար (օր.՝ լանշաֆտի գոյապահպանություն կ. Կրոլի ընթանամբ): Տարբերում են տեսակների, բուսական և կենդանական համակեցությունների ու տեղախնբերի գոյապահպանություն: 1970-ական թվականներից ծևավորվել է մարդու կամ սոցիալական գոյապահպանությունը:

531. Գոյապայքար-**Բօրբա** Համար օգտագործում է ներտեսակային և միջտեսակային բոլոր հարաբերությունները, ինչպես նաև ոչ կենսածին գործոնների հետ օրգանիզմների փոխարաբերությունները: Գոյապայքարի արդյունք են բնական ընտրությունը և տեսակների էվոլյուցիան:

532. Գոյասպան-**Էկուալ-Ecocide**-Օրգանիզմների գոյամիջավայրի կանխամտածված ավերում, որը հասցնում է կենսառչնչացման:

533. Գոյատեղ-**Էկոտող-Ecotone**-Օրգանիզմների ապրելատեղ՝ հողի, հիմնահողի, միկրոկլիմայի և այլ գործոնների բնորոշ յուրահատկություններով: Նման է կենսատեղին, բայց ավելի ընդգծված են համակեցության նկատմամբ արտաքին միջավայրի գործոնները:

534. Գոյատեսակ-**Էկոսակ-Ecospecies**-Գեների ազատ փոխանակությամբ գոյատիպերի խումբ: Ներգոյատեսակային խաչաբարման դեպքում առաջանում է կենսու-

նակ սերունդ: Կազմված է մի քանի գոյատիպերից:

535. Գոյատիպ-Էկոտոպ-**Eco-type**-Այլ կենսատիպերից իր գրաղեցրած սահմաններով, բնախոսական ու ծագումնաբանական առանձնահատկություններով տարբերվող ուրույն կենսատիպ: Կազմաբանորեն զգալի տարբերվող գոյատիպերն առանձնացվում են որպես տարատեսակներ:

536. Գործառաշերտ-**Դեյտուլինի սլուն-Active layer**-Հողի այն շերտը, որի ջերմային վիճակը և խոնավության առկայությունը պայմանավորված են մքնոլորտի հետ ունեցած ջերմափոխանակությամբ: Դրա սահմաններում են տեղի ունենում ջերմաստիճանի օրական և սեզոնային տատանումներ:

537. Գործառնական նյութափոխանակություն-**Փունկցիոնալինի մետաబոլիզմ**-Functional metabolism-Օրգանիզմի ակտիվ կենսագործունեության ընթացքում նյութերի և էներգիայի օգտագործումը:

538. Գրունտ-**Ground-Edaphic**-տես Դիմնահող:

539. Գուանո-**Guano-1**. Չոր կլիմայի պայմաններում ծովային թռչունների քայլաված ծերտը: Օգտագործվում է որպես ազոտական և ֆոսֆորական պարատանյութ: Չանքավայրերը բնորոշ են Չիլիին, Պերուին, Չարավային Աֆրիկայի և Կարիբյան ծովի կղզիներին: 2. Զենորսության և գազանորսության մնացորդներից արհեստականորեն պատրաստվող պարարտանյութ:

540. Գումարային արտանետում-**Суммарный выброс-Total discharge**-Որոշակի վայրում արտանետված աղտոտիչների ընդհանուր քանակը:

541. Գումարային գոլորշիացում-**Суммарное испарение-Total evaporation**, **Evapotranspiration**-Երկրագնդի մակերեսից, այդ թվում բուսածածկից, կատարվող գոլորշիացումը:

542. Գումարային ճառագայթում-**Суммарная радиация-Global radiation, Total radiation**-Ընդհանուր ճառագայթում: Երկրագնդի մակերեսի ստացած արկի ուղիղ և ցոված ճառագայթման միագումարը:

## 7

543. Դառլինգտոնի կանոն-**Правило Дарлингтона-Darlington's rule**-Կղզիների մակերեսի 10 անգամ փոքրացումը կրկնակի կրծատում է այնտեղ ապրող տեսակների թիվը:

544. Դեգեներացիա-**Degeneration**-տես Այլասերում:

545. Դեգակտիվացում-**Дезактивация-Desactivation**-Առարկաների մակերեսի ինքնառագայրող աղտոտման հեռացում:

546. Դեմուտացիա-**Demutation**-տես Այլափոխում:

547. Դենդրարիում-**Dendrarium-Arboretum**-Բաց հիմնահողում մշակվող կենդանի ծառերի ու թփերի համախումը: Դենդրարիումի տնկարկները սովորաբար ծևավորվում են լանդշաֆտային պարկի ոճով: Կարող են լինել ինքնուրույն կամ կազմել բուսաբանական այգու մի մասը: Բույսերի տեղաբաշխումն իրագործվում է ըստ կարգարանական, աշխարհագրական, գոյապահպանական, գեղագարդային կամ այլ հատկանիշների:

548. Դենդրոբիոնտ-**Dendroblont**-տես Ծառաբնակ:

549. Դենուդացիա-**Denudation**-տես Տեղատարում:

550. Դետերմինանտ-**Determinant**-տես Որոշիչ:

551. Դետրիտ-**Detrivore-Detritus**-տես Քայրայուկ:

552. Դետրիտակեր-**Detrivorephage**-տես Քայրայակեր:

553. Դերատիզացում-**Deratization**-տես Կրծողավերացում:
554. Դեշիբել-**Desibel**-Աղմուկի, ծայնի ուժգնության չափման միավոր: Աղմուկին մարդու լիահարմարությունը՝ 30-40 դԲ է, իսկ ցավային սահմանը՝ 120:
555. Դեֆլացիա-**Deflation**-տես Փչաքայքայում:
556. Դիակեր-**Necrophage**-Կենդանի, որը սնվում է սատկած կենդանական օրգանիզմների (հիմնականում՝ ողնաշարավորների) մնացորդներով: Այդպիսիք են բգեց գերեզմանավորը, անգող, մարարուն, շնագայլը, բորենին և այլն:
557. Դիբոնտ-**Dibiont**-տես Երկեն:
558. Դիգրեսիա-**Digression**-տես Նահանջ:
559. Դիմացկունության օրենք(Վ.Շելֆորդի)-**Закон толерантности (V. Шелфорда)-Tolerance law** (V. Shelford's e)-Օրգանիզմի (տեսակի) բարգավաճումը սահմանափակող գործոնը կարող է լինել գոյապահպանական գործոնի ինչպես նվազագույնը, այնպես էլ առավելագույնը: Դրանց միջև եղած ընդգրկույթը ծառայում է որպես օրգանիզմի (տեսակի) դիմացկունության սահման:
560. Դիմելոդիա-**Dimeloidia**-տես Աճագոյապահպանություն:
561. Դիսթրես-**Distress**-տես Բացասական սրբես:
562. Դիսիմիլացում-**Dissimilation**-Ենութափոխանակության փուլերից մեկը: Կենդանի մարմինների մասը կազմող օրգանական նյութերի քայլայման, օքսիդացման, վերականգնման գործընթաց:
563. Դիվերգենցիա-**Divergence**-տես Տարամիտում:
564. Դոմեստիկացում-**Domestication**-տես Ընտամեցում:
565. Դոմինանտ-**Dominant**-տես Գերիշխող:
566. Դուստ-**Dust**-Փոշենման վարակասպան: Պարունակում է թունաքիմիկատի մինչև 10% ակտիվ մաս:
567. Դուրս գրված հողեր-**Brososyle земли-Abandon soils**-Գյուղատնտեսական օգտագործման համար անպիտան, ճահճակալած, քարքարոտ, աղակալած, հանքերի մշակումից հետո մնացած հողեր: Օգտագործելի դարձնելու համար պահանջվում է արմատական ջրարբիացում, վերականգնում:
568. Դուրս մղում-**Вытеснение-Displacement**, **Supplantation**-Գյոյապահպանական պայմանների փոփոխման հետևանքով բուսական կամ կենդանական մեկ տեսակի փոփոխիչնումը մեկ ուրիշով: Կարող է բերել դուրս մղված տեսակի վերացմանը:
569. Դևաստացիա-**Devastation**-տես Բնաջնջում:
- Ե
570. Եզրաշերտ-**Бордюр-Көн**-Որոշակի տեսակի ոչ բարձր, մինչև 50 սմ, ծաղկող թփերի կամ գեղազարդատերի խոտաբույսերի մեկ կամ երկու շարքով նեղ (10-30սմ) տնկարկ: Ծառայում է ծաղկաբերերի, ծաղկամարգերի կամ արահետների եզրապատճան համար:
571. Եկվոր բույս-**Пришлое растение-Stranger plant**-Այլ տարածքներից պատահականորեն բերված օտար տեսակներ: Երենմ դրանց արագ տարածումը խախտում է կենսահամակեցությունների բնական վիճակը:
572. Եղանակ-**Pogoda-Weather**-Սվյալ պահին կամ որևէ ժամանակահատվածի ընթացքում տվյալ տեղանքում օդերևութաբանական տարրերի ամրողությամբ բնութագրվող մրնուրութի վիճակը: Անընդհատ փոփոխվող մրնուրութային գործընթացների արդյունք է :
573. Եղանակի երկարաժամկետ կանխատեսում-**Долгосрочный прогноз**

**Խեղ-Միջավայրում ճառագայթող տարրերի ինքնատրուհման գումարային չափը:**  
Չափման միավորը Կյուրին է:

**736. Ինքնածառագայթող բափոններ- Ռադիոակտիվությունը ռուսական-Radioactivity-waste-Մարդու կողմից ճառագայթաակտիվ նյութերի օգտագործման ժամանակ առաջացող և հաստատված չափաքանակները գերազանցող, հետագա օգտագործման համար ոչ պիտանի նյութերը ու կենսաբանական օբյեկտները: Պահպանման համար դրանք հիմնականում բաղկում են այնպիսի վայրերում և այնպիսի խորության պահեստարաններում, որ հետագայում չքափանցեն շրջակա միջավայր:**

**737. Ինքնածառագայթող մառախուղ-Ռադիոակտիվությունը ռուսական-Radioactivity fog-nauwagajravakutihv գազեր, փոշի կամ կարիլահեղուկ պարունակող մառախուղը:**

**738. Ինքնածառագայթող նուկլիններ-Ռադիոակտիվությունը հյուկան-Radioactivity-nucleide-Անկայուն քիմիական տարրերի միջուկներ, որոնք լիցքավորված մասնիկներ ու ճառագայթներ են արձակում: Մարդու օրգանիզմ ընկնելով՝ դրանք բայթայում են քիչները՝ առաջացնելով տարրեր հիվանդություններ, այդ բվում ճառագայթային: Չափման միավորն է գիվերտան: Մարդու համար մահացու ճառագայթային չափաքանակը 4 ԶՎ է, միջատների համար 1000 ԶՎ:**

**739. Ինքնամաքրում-*Սամօսաւառուս-Self-purification*-Միջավայրն աղտոտող նյութերի քայլայում ոչ կենսածին գործոններով և օրգանիզմների կենսագործունեության շնորհիվ:**

**740. Ինքնասուն-Ավտոռօֆ-*Ավտոտորի*-Արևի կամ քիմիական ռեակցիաների ընթացքում ազատվող էներգիայի հաշվին անօրգանական նյութերից կենսագործունեության համար անհրաժեշտ օրգանական նյութեր համադրելու (սինթեզելու) ունակ օրգանիզմներ: Դրանց բվում են բարձրակարգ բույսեր (մակարույժներից և փտարուսերից բացի), ջրիմուռներ, որոշ մանրներ և այլն: Սննդառության շղթայում համար վում են արտադրող:**

**741. Ինքնացիր-*Ավտոխօր-Ավտոչօռ-Բույս*, որի սաղմերը (պտուղները, սերմերը, սպորները) տարածվում են առանց կողմնակի ազդակների՝ մեխանիկական ինքնացրմամբ և ծանրության ազդեցությամբ:**

**742. Իոնացում-*Իոնուզագու-Իոնիզացիոն*-Բացասական լիցքավորված մասնիկներով կամ թերև իոններով օդը հարստացնելու միջոցով այն մաքրելու գործընթացը: Կանաչ տնկարկները մեծապես նպաստում են օդի իոնացմանը:**

**743. Իոնոլորտ-*Իոնոսֆերա-Իոնոսփեր*-Մթնոլորտի վերին շերտը, որը տարածվում է 50-80-ից մինչև մի քանի հազար կիլոմետր բարձրության վրա: Իոնոլորտի մասնիկներն առաջացնում են շատ նոսրացած և մեծ էլեկտրահաղորդիչ միջավայր: Կարևոր դեր է կատարում երկրագնդի վրա կարճ ռադիոալիքների տարածման գործում: Իոնոլորտում դիտվում են քեռափայլեր և իոնոլորտային մագնիսական փորորիկներ:**

**744. Իրավական գոյապահպանություն-*Правовая экология-Lawful ecology*- Հասարակության և բնության փոխազդեցության ոլորտում հասարակական հարաբերությունները կարգավորող իրավունքի տարրեր ճյուղերի ամբողջությունը սոցիալական գոյապահպանության կազմում: Գոյափակական ճյուղերից են բնառեսուրսայինները (հողային, լեռնային, ջրային, անտառային իրավունք) և բնապահպանական իրավունքը:**

տասնյակ մետրեր: Սովորաբար նկատվում է տափաստաններում և անապատներում (երբեմն անվանում են չոր մառախուղ):

584. Երկարակյաց բույս-**Դօլգութիւնության բույս-Lasting plant**-100 տարուց ավելի կյանքի տևողությամբ բույսեր: Ստորաբաժանվում են շատ երկարակյացների՝ 500 և ավելի (սերպոյա, կաղնի, տոսախ), երկարակյացների՝ 200-500 (լորենի, սոսի, հաճարենի), քիչ երկարակյացների՝ 100-200 (բարդի, ուռենի, կեչի, կաղամախի) տարի ապրողների:

585. Երկբևեռություն-**Բնուածություն-Bipolarity**-Տեսակի կամ կարգաբանական այլ խմբի տարածասահնանի տեսակ, որը բնորոշ է հյուսիսային և հարավային կիսագնդերի բարեխառն լայնություններին: Բացակայում է մերձարևադարձային և արևադարձային գոտիներում:

586. Երկեն-**Ճամփորդ-Ծիկոն-Diibiont**-Կյանքի ընթացքում երկու տարբեր միջավայրերում (օր: ջրում և օդում) ապրող օրգանիզմ:

587. Երկնքի գույն-**Լեռնա-Sky colour**-Անպերից ազատ երկնակամարի գույնը, որը դիտվում է երկրագնդի մակերևույթից: Ցերեկը երկինքը երկնագույն է: Բարձրության հետ երկնքի գույնը մնանում է: 30-40 կմ բարձրության վրա սկ է: Երկնքի գույնը պայմանավորված է երկրագնդի մընուլորտի գագերի մոլեկուլներից արևի լուսի ցրմամբ: Կարծալիք ճառագումը (կապույտ և մանուշակագույն ճառագայթներ) ցրվում է ավելի ուժեղ, քան երկարալիքը (դեղին և կարմիր ճառագայթներ): Այդ պատճառով էլ երկրագունդ հասնող ցրված լուսում տիրապետում է կապույտը:

588. Երկրաբույս-**Գեօֆիտ-Geophyte**-Բազմամյա բույս, որի վերականգնման բողոքները (կողմեցների, ստխուկների, պալարների վրա) գտնվելով հողի տակ, դիմանում են տարվա չորային կամ ցուրտ ժամանակաշրջաններին:

589. Երկրագնդի ջոային հաշվեկշիռ-**Վօնհամ բալանս-Land water balance**-Երկրագնդի մակերևույթին բափկող ջրի և ցամաքի ու ջամաշխարհային օվկիանոսի մակերևույթից գոլորշիացող ջրի քանակների հարաբերակցությունը որոշակի ժամանակահատվածում: Զրային հաշվեկշիռը երկրագնդի վրա ջրի շրջապտույթի քանակական արտահայտությունն է: Սերտորեն կապված է ջերմային հաշվեկշիռին և քանական գոտիների բնութագրման կարևոր ցուցանիշներից մեկն է:

590. Երկրագոյապահապանություն-**Գեօէկոլոգիա-Geocology**-Գոյապահապանության բաժին, որն ուսումնասիրում է բարձր ենթակարգային մակարդակների գոյահանակարգերը: Տեսն նաև Հանդշափտային գոյապահապանություն:

591. Երկրակենսուլորտ-**Գեօնօսփերա-Geobiosphere**-Կենսուլորտի ցամաքային մասը:

592. Երկրակյաց-**Գեօմերիդ-Geomerid**-Երկրագնդի վրա ապրող բոլոր կենդանի օրգանիզմների (այդ թվում՝ մարդկության) ամբողջությունը:

593. Երկրահամակարգ-**Գեօսիստեմ-Geosystem**-Երկրագնդի տարածք, որտեղ բնության առանձին բաղադրյամասերը միմյանց հետ համակարգային կապի մեջ են և որպես որոշակի ամբողջություն՝ ներգործում են տիեզերական ոլորտի ու մարդկային հասարակության վրա: Ինաստային առումով նոտ է գոյահամակարգին:

594. Երկրահամարժեքություն-**Գեօէկվավալենտություն-Geoequivalence**-Մշակվող լանդշաֆտի հարաբերակցությունը տեղում գոյություն ունեցած բնական լանդշաֆտին՝ ըստ նյութերի կազմի ու զանգվածի, նյութափոխանակության գործընթացների արդյունավետության, այդ թվում՝ ըստ էներգետիկ ցուցանիշների:

595. Երկրաշղթում-**Գեօտրոպամ-Geotropism**-Երկրագնդի ծգողականության ազդեցության տակ բույսերի օրգանների որոշակի դիրք ընդունելու հատկությունը (արմատը ներքև՝ դրական, գլխավոր ցողունը վերև՝ բացասական երկրաշրջում):

596. Երկրապտղություն-**Գեօկարուա-Geocarpy**-Մի խումբ բույսերի՝ պտուղների և սերմերի որոշ հեռավորության վրա հասունանալու և այդ միջոցով տարածվելու հատկությունը:

597. Երկրատեխնիա-**Geotechnia**-Բնատեխնիկական գիտության ճյուղ, որը մշակում է բնական գործընթացներին նպատակահարմար միջամտության սկզբունքները և եղանակները՝ նպատակ ունենալով ստեղծել լավագույն փոխազդեցություն հասարակության ու բնության միջև:

598. Երկրատեղ-**Geotop**-Լանդշաֆտում առանձնացվող բնական ամենափոքր համալիրը: Որոշ գիտնականների կարծիքով՝ Երկրատեղի հոմանիշներ են ֆացիան, կենսաերկրահամակեցությունը:

599. Երկրաքարաբնակ-**Geolithobiont**-Հողի վերին շերտում ապրող օրգանիզմները:

600. Երկրաքիմիական գոյապահպանություն-**Geochimical ecology**-Գոյապահպանության բաժին: Ուսումնասիրում է օրգանիզմների, դրանց համակեցությունների և Երկրաքիմիական միջավայրի փոխհարաբերությունները:

601. Երկրաֆիզիկական գործոն-**Geophysicai factor**-Անբողջ Երկրագնդի կամ որոշակի տեղամասի ֆիզիկական առանձնահատկությունների (օր.՝ մագնիսական դաշտի լարվածություն) ազդեցությունը:

602. Երկրորդային արդյունավետություն-**Вторичная продуктивность**-Secondary productivity-Գոյահամակարգի բոլոր օգտագործողների միավոր տարածության վրա միավոր ժամանակում արտադրած կենսազանգվածը և էներգիան:

603. Երկրորդային բուսականություն-**Вторичная растительность**-Secondary vegetation-Մարդու գործունեության կամ բնական աղետի հետևանքով ոչնչացած բնական առաջնայինի տեղում առաջացած բուսականությունը:

## Զ

604. Զագիր-**Gnat**-Թոչող Երկրանի արյունածության միջատների (մոծակներ, մժեղներ, մլակներ, պիծակներ), թրթուրանակաբույծների (բոռեր) և տիգերի ընդհանուր անվանումը:

605. Զարգացման փուլ-**Фаза развития**-Development stage-Օրգանիզմի կամ բնական համակեցության զարգացման որակապես տարբերվող ունակ վիճակ:

606. Զբոսարահետ-**Tуристическая тропа**-Touristic path-Զբոսաշրջիկների տեղաշարժման համար հատուկ ստեղծված կամ քարտեզի վրա նշված ճանապարհ:

607. Զգայունություն-**Чувствительность**-Sensitivity-Ծրջակա միջավայրի գործուների ազդեցությանը կենդանի օրգանիզմների հակագեղելու ունակությունը: Գործունի ամենափոքր ուժը, որն զգում է օրգանիզմը, զգայունությունն է: Ինչքան ցածր է ազդող գործոնի սահմանը, այնքան բարձր է օրգանիզմի զգայունությունը:

608. Չոռենթոս-**Zoobenthos**-տեսն կենդանաբենքու:

609. Չոռպլանկտոն-**Zooplankton**-տեսն կենդանապլանկտոն:

610. Չոռխոր-**Zoochor**-Zoochore-տեսն կենդանացիր:

611. Չոռֆագ-**Zoophage**-տեսն կենդանակեր:

612. Չոռֆիլիա-**Zoophilly**-տեսն կենդանափոշոտում:

845. Խոտային շարահարկ-Տրավոյճու յարս-*Herb layer*, *Field stratum*-Բարդ կառուցվածք ունեցող անտառային և թփային բուսահամակեցություններում խոտերից կազմված ստորին շարահարկը:

846. Խոտասպան-*Гербусциал-Herbicide*-Անցանկալի խոտաբույսերի (Երբեմն թփերի ու ծառերի) ընտրովի կամ լրիվ ոչնչացման համար օգտագործվող քիմիական նյութ: Մեծ խտության դեպքում վտանգավոր է մարդու և կենդանիների կյանքի համար:

847. Խոտհարք-*Сенокос-Haymaking*-Բնական կամ ցանովի խոտածածկով ու պարբերաբար հնձվող հողիանդակ:

848. Խորշակ-*Cyphosere-Dry wind*-Բարձր ջերմաստիճանով ( $20-25^{\circ}\text{C}$ ), փոքր հարաբերական խոնավությամբ ու խոնավության մեջ պակասորդով քամի: Բնորոշ է տափաստանային և կիսանապատային շրջաններին: Մեծ վնաս է պատճառում դաշտային մշակաբույսերին:

849. Խորոլոգիա-*Хорология-Chorology*-տես Տարածագիտություն:

850. Խոցելի տեսակ-*Уязвимый вид-Vulnerable species*-Բուսական և կենդանական այնպիսի տեսակներ, որոնց կազմաբնախոսությունը կամ վարքը նրանց դարձնում են կենսամիջավայրի փոքր փոփոխությունների կամ մարդու գոիեր:

851. Խոցելիություն-*Vulnerability-Oroganobiom*, լանդշաֆտի, գոյահանակարգի՝ արտաքին ազդակներին դիմակայելուն ունակ չլինելը:

## Ծ

852. Ծագումնաբանական բանկ-*Банк-Bank*-Բույսերի և կենդանիների վերացող տեսակների հետագա բազմացման համար ունակ սերմերի, խորը սառեցված հյուսվածքների, սեռական ու մարմնական քիշների պահեստարան: Գործնականում կարևոր են մշակաբույսերի և դրանց նախնիների սերմերը, որոնք անհրաժեշտ են ընտրասերման աշխատանքի համար: Աշխարհում կամ ավելի քան 40 սերմնային բանկեր:

853. Ծագումնաբանական իիմնապաշար-*Генетическая фонд-Gene pool*-Որոշակի ժառանգական տվյալներ (արիեստականորեն չվերարտադրվող կազմաբանական և բնախոսական յուրահատկություններ) ունեցող բուսական կամ կենդանական օրգանիզմների ամբողջությունը: Տեսակի (առանձնյակ, տեղախումբ) մահացումը կամ ոչնչացումը բերում է այդ տվյալների չվերականգնվող կորստի և ծագումնաբանական հիմնապաշարի աղքատացման:

854. Ծագումնաբանություն-*Генетика-Genetics*-Կենսաբանության բաժին, որն ուսումնասիրում է օրգանիզմի ժառանգականության և փոփոխականության երևույթներն ու օրինաչափությունները:

855. Ծածկման խտություն-*Плотность покрытия-Cover density*-Բույսերով հողի մակերեսի ծածկվածության աստիճանը:

856. Ծաղկանոց-*Цветник-Flower-garden*-Զբոսայգու, պարտեզի, պուրակի, փողոցի ծևավորման ծաղկագեղազարդային տարր: Զևավորման միջոցներից են եղրածուները, ծաղկաբերը կամ ծաղկային խնբերի ազատ տեղադրումը:

857. Ծաղկման օրացույց-*Календарь цветения-Flowering calendar*-Կենսաբանական առանձնահատկություններով, ֆենոլոգիայով և տեղանքի կլիմայով պայմա-

նավորված՝ ամբողջ վեգետացիայի ընթացքում գեղեցիկ ծաղկող բույսերի ընտրութուն: Նպատակ ունի ստեղծել հնարավորինս երկար ժամանակահատվածում ծաղկող առանձին հորինվածքներ:

858. Ծանրացիր-Բարօքօր-*Barochore*-Բույս, որը տարածվում է հասունացած սերմերը կամ պտուղները ծանրության ազդեցությամբ թափելով: Ինքնացիրների տարատեսակ է:

859. Ծանր մետաղ-*Tяжелый метал-Heavy metal*-8 հազար կգ/մ<sup>3</sup>-ից ավելի խտություն ունեցող մետաղ: Այդպիսիք են կապարը, պղինձը, ցինկը, նիկելը, կաղմինը, կորալտը, ծարիրը, անագը, բիսուտը, սնղիկը: Դաճախ դրանց ավելացնում են նաև մանգանը, երկարը և այլն: Դիմնականում թունավոր են:

860. Ծանր մետաղներով աղտոտում-*Загрязнение тяжелыми металлами-Pollution with heavy metals*-Երկրի տարբեր մասերում ծանր մետաղների կուտակման գործընթաց: Միջավայր էն բափանցում տարբեր ծանապարհներով (Սերքին այրման շարժիչների արտանետումներ, ջերմակեկտրակայաններ և այլն):

861. Ծանր ջուր-*Тяжелая вода-Heavy water*-Զրի տարատեսակ: Կազմված է ջրածնի ու բրվածնի ավելի ծանր իզոտոպներից: Գոյություն ունի ջրի 36 իզոտոպային տարատեսակ՝ պայմանավորված ջրածնի երեր և թթվածնի վեց իզոտոպներով: Բնական ջրերի ընդիանուր ծավալում ծանր ջուրը կազմում է 1/5000 մասը:

862. Ծառաբնակ-*Ксилообонк-Хиоблонт*-Ծառերի բնափայտում բնակվող օրգանիզմները:

863. Ծառաժամանակագրություն-*Дендрохронология-Dendrochronology*-Ծառերի տարեկան օղակների օգնությամբ պատմական իրադարձությունների և բնական երևույթների բվագրումը ճշտող գիտության ճյուղ:

864. Ծառակեր-*Ксилофаг-Хиорիդ*-Կենդանի, որը սնվում է փայտանյութով: Մարսնանք նպաստում են ծառակերների աղիքների պարզագույն օրգանիզմները կամ մանրեները:

865. Ծառանման բույս-*Древесистое растение-Woody plant, Lignous plant*-Բույս, որի վեգետատիվ մասերը փայտանում են և չեն մահանում տարվա ցուրտ կամ չոր ժամանակահատվածում: Բույսերի կազմաբանական դասակարգման կենսաձևերից մեկն է:

866. Ծառապարտեզ-*Арборетум-Arboretum*-Ծառաբնական պարտեզ, որտեղ երկայացված է երկրագնդի տարբեր գոտիների ծառաբույսերի բնահողում ազատութեն աճող և ձմեռող հավաքածուն: Բույսերի կլիմայավարժեցման աշխատանքների կենտրոն:

867. Ծառասպան-*Арборицид-Arboreicide*-Քիմիական նյութ, որն օրտագործվում է անցանկալի ծառային ու թփային բուսականության ոչնչացման համար:

868. Ծառուտ-*Древостой-Stand*-Տնկարկների, անտարի հիմնական մասը կազմող ծառերի ամբողջությունը: Տարբերում են բարդ, խառը, մացարուտային, մաքուր, պարզ, սերմնացան, վեգետատիվ ծառուտներ:

869. Ծիածան-*Радуга-Rainbow*-Մեկ կամ մի քանի բազմագույն աղեղների տեսքով օպտիկական երևույթ նբնուրուտում: Տեսանելի է երկնակամարում՝ մանրամաղ անձրևի ժամանակ: Պայմանավորված է անձրևի կաթիլներում լույսի բեկման և անդրադարձման գործընթացներով:

870. Ծլունակություն-*Влагоустойчивость-Capacity*-Բույսի (սովորաբար սերմի) հանգիստ վիճակում գտնվող սաղմի աճելու հատկությունը: Արտահայտվում է որոշակի պայմաններում ու տվյալ ժամկետում ծլած սաղմերի և փորձարկման համար վերցված քանակի տոկոսային հարաբերակցությամբ:

**871. Ծխամիջոց-Փուլգանտ-Fumigant**-Գոմերի, պահեստների, բնակելի շենքերի վարակագերծման կամ նակարույժների դեմ պայքարի թունավոր կամ վախեցնող պատրաստուկներ:

**872. Ծխամշուշ-Smog-Smog**-Մեծ քաղաքների և արդյունաբերական կենտրոնների օդի խիստ աղտոտվածությունը ծխի, գազերի, մառախուղի խառնուրդով: Գոյություն ունի Երկու տեսակ. խիտ մառախուղ՝ ծխի կամ արտադրության գազային մնացուկների խառնուրդով, և առանց մառախուղի՝ բարձր խտության կուկթեցուցիչ գազերի և օդալուծույթների ծածկ:

**873. Ծնելիության գործակից-Կօզֆիսիստ քոջաւոմուտ-Birth rate coefficient**-Նազար անհատի հաշվով ծնված առանձնյակների քանակը: Նույնն է նաև մարդկանց համար:

**874. Ծնելիություն-Քոջաւոմուտ-Birth rate**-Նարյուր կամ հազար բազմացող առանձնյակներից ծնվածների միջին թիվը ժամանակի միավորի ընթացքում:

**875. Ծովային կլիմա-Մօրսկօն կլիմա-Marine climate, Sea climate, Oceanic climate**-Բարեխառն լայնություններում ծովային, օդային զանգվածների տիրապետող ազդեցության տակ ձևավորվող կլիմա: Ամենից լավ արտահայտված է օվկիանոսների վրա, բայց բնորոշ է նաև մայրցամաքների (հատկապես Եվրասիայի և Հյուսիսային Ամերիկայի) արևմտյան մասերի համար: Բնութագրվում է տարվա և օրվա ընթացքում օդի ջերմաստիճանի համեմատաբար փոքր փոփոխությամբ: Աչքի է ընկնում ակտիվ ցիկլոնային գործունեությամբ, զով ամառով և տաք ձմեռով, տեղումների չափավոր քանակով, ոչ հաստատուն ծնածածկույթով:

**876. Ծովային պարկ-Մօրսկօն պարկ-Sea park**-Ազգային կամ բնական պարկ, որը ստեղծվել է ծովի մի հատվածի վրա: Սովորաբար ընդգրկում է մայրցամաքի և կղզիների ծովափնյա գոտին:

**877. Ծովի գոյապահպանական գոտիներ-Էկոլոգիկական զոներ-Sea ecological areas**-Օվկիանոսի կամ ծովերի բնական պայմաններով պարզորոշ տարրեր-վոլող խոչոր մասեր՝ առափնյա ծովահատակ (լիբորալ), բաց ծով (պելազիալ), խորքային (արխալ) և այլն:

**878. Ծովի գույն-Լւսետ մօր-Sea water colour**-Ծովի գույնը վերկից ճայելիս: Առաջանում է ջրում կախված կամ լուծված նյութերի մանրագույն մասնիկներից՝ լուսի անդրադարձման ժամանակ: Պայմանավորված է ջրում եղած մասնիկների քանակով և այլ պատճառներով: Որոշվում է Ֆորե-Ուլեի տիպօրինակ սանդղակի լուծույթների գույնի հետ համեմատելով: Բարեխառն գոտու ծովերում ջուրը սովորաբար կանաչ գույն ունի, արևադարձային ծովերում՝ երկնագույն, իսկ խոչոր գետերի գետաբերանների մոտ պղտորադեղին կամ դարչնադեղնագույն:

**879. Ծուռ անտառուտ-Կրիալեսի-Elfín woodland**-Ցածրահասակ (մինչև 10 մ), ստորին մասում ծռմզված բներով և ծյուղերով ծառերի թփուտներ: Բնորոշ են անտառուտներային (հիմնականում՝ ծովափերի մոտ), լեռնային անտառատուներային, նաև անտառի վերին սահմանին:

#### Կ

**880. Կադաստր-Կալաստր-Cadastré**-Օրյեկտների և երևույթների որակական ու քանակական տվյալները, դրանց սոցիալ-տնտեսական ու գոյապահպանական գնահատումն ընդգրկող ամփոփագիր: Կից լինում են քարտեզագրական ու վիճակագրական նյութեր: Կամ անտառային, հատուկ պահպանվող բնական օբյեկտների և

տարածքների, հողային, ջրային, ռեկրեացիոն, լանդշաֆտային, բժշկաշխարհագրական և այլ կադաստրներ:

881. Կազմալուծիչ-**Դիսլերսանտ-Dispersant**-Զուրը մաքրելու նպատակով նավթային շերտը քայլայող և կախույր կամ էնուկսիա դարձնող նյութ:

882. Կազմավորում-**Ֆորմացիա-Formation**-Բուսական համակեցության դասակարգման միավոր: Ներկայացնում է ասոցիացիաների խմբեր՝ ընդհանուր էղիֆիկատորի հետ:

883. Կայուն աղտոտիչ-**Ստուկամ չարթանութեալ-Stable contaminant**-Շրջակա միջավայրում դանդաղ քայլայվող, բնական շրջանառության մեջ չմտնող քիմիական նյութ: Կուտակվում է սննդային շրթաներում:

884. Կայուն զարգացում-**Ստումկասօթ բաշտուս-Sustainable development**-«Հասարակություն-բնություն» համընդհանուր համակարգի այնպիսի զարգացում, որն ապահովում է նարդկանց պահանջմունքներն առանց կենսոլորտի հիմնարար բնութագրող մեծությունները վնասելու, և սպառնալիք չի ստեղծում ապագա սերունդների պահանջնունքները բավարարելու համար:

885. Կայուն համակեցություն-**Ստումկասօթ սօօնքստօ-Permanence communication**, **Stable communication**-Երկարատև գոյություն ունեցող, ձևավորված համակեցություն, որի փոփոխությունները շատ դանդաղ են ընթանում (հարյուրամյակներ կամ հազարամյակներ): Որպես կանոն՝ մարդու կողմից փոփոխության չի ենթարկվել:

886. Կայունության ցուցիչ-**Ինդեքս ստումկասօթու-Stability Index**-Բազմամյա տվյալներով հաշվարկված կենսազանգվածի կամ առանձնյակների միջին քանակի փոփոխման գործակից:

887. Կանաչապատման չափ-**Խօրմա օչըլունիա-Standart planting with trees**-Բնակչության մեկ շնչին ընկնող կանաչապատ տարածքի ցանկալի նվազագույն քանակը՝ արտահայտված  $m^2$ -ով ( $500$  հազարից ավելի բնակիչ ունեցող քաղաքի համար՝  $21 m^2$ ,  $250-500$  հազար բնակիչ ունեցող քաղաքի համար՝  $14 m^2$  և այլն):

888. Կանաչապատում-**Օչըլունիս-Gardening**-Միջավայրի որակի բարելավման նպատակով բնակվայրերում, կառույցների և ճանապարհների շուրջը վայրի բույսերի և նշակարուսերի անեցում:

889. Կանաչ գոտի-**Յանուար զոնա-Green zone**-Պաշտպանական գոտու տարատեսակ, հողային տարածքի մաս, որն անտառային հիմնապաշարի կազմում է և զբաղեցված է անտառային կամ պաշտպանականաչապատող բուսականությամբ, տարածվում է խոչըն քաղաքների ու արդյունաբերական կենտրոնների շուրջը և շրջակա միջավայրի առողջացնան նպատակով ապահովված է հատուկ պահպանության գործելակարգով:

890. Կանաչ պարարտացում-**Յանուար զոնա-Green manuring**-Պարարտացման հատուկ ձև: Պարարտացվող հողամասում աճեցվում են տերևացողունային հարուստ զանգվածով բույսեր (մաշ, շամբալա և այլն): Ծաղկման շրջանում հողը հերկելով՝ բույսերը վարելաշերտի տակ են տալիս: Դրանք քայլայվելով՝ հողը հարստացնում են օրգանական նյութերով և ազոտով:

891. Կանիբալիզմ-**Կանիբալիզմ-Cannibalism**-Ներտեսակային գիշատչություն: Դաճախ առաջանում է տեղահմբի առանձնյակների կտրուկ շատացման, սննդի անբավարարության և այլ հետքերում: Ավելի բնորոշ է էգերին: Տեղախմբի կարգավորիչ գործոն է:

892. Կապտականաչ ջրիմուներ-**Սինեզունիս օձօրուս-Blue-green algae**-Անուշահամ ջրերի, ավելի սակավ՝ ծովային ու հողային ջրիմուներ: Դայտնի օրգանիզմներից ամենահինն են: Անշարժ միաբջիջ, գաղութային ու թելանման ձևեր են:

Բջջմներում բացակայում են ծևավորված միջուկը, քրոնատոֆորը, բջջայութրով վակուոլները: Կարող են օգտագործել նաև պատրաստի օրգանական նյութեր: Սուտավորապես 2000 տեսակ են: Որոշ տեսակների զանգվածային զարգացումն առաջացնում է ջրամբարների «ծաղկում», ձկների ոչնչացում: Այլ տեսակների զարգացումը նպաստում է ջրամբարների ինքնամաքրմանը:

**893. Կառուցողական նյութափոխանակություն-Կոնստրուկտուսին՝ մետաబուսմ-Constructusne metabolism-Նյութերի և էներգիայի օգտագործումը օրգանիզմի աճի ու զարգացման գործընթացներում:**

**894. Կատարելիզմ-Կատաబուսմ-Catabolism-տես Նյութաքայքայում:**

**895. Կատարորդինտ-Կաթարօբիոնտ-Katharobiont-տես Մաքրաբնակ:**

**896. Կարանտին-Կարանտին-Quarantine-1.** Մարդու և ընտանի կենդանիների վարակիչ հիվանդությունների տարածումն արգելակող միջոցառումներ: 2. Վտանգավոր վնասատուների, հիվանդությունների հարուցիչների, մոլախոտերի և անցանկալի տեսակների ներթափանցումը բացառող աշխատանքներ:

**897. Կարգաշեղում-Անոմալի-Anomaly-Չափաբաժնից կամ միջին արժեքից որևէ մեծության, գործոնի, երևույթի տատանումներ (դրական ու բացասական):**

**898. Կարգավորված գետ-Յարեցությունը ռեգուլարությունը-Regulated flow-Տնտեսական օգտագործման նպատակով կատարված ճարտարագիտական աշխատանքների շնորհիվ (օր.՝ ջրատեխնիկական կառույցների շինարարության ժամանակ) և գետաջրերի բնական կուտակիչների (օր.՝ լճերի) առկայության դեպքում:**

**899. Կարգավորված հոսք-Յարեցությունը ստոք-Regulated flow-Հոսք, որի ռեժիմը բնութագրվում է տարվա ընթացքում հարաբերականորեն հավասարաչափ բաշխմանք, նորմալ հորդացումներով և սակավաջրության ժամանակ հարաբերականորեն մեծ ծախսով: Առաջանում է ճարտարագիտական աշխատանքների հետևանքով (օր.՝ ջրատեխնիկական կառույցների շինարարության ժամանակ) և գետաջրերի բնական կուտակիչների (օր.՝ լճերի) առկայության դեպքում:**

**900. Կարծրաբույս-Ըկլերօֆիտ-Sclerophytes-Դաստի վերնաշերտով ծածկված կողտ տերևներով բույս (սոճի, շյուղախոտ և այլն): Ապրում են համեմատաբար չորացի պայմաններում:**

**901. Կարկուտ-Գրադ-Hail-Տարվա տաք ժամանակահատվածի տեղումներ: Թափվում են ամարոպի և տեղատարափ անձրևի ժամանակ՝ տօն, 5-55-ից մինչև 15-20 սմ (շատ բացարիկ դեպքերում) տրամագծով հոծ սառցակտորների ծևով: Խոշոր կարկուտը բնական աղետ է: ՀՀ տարածքի մեծ մասը ենթակա է կարկուտահարման:**

**902. Կարճատև ածանցվող անտառ-Կրոտկօրեմենո պրուզածոնի լես-Short-lived derivative forest-Անտառային համակեցության զարգացման փուլ: Այդ փուլը որոշող անտառային էղիֆիկատորները, որպես կանոն, միայն մեկ սերունդ են տալիս փոխարինվելով տևական ածանցվող կամ կլիմաքսային համակեցությամբ:**

**903. Կարճօրյա բույս-Racemous կօրոտիկո դիա-Short-day plant-Օրվա կարճատև լուսավոր մասի պայմաններում ծաղկող բույս: Այդ խմբի բույսերի համար օրվա լուսավոր մասի տևողության վերին սահմանը նոտ 14-15 ժամ է: Ավելի արագ են դրանք ծաղկում օրվա լուսավոր մասի 10-12- ժամանց պայմաններում: Կարճօրյա բույսեր են կորեկը, սորգոն, եգիպտացորենը, բրինձը, սոյան, քրիզանեները, գերոգենները, ծառատեսակներից եղրիզենին, ցիտրուսները:**

**904. Կարմիր գիծ-Կրասնая линия-Grade II-ne-Կառուցապատճան ու փողոցի, ինչպես նաև կառուցապատճան ու կանաչապատճան օբյեկտի տարածքի միջև սահմանային գիծ: Ունի կարգավորող նշանակություն:**

**905. Կարմիր գիրք-Կрасная книга-Red Data book-Ընդունված կարգով հաստատված՝ ծագումնաբանական հիմնապաշարի պահպաննան և հետագա վերար-**

տաղրման նպատակով հազվագյուտ, անհետացող կամ անհետացման վտանգի տակ գտնվող բույսերի և կենդանիների մասին ժամանակ առ ժամանակ հրատարակվող գիրք: Տարբերում են միջազգային և ազգային կարմիր գրքեր: Նախաձեռնել է Բնության ու բնական ռեսուրսների պահպանության միջազգային միությունը՝ 1966 թվականին:

906. «Կարմիր ձյուն»-„*Krasnyy sneg*”-„*Red snow*”-Ձյուն, որի գույնը պայմանավորված է վերին շերտում *Chlamydomonas nivalis* ջրիմուռների զանգվածային զարգացմամբ: Նկատվում է բարձրեռներում և մերձքեռային երկրներում (Գրենլանդիա և այլն):

907. Կարուտախստ-Հօստալեցի-*Nostalgia*-Դայրենիքի, սովորական ապրելակերպի հիվանդագին կարոտ: Արտահայտվում է օտարության մեջ բնակվելիս, բայց կարող է արտահայտվել նաև հայրենիքում՝ տնտեսական գործունեության կամ քաղաքական փոփոխությունների հետևանքով բնական միջավայրի կտրուկ փոփոխության ժամանակ:

908. Կեղտաջրեր-Сточные воды-Sewage water, Waste water-1. Արտադրության մեջ, կենցաղում կամ գյուղատնտեսության մեջ օգտագործված, աղտոտված տարածքով, այդ թվում բնակավայրով անցած ջրեր: 2. Մարդու կենցաղային և արտադրության գործունեությունում օգտագործվելուց հետո հեռացվող ջրեր: Ենթակա են մաքրման:

909. Կեղտաջրերի կենսաբանական մաքրում-Биологическая очистка сточных вод-Biological treatment sewage-Կեղտաջրերի մաքրման ամենից տարածված եղանակներից մեզը: Օրգանական նյութերի հանքայնացումը տեղի է ունենում ոչ խորը լճակներում միկրոօրգանիզմների օգնությամբ:

910. Կեղտաջրերի մաքրում-Очистка сточных вод-Waste water clean-up-Կեղտաջրերում գոյություն ունեցող օրգանիզմների, կախյալ և լուծված նյութերի հեռացումը տարբեր միջոցներով (մինչև բնականին մոտ վիճակին հասցնելը):

911. Կենավայր-Станция-Station-1. Միջավայրի ոչ կենսածին ու կենսածին որոշակի պայմանների ամբողջությամբ սահմանափակված վայր (ցամաքային և ջրային տարածք), որը կարող է ապահովել տեղախնդիր կամ տեսակի զարգացման ամբողջ բոլորապատույթը, բայց որտեղ տվյալ տեսակը գործնականում չի ապրում: 2. Կենսավայրի մաս (ապրում է առանձնյակը, ընտանիքը կամ տեսակը): 3. Ապրելավայրի մի մաս, որն օգտագործվում է կամ ոչ մշտապես (սեզոն, օրվա մաս), կամ սահմանափակ նպատակներով (կերակրում, բազմացում, աննպաստ պայմանների անցկացում): Այս իմաստով տարբերում են սեզոնային, բազմացման, կերակրման կենավայրեր:

912. Կենդանաբենքոս-Зообентос-Zoobenthos-Ջրամբարների հատակում կամ հիմնահողում ապրող կենդանի օրգանիզմների անբողջությունը:

913. Կենդանազանգված-Зоомасса-Zoomass-Գոյահամակարգերի բոլոր խմբերի կենդանիների գումարային զանգվածը: Սովորաբար կենդանազանգվածը փոքր է բուսազանգվածից:

914. Կենդանածնություն-Живородение-Viviparous-Սերնդի վերարտադրման եղանակ, որի դեպքում սահման զարգանում է մայրական օրգանիզմում: Բնորոշ է մարդուն, կաթնասուններին և որոշ այլ կենդանիների:

915. Կենդանակազմավորում-Зооформация-Zooformation-Մեկ բուսական կազմավորում զբաղեցնող, որոշակի կենդանական կազմ ու նույնանման գոյապահպանական պահանջներ ունեցող կենդանիների համակեցությունը: Ունի մի քանի գոյապահպանական և տարածքային տարբերակ:

**916. Կենդանակեր-Յօօֆար-Zoophage-Կենդանիներով սնվող օրգանիզմ (այդ թվում՝ բույս):**

**917. Կենդանահամակեցություն-Յօօպեհօզ-Zooceonosis-Որևէ տարածքի վրա շրջակա պայմանների ընդհանրության ազդեցությամբ ծևավորված կենդանիների տեսակների աճրողությունը: Կենսահամակեցության գործառնական մասն է:**

**918. Կենդանաշխարի (կենդանական աշխարի)-Փայնա-Fauna-Որևէ տեղանքին կամ երկրաբանական որևէ դարաշրջանին բնորոշ կենդանական տեսակների ամբողջությունը: Ստեղծվում է էկոլոգիայի ընթացքում տարբեր ծագման կենդանիներից:**

**919. Կենդանաշխարիային համալիր-Փայնուսուսկամ կոմոլեքս-Faunistic complex-Նույն տարածաշրջանում առաջացած և գոյապահպանական նման յուրահատկություններ ունեցող կենդանիների տեսակների խումբը:**

**920. Կենդանապլանկտոն-Յօօռլանկտոն-Zooplankton-Ձրի շերտում ազատորեն լողացող բուսակեր մասն օրգանիզմների աճրողությունը:**

**921. Կենդանասեր-Յօօֆալ-Zoophile-Մնկեր, բույսեր և միկրոօրգանիզմներ, որոնք նախընտրում են ապրել կենդանիների կուտակման վայրերում կամ բնակատեղերում (օր.՝ մրջնանոցների մոտ և այլն):**

**922. Կենդանասպամ-Յօօպամ-Zooctide-Կենդանիների ոչնչացման համար նախատեսված կենսածին և քիմիական նյութեր:**

**923. Կենդանացիր-Յօօառֆ-Zoochore-Բույս և սունկ, որոնց սաղմերը (պտուղներ, սերմեր, սպորներ) տարածվում են կենդանիների միջոցով՝ կեր կուտակելու, բների ու որչերի կառուցման և այլն ժամանակ:**

**924. Կենդանափոշուում-Յօօֆալիա-Zoophily-Բույսերի փոշուումը կենդանիների, թռչունների, նեղունների միջոցով:**

**925. Կենդանիների գոյապահպանություն-Էկոլոգիա խաւոտինք-Animals ecology, Zooeology-Գոյապահպանության բաժին: Ուսումնասիրում է կենդանիների ապրելակերպը՝ պայմանավորված գոյության պայմաններով ու կենդանի օրգանիզմների հիմնական գործունեությունների (սնուցում, քազմացում, կենսակայունություն, քանակի տատանումներ և այլն) համար շրջակա միջավայրի գործոնների նշանակությամբ:**

**926. Կենդանիների նիշավորում-Մեկնու խաւոտինք-Marking of animals-Կենդանիների պիտակավորում օղակներով, ներկերով, չիպերով, խարանմամբ և այլն: Դնարավորություն է տալիս բնական միջավայրում գտնել առանձնյակին կամ առանձնյակների խնդիրն, հետևել դրանց տեղաշարժերին, կյանքի փոփոխություններին ու տևողությանը և այլն:**

**927. Կենդանիների և բույսերի գաղթ-Միգրացիա խաւոտինք և բաշունը-Migration of animals and plants-Ապրելակայրի կենսապայմանների փոփոխմամբ կամ զարգացման լիաշրջանով պայմանավորված՝ կենդանիների և բույսերի տեղաշարժ տարածության մեջ: Տարբերում են պարբերական (օղական, սեղունային), ոչ պարբերական (երաշտի, հրդեհների, հեղեղների և այլն ժամանակ), պասսիվ (ծովային հոսանքների, քամու և այլն միջոցով) և ակտիվ գաղթ: Բույսերի միգրացիան (օր.՝ բուսավանկունի) միշտ պասսիվ է:**

**928. Կենդանի նյութ-Համա անդամություն matter-Երկրագնդի վրա գոյություն ունեցող կենդանի օրգանիզմների աճրողությունը՝ անկախ կարգաբանությունից: Կենդանի նյութի ընդհանուր չոր զանգվածը գնահատվում է  $3,9 \cdot 10^{12}$  տ:**

**929. Կենսաբանական աղտոտում-Բնուօրոշչական չարգանություն-Biological pollution-Պատահականորեն կամ մարդու գործունեության հետևանքով տվյալ համակեցություններին օտար կամ սովորաբար բացակայող տեսակների ներթափանցումը:**

**930. Կենսաբանական արդյունավետություն-Բնուօգնության պրոդյուսիվունություն**-1. Միավոր տարածքում և միավոր ժամանակում տեղախմբի կամ համակեցության արտադրած կենսազանգվածը: 2. Տերմինի սխալ, բայց գրականության մեջ հանդիպող օգտագործում. տնտեսապես արժեքավոր օրգանիզմների զանգվածի ավելացում միավոր տարածքում և միավոր ժամանակում:

**931. Կենսաբանական արտադրանք-Բնուօգնության պրոդյուսիվություն**-Այս կամ այն համակեցության օրգանիզմների արտադրած օրգանական զանգվածի քանակը (կենսազանգվածը) միավոր ժամանակի (սովորաբար տարվա) ընթացքում, միավոր տարածքում (ցամաքային, հատակային կենսահամակեցությունների համար) կամ որոշակի ծավալով (ջրային և հողային կենսահամակեցությունների համար): Կախված է ջերմության և խոնավության ապահովածությունից, կենսահամակեցությունում հանքային սննդանութերի պարունակությունից:

**932. Կենսաբանական բազմազանություն-Բնուօգնության միջամտություն**-**Biological diversity-Oxygen**-Օդային, ջրային և ցամաքային գոյահանակարգերի օրգանիզմների բազմատեսակությունը: Ընդգրկում է ներտեսակային, միջտեսակային և գոյահանակարգերի բազմազանությունը: Կենսաբանական բամազանությունն իրագործվում է բնական միջավայրում (արգելավայր, արգելոց և այլն) և բնական միջավայրից դուրս (բուսաբանական ու կենդանաբանական այգիներ և այլն):

**933. Կենսաբանական եղանակներով քայլայփող աղտոտիչ-Բարձրացման բնուօգնության մեջ աղտոտություն**-**Biologically methods of contamination destruction**-Բնական շրջանառության մեջ արագ անհետացող կամ մաքրման համակարգերում կենսաբանական մեթոդներով մաքրվող աղտոտիչները:

**934. Կենսաբանական ժամացուց-Բնուօգնության ժամացուց**-**Biological clock-Oxygen**-Օրգանիզմների ժամանակի փոփոխություններին և երևույթներին արձագանքելու բնախտական մեխանիզմները:

**935. Կենսաբանական խոչընդոտ-Բնուօգնության պրեգրամ-Block**-**Biological**-**Block-Oxygen**-Օրգանիզմների տարածման ճամապարհին կենսաբանական խոչընդոտ (գիշատիչ, մրցակցություն, մակարույժ, սննդի բացակայություն):

**936. Կենսաբանական համակարգ-Բնուօգնության սահմանագծ**-**Biological system**-Կառուցվածքային և գործառնական մի քանի կազմավորումների մակարդակներ ու նեցող տարրեր բարդության կենսաբանական գոյացություններ (քիչներ, օրգաններ, օրգանների համակարգեր, կենսահամակեցություններ, գոյահանակարգեր):

**937. Կենսաբանական շրջապտույտ-Բնուօգնության շրջապտույտ**-**Biological cycle**-Երկրագնդի վրա նյութերի շրջապտույտը, որն ապահովում է օրգանիզմների կենսագործունեությամբ: Կանաչ բույսերն ու ինքնասուն մանրեներն արտադրում են օրգանական նյութ, որն օգտագործում են կենդանիները և որոշ ոչ կանաչ բույսեր, իսկ մանրեներն ու սնկերը օրգանական նյութերը վերածում են հանքային նյութերի դրանք նորից նատչելի դարձնելով կանաչ բույսերի համար:

**938. Կենսաբանական ռեսուրսներ (պաշարներ)-Բնուօգնության ռեսուրսներ**-**Biological resources**-Մարդկության համար անհրաժեշտ նյութական և հոգեկան բարիքների ստացման աղբյուրներ և նախադրյալներ (մշակաբույսեր, ընտանի կենդանիներ և այլն): Քանակապես վերականգնվող են, սակայն որակապես վերականգնվել չեն կարող:

**939. Կենսաբանական ռիթմ-Բնուօգնության ռիթմ**-**Biological rhythm**-Կենսաբանական գործընթացմերի կամ երևույթների ուժգնության և բնույթի լիաշրջան տատանումներ: Դիտվում է գրեթե բոլոր կենդանիների և բույսերի մոտ: Դնարավորություն է տալիս օրգանիզմներին հարմարվել շրջակա միջավայրի փոփոխություններին (օրա-

կան, սեզոնային և այլն): Ժառանգականորեն ամրացած է և բնական ընտրության ու հարմարվողականության կարևոր գործոններից մեկն է:

940. Կենսաբանական տարրապատկեր-**Բնօլոգիչесկան շուտոր-Life-form spectrum**-Տվյալ բուսաշխարհի տարբեր կենսաձևերի տեսակների տոկոսային հարաբերակցությունը:

941. Կենսաբանորեն քույլատրելի արտանետում-**Բնօլոգիչесկան-ձուստման ենթածովություն**՝ **discharge-Biochemical** միջավայրի աղտոտում, որը չի հանդեցնում կենդանի օրգանիզմների տեսակային կազմի և քանակի փոփոխմանը:

942. Կենսագագ-**Biogas**-Գյուղատնտեսական (գոմադր, հարդ և այլն) կամ օրգանական կենցաղային բափունների ցեղովողային անօդակյաց օրգանիզմների կողմից (ներանային խմորնան մանրէներ) քայլայման ընթացքում առաջացող զագերի (ներան, ածխաթրու գազ, ազոտ, ջրածին, թթվածին, ծծմբաջրածին) խառնուրդ: Կենսագագի արդյունաբերական ստացման եղանակները հայտնի են 19-րդ դարի վերջից: Ներկայումս նորից հետաքրքրություն է առաջացրել՝ կապված էներգետիկ ճգնաժամի հետ:

943. Կենսադադար-**Anabiosis**-Կենդանի օրգանիզմի վիճակ, երբ կտրուկ պակասում է նյութափոխանակությունը, և բացակայում են կյանքի տեսանելի դրսերությունները: Որոշ տեսակների հնարավորություն է տալիս անցկացնել կյանքի անքարենպաստ ժամանակահատվածները (ձմեռ, խիստ չորային և այլն): Բարենպաստ պայմանների դեպքում կենսագործունեության բնականոն վիճակը վերականգնվում է:

944. Կենսադաշտ-**Biosphere**-Կենդանի օրգանիզմների գործունեության դաշտ, որտեղ դրսերություն են կենսական էներգետիկ գործընթացներով պայմանավորված էներգետական երևությունը:

945. Կենսաերկրահամակեցագիտություն-**Բնօրգանոլոգիա**-**Biogeoecology**-Գիտություն կենդանի և անկենդան բնության փոխկապված և փոխազդող համալիրների՝ կենսաերկրահամակեցությունների և դրանց միագումարության՝ կենսոլորտի մասին:

946. Կենսաերկրահամակեցություն-**Բնօրգանոզ**-**Biogeoecogenesis**-Միատիպ բուսական համակեցությունը՝ իր կենդանական աշխարհով (ներառյալ մանրէները): Երկրի մակերևույթի որոշակի տարածքի սահմաններում առկա է յուրահատուկ միկրոկիմա, երկրաբանական կառուցվածք, հողածածկ, ջրային ռեժիմ: Այստեղ օրգանիզմների միջև ստեղծվում են բազմաթիվ կապեր և գոյության լավագույն պայմաններ: Կենսաերկրահամակեցության օրգանիզմների տեսակներն եվոլյուցիայի ընթացքում այնքան են հարմարվում միջյանց, որ նպաստում են իրենց կայունության ու լավագույն կառուցվածքի պահպանանը: Կենսաերկրահամակեցություն կազմող օրգանիզմները ոչ բեր տարբեր տեսակի կենդանիների ու բույսերի առանձնյակներ են, այլ տեսակների տեղախմբեր, այսինքն՝ այն մի կենսաբանական համակարգ է, որը գործում է որպես մի ամբողջություն ու շրջակա միջավայրի փոփոխության հետ ունակ է ինքնակարգավորվելու և լավագույն չափով պահպանելու քանակը:

947. Կենսաերկրաքիմիական լիաշրջան-**Բնօրգանոմիկան պահ**-**Biogeochemical cycle**-Երկրի վրա կյանքի բոլորապատույտի մի մասը: Քիմիական նյութերի (գլխավորապես ածխաթրվի, ջրի, ազոտի, ֆոսֆորի, ծծմբի և կենսածին կատիոնների) փոխանակային լիաշրջանների ամբողջությունն է:

948. Կենսաերկրոլորտ-**Բնօրգանոսфера**-**Biogeoosphere**-ևս «Կյանքի քաղաք»:

949. Կենսագագված-**Biomass**-Մակերևույթի միավորին կամ բնակատեղի ծավալին ընկնող մեկ տեսակի, տեսակների խմբերի կամ ամբողջ համակեցու-

բյան առանձնյակների ընդհանուր զանգվածը: Արտահայտվում է խոնավ կամ չոր նյութի զանցվածով (գ/մ<sup>2</sup>, կգ/հա, գ/մ<sup>3</sup> և այլն): Կենսազանցվածը հնարավորություն է տալիս գնահատել ցամաքի կամ ջրատարածքի արդյունավետությունը, որոշել կենդանիների որսի հնարավորությունը և այլն: Տարբերում են բույսերի (բուսազանցված) և կենդանիների (կենդանազանցված) կենսազանցվածներ:

950. Կենսազանցվածի աճ-Որոքում նսուաս-**Biomass Increase**-Ընտրված օբյեկտի (բուս, կենդանի), տեղախմբի կամ համակեցության կենդանի նյութի քանակի ավելացումը միավոր ժամանակահատվածում: Արտահայտվում է քաշի միավորով:

951. Կենսազտիչ-**Բնօֆակտոր-*Biotic Factor*-Ակտիվ բնական** (պոլիպներ, սպունգներ) կամ արհեստական (օր.՝ եղեգ) օրգանիզմներով ստեղծված զոտող նյութի շերտ կեղտաջրերի մաքրման կայանի տարածքում: Գործում է այդ շերտով մաքրվող զանցվածների աստիճանական անցնան սկզբունքով:

952. Կենսաէներգետիկա-**Bioenergetics-1**. Կենսավառելիք (ջրիմություններ, արագած ծառեր և այլն) օգտագործող էներգետիկա: 2. Գիտության ճյուղ, որն ուսումնասիրում է քիչների, առանձնյակների, գոյահամակարգերի և այլնի կենսագործունեության ընթացքում էներգիայի կուտակման, ծևափոխման և ըստ կենսաբարադրամասների բաշխման մեխանիզմներն ու օրինաչափությունները:

953. Կենսաթաղանթ-**Բնուուրք-*Biocover*-Խոնավ ժառերի վրա, նավամբարներում, նավահանգստային շինություններում, խոշոր ջրային կենդանիների նաշկի վրա և այլուր ապրող կենդանի օրգանիզմների (մանրէներ, ջրիմություններ, պոլիպներ և այլն) շերտ:**

954. Կենսալիաշրջան-**Կազմոհիմնային պուլ-*Life cycle*-Կյանքի զարգացման փուլերի ամբողջությունը. օրգանիզմը հասունանում, սերունդ է տալիս, ծերանում և մահնում է: Օրինակ՝ միամյա խոտաբույսի կենսալիաշրջանը ունի հետևյալ փուլերը. սերմերի ծլում, վեգետատիվ օրգանների զարգացում, ծաղկում, սերմերի հասունացում և ցրում, բույսի մահացում:**

955. Կենսածագության արանական օրենք-**Բնօգենետիկական օրենք-*Biogenetics law*-Օրգանիզմն անհատական զարգացման ընթացքում կրկնում է (կրծատված ու փոփոխված տեսքով) այդ տեսակի պատմական զարգացումը:**

956. Կենսածագության-**Բնօստրոմա-*Biotostrome*-Կենդանի նյութի շերտ, ըստ Վ. Վեռնադսկու՝ «Կյանքի թաղանթ», կենսոլորտի ամենագործունյա հորիզոննը, որտեղ կենտրոնացած է կենդանի օրգանիզմների հիմնական զանցվածը, և տեղի են ունենում ամենից ակտիվ փոխազդեցությունները գոյապահպանական բոլոր գործունների միջև:**

957. Կենսածին գործուններ-**Բնուուրքական ֆակտորներ-*Biotic factors*-Միջավայրի գործունները, որոնք պայմանավորված են կենդանի բաղադրամասների ազդեցությամբ: Օրինակ՝ առանձին բույսերի կամ բուսական համակեցությունների գոյությունը՝ կապված այլ բույսերի և կենդանիների կենսագործունեության հետ (ստվեր, համարնակություն, բուսահողի առաջացում և կուտակում, սերմերի կենդանացրում և այլն): Երբեմն կենսածին են համարում և մարդածին գործունները:**

958. Կենսածին միջավայր-**Բնուուրքական սրածակում-*Biotic environment*-Ժամանակակից օրգանիզմների կենսագործունեության շնորհիվ առաջացած բնության ուժեր և երևույթներ:**

959. Կենսածին ներուժ-**Բնուուրքական ուժուածուալ-*Biotic potential-1***. Տեսակի միջավայրի անբարենպաստ պայմաններին ժառանգական հնարավորություններով դիմակայելու ունակությունը: 2. Օրգանիզմների ժառանգական ունակությունը ավելի միջակայելու ունակությունը:

լացնելու իրենց թվաքանակը երկրաչափական պրոգրեսիայով:

960. Կենսածին նյութ-Բնօրենիօտ առաջարկություն-**Bioactive material**, Nutrient-1. Օրգանիզմների կենսագործունեության (բայց ոչ անպայման դրանց մարմինների մասը կազմող) հետևանքով առաջացող քիմիական միացություններ: 2. Կյանքը պահպանելու համար անհրաժեշտ քիմիական տարր կամ միացություն: 3. Օրգանիզմների կողմից ստեղծվող և վերամշակվող նյութ:

961. Կենսածին փոխանակության մեջ շրջան-Բոլշայ կրց նաոտակացակաց օբյեկտ-**Biospheric exchange cycle**-կենսուրութի վերականգնվող գոյապահպանական համակարգերը ձևավորող նյութերի, տեղեկատվության և էներգիայի անհավասարաչափ, բայց օրինաչափ վերաբաշխման չղաղարող գործընթացը:

962. Կենսածին փոխանակության փոքր շրջան-Մալայ կրց նաոտակացակաց օբյեկտ-**Biogeosocioecological exchange cycle**-գոյապահպանական տարրական համակարգը կենսաերկրահամակեցությունը, ձևավորող նյութերի, էներգիայի և տեղեկատվության մի մասի վերաբաշխման չղաղարող, բայց ժամանակային իմաստով անհավասարաչափ գործընթացը:

963. Կենսակայունություն-**Survival rate**, Survival value-1. Շրջապատող միջավայրի պայմաններում օրգանիզմի, տեղախմբի կամ տեսակի պահպանման աստիճանը: Դաճախ ընկալվում է պատճականորեն կամ էվոլյուցիայի ընթացքում, այսինքն՝ դիտվում է ժամանակի հարաբերականորեն երկար հատվածում, բայց ավելի հաճախ հետազոտվում է սեզոնի կամ անբարենպաստ գործոնի ազդեցության սահմաններում (ցրտադիմացկունություն, երաշտակայունություն և այլն): 2. Որոշակի ժամանակահատվածում տեղախմբում պահպանված առանձնյակների թիվը (տոկոսներով):

964. Կենսականորեն ակտիվ նյութ-**Biological active matter**-Ցանկացած նյութ, որը խթանում կամ ճնշում է կենսագործունեության գործընթացները, այդ թվում՝ օրգանիզմի վերականգնումը և աճը: Դրանցից են բուսահորմոնները, խոտասպանները և այլն:

965. Կենսականություն-**Viability**-կենդանիների օրգանիզմների շատ կամ քիչ կայունությունը շրջապատող միջավայրի պայմանների տատանումների նկատմամբ: Ընդգրկում է բազմացման ունակության և ուժգնության աստիճանը, մրցունակությունը միշտեսակային ու ներտեսակային հարաբերություններում, շրջակա միջավայրի պայմաններին հարմարվողականությունը և այլն:

966. Կենսակարգ-**Образ жизни-Mode of life**-Որևէ տեսակի կամ տեղախմբի առանձնյակների առնչությունը գոյության ոչ կենսածին պայմաններին, ուրիշ տեսակներին և իր տեսակի կամ տեղախմբի մյուս առանձնյակներին: Փոխվում է ըստ սեզոնների և առանձնյակների կյանքի ընթացքում կազմում է համապատասխան լիաշրջաններ: Ապահովում է առանձնյակների կենսաբանական ամբողջ շարքի ավարտման հաջողությունը և, հետևապես, տեսակի գոյության անընդհատությունը:

967. Կենսակլիմա-**Биоклимат-Bioclimatic**-1. Օրգանիզմների և նրանց համակեցությունների ստեղծած միկրոկլիման: Կենսակլիմայի հզոր առաջացնողներն են ծառարփերը, անտառը: Յուրաքանչյան կենսակլիմա է ստեղծվում որշերում, բներում և կենդանիների այլ կացարաններում: 2. Կլիմայական յուրահատկություններ, որոնք ազդում են կենդանի օրգանիզմների, այդ թվում՝ մարդու վրա:

968. Կենսակլիմայագիտություն-**Биоклиматология-Bioclimatology**-Գիտություն մարդու, կենդանիների և բույսերի հիմնականում մշակաբույսերի, կենսական գործընթացների և գործառնությերի վրա կլիմայական գործոնների ազդեցության մասին:

969. Կենսակլիմայական օրենք-**Биоклиматический закон-Bioclimatological law**:

Օրենք, որը սահմանում է բույսերի սեզոնային գարգացման ժամկետների միջին կախվածությունները տվյալ վայրի աշխարհագրական լայնությունից և երկայնությունից, ծովի մակարդակից ունեցած բարձրությունից: Ծրջակա միջավայրի այլ գործների միանմանության դեպքում Յուսիսային Ամերիկայի բարեխառն գոտում բնության սեզոնային երևույթների սկսման ժամկետները աշխարհագրական լայնության յուրաքանչյուր 10, աշխարհագրական երկայնության 50 և բարձրության մոտ 130 մետր անցնելիս ուշանում է 4 օր: Յեղինակը Ա. Յովիքինսն է:

970. **Կենսահամադրում-Բնօսիութեա-Մաքուր** օրգանական նյութերի առաջացումը պարզ միացություններից: Կատարվում է կենդանի օրգանիզմներում կենսակատալիզատորների ազդեցությամբ և որոշվում է ծագումնաբանական տեղեկատվությամբ: Սիկրոօրգանիզմների կողմից իրագործվող կենսահամադրումն օգտագործվում է վիտամինների, որոշ հորմոնների, հակարիտիկների, ամինաթթուների, ինչպես նաև կերային սպիտակուցների արդյունաբերական ստացման նպատակով:

971. **Կենսահամակ-Բնօմ-Բլում-1.** Գոյահամակարգային խոշոր ենթաքաժին բնակիմայական կամ բնական գոտու սահմաններում: 2. Խոշոր չափի ցամաքի կամ ջրատարածքի, կենսահամակեցության կամ մի քանի կենսահամակեցությունների կենդանի օրգանիզմների ամրողությունը:

972. **Կենսահամակարգի կայունություն-Ստոմկաստ**՝ **բնօսւումը-Resistance of biosystem**-Դանակեցության, տեսակի, տեղախմբի, օրգանիզմի ներքին և արտաքին գործոնների ազդեցությունից կառուցվածքային ու գործառնական առանձնահատկությունները պահպանելու ունակությունը:

973. **Կենսահամակեցութագիտություն-Բնօւունուուգա-Բնօօէոնոլոգի-Կենսահամակեցությունների մասին գիտություն**, որն ընդգրկում է դրանց կարգաբանությունը, կառուցվածքը, ծագումը, զարգացումը, տարածության ու ժամանակի մեջ տեղաբաշխումը:

974. **Կենսահամակեցություն-Բնօւունուուց-Բնօօէոնոսի-Կենսուլուրի համասեռ հատվածում գոյություն ունեցող և միջյանց, ինչպես նաև միջավայրի ոչ կենսածին գործոնների հետ որոշակի կապերով բնութագրվող բույսերի, կենդանիների, միկրոօրգանիզմների ամրողությունը:**

975. **Կենսածես-Կանոնակա ֆորմա-Life form, Biomorph-Որոշակի գոյապահպանական պայմաններին հարմարվելու օրգանիզմների տիպեր:** Նույն կենսածեսի տեսակներն ունեն կառուցվածքի և գոյապահպանության նման յուրահատկություններ: Նույն կենսածեսին կարող են պատկանել կարգաբանական տարրեր խմբերի նույնանման պայմաններում ապրող տեսակները, օրինակ՝ կարճակյացները, չորաբույսերը և ֆաներաբույսերը:

976. **Կենսամաքրում-Բնօօւստիկա-Биоクリен-սր-Զրերից ու հողերից օտար կամ վնասակար տարրերի հեռացումը կենդանի օրգանիզմների օգնությամբ, որը նպաստում է այդ խառնուրդների քամվելուն կամ քայլայմանը և միջավայրի սկզբնական հատկությունների վերականգնմանը:**

977. **Կենսամեթոդ-Բնօմեթոդ-Ծրջակա միջավայրի և մարդու վնասատությունների ոչնչացման նպատակով կատարվող պայքարի կենսաբանական եղանակ:** Վնասատուի ոչնչացման կամ բազմացման ունակությունից գրկելու համար օգտագործվում են մասնագիտացված գիշատիչները, մակարուցները կամ բուսակերները:

978. **Կենսամիջավայր-Բնօօրեա-Բնօօնիուուուու-Օրգանիզմների համակեցությամբ ստեղծված կամ ձևավորված միջավայրը:** Որպես կանոն՝ որոշվում է տեսակ-որոշչների ոչ մեծ թվով: Ստեղծում է բարենպատ պայմաններ տվյալ կենսաերկրա-

համակեցության տեսակների համար:

979. Կենսանավավարություն-**Բնօհանագույշ-Blonavigation**-Կենդանիների, բռչումների և ծկների ու լնակությունը՝ սեղոնային զաղթերի ժամանակ գտնելու իրենց բազմացման և ձմեռելու վայրերը, մշտական բնակատեղը, ինչպես նաև ընտրելու շարժման ուղղությունը: Դա կատարվում է երկրի նազնիսական դաշտի, արևի, աստղերի, մթնոլորտի ճնշման ու ջրի ջիմիական կազմի փոփոխությունների և այլ կողմնորոշչների շնորհիվ:

980. Կենսանշանացույց-**Բնօւնակամոր-BlonIndicator**-Օրգանիզմ, տեսակ կամ համակեցություն, որի առկայությամբ կամ վիճակով, ինչպես նաև վարքով դատում են միջավայրում տեղի ունեցած փոփոխությունների, այդ բվում աղտոտող բաղադրամասերի առկայության ու միջավայրի աղտոտման աստիճանի մասին: Կենսանշանացույցների թվին են պատկանում նաև բուսատեսակներ կամ համակեցություններ, որոնց տարածումը պայմանավորված է միջավայրի որոշակի յուրահատկություններով: Դա էլ հնարավորություն է տալիս այդ կենսանշանացույցներն օգտագործել օգտակար հանածոների որոնման և հետախուզման համար:

981. Կենսաշահաթաքանակ-**Բնօծօզ-Blodose**-Ուլտրամանուշակագույն ճառագայթման նվազագույն տևողություն, որի ընթացքում (24 ժամ անց) առաջանում է մարդու մաշկի թույլ կարմրություն: Տևողությունը կախված է ուլտրամանուշակագույն ճառագայթման ուժգնությունից և որոշվում է փորձնական ճանապարհով:

982. Կենսասպան-**Բնօզուլ-Blodode**-Ջիմիական պատրաստուկ, որն ունակ է ոչնչացնելու ողջ կենդանականը բավական մեծ տարածքների վրա:

983. Կենսաստրոմ-**Բնօստրոմ-Bluestrome**-տես կենսածածկոց:

984. Կենսասուն-**Բնօտրօֆ-Blotroph**-Ուրիշ կենդանի օրգանիզմներով սնվող օրգանիզմ:

985. Կենսավառելիք-**Բնօտոլավօ-Blotuel-1**. Ցանկացած կենսազանգված, որն այրվելով էներգիա է արտադրում (փայտ, տորֆ, ջրիմուռներ և այլն): 2. Նույնը ավելացրած կենսազանգվածից ստացվող նյութեր (սպիրտներ, կենսագազ): 3. Օրգանական թափոններ (աղբ, գոնադր, ծերտ, թեփ և այլն), որոնք խմորման ընթացքում ջերմություն են անջատում ու կարող են ջերնոցներ և այլ նմանատիպ օբյեկտներ տաքացնել:

986. Կենսավատրարացում-**Բնօւերագրավաց-Blodegradation**-Սյուրերի կամ օրյեկտների հատկությունը փոխելու իր կառուցվածքը (որակը) կենսաբանական գործուների ազդեցությամբ: Սովորաբար նշանակում է օգտակար հատկությունների կորուստ:

987. Կենսատարածություն-**Բնօչոռ-Blochore**-Կենսատեղերի ամբողջությունը (օր. կավային, ավազային, աղուտային և քարային անապատների կենսատեղերի ամբողջությունը կազմում է անապատների կենսատարածությունը, անուշահամ ջրամբարների տղմոտ, ժայռոտ, ավագոտ հատակների կենսատեղերի ամբողջությունը անուշահամ ջրամբարների հատակի կենսատարածությունը և այլն):

988. Կենսատարածք-**Կազմակերպություն-Life space**, *Life area*-1. Տվյալ տեղախմբի կամ տեսակի մեկ օրգանիզմին հասնող տարածքը, որը, որպես կանոն, գոյապահպանական խորչի, կենսավայրի կամ գոյատեղի սահմաններում է (սովորաբար նկատի է առնվում կենսատարածքի այն նվազագույնը, որն ապահովում է օրգանիզմի բնականոն գոյությունը տեղախմբի կազմում): 2. Տարածք, որն անհրաժեշտ է մեկ մարդու գոյության համար (սննողի արտադրում, մշակաբույսերի աճեցում, արդյունաբերություն, վերականգնողություն):

989. Կենսատեխնիկա-**Բնօտեխնիկա-Blotechnika**-1. Կենսատեխնիկական աշխա-

տանքներ՝ հողիանդակների տնտեսական արտադրողականության ավելացման միջոցառումներ, որոնք ուղղված են որոշ շահագործվող օբյեկտների կամ համակեցությունների համար միջավայրի բարելավմանը, բայց որը չի բերում բնական համակարգերի, գյուղատնտեսական համակեցությունների արմատական վերափոխմանը:

2. Որսագիտության բաժին, որն ուսումնասիրում է որսորդական հողիանդակների կենսաբանական արդյունավետությունը և տնտեսական արտադրողականությունը:

990. **Կենսատեխնոլոգիա-Բιոտեխնոլոգիա-Biotechnology-1.** Կենսաբանության և տեխնիկայի միջև գտնվող սահմանային գիտություն և գործնական ոլորտ, որն ուսումնասիրում է մարդու շրջակա բնական միջավայրի փոփոխությունների ուղիներն ու եղանակները: 2. Կենսաբանական տարրերի օգնությամբ մարդու համար օգտակար մթերքի և երևույթների ստացման եղանակների ու ձևերի ամբողջությունը (օր.՝ միկրոօրգանիզմների օգնությամբ կերպային սպիտակուցների արտադրություն, կենսագույների օգնությամբ կեղտաջրերի մաքրում և այլն): Որոշ կենսատեխնոլոգիական ձեռնարկություններ դասվում են ծայրահեղ վտանգավոր և վնասակար արտադրությունների թվին: Դա հատկապես վերաբերում է այն ձեռնարկություններին, որոնց արտանետման նյութերից են ժառանգականության նյութի պատահիկները:

991. **Կենսատեղ-Բιոտող-Biotope-Օրգանիզմների գոյամիջավայրի համար միանման պայմաններով հատված, որը ձևավորվել է կենսահամակեցությամբ գոյատեղի վրա ազդեցու հետևանքով: Տարածք, որտեղ զարգացել է կենսաերկրահամակեցությունը (անապատային ավազներ, անուշահամ ջրամբարի տղմոտ հատակ և այլն):**

992. **Կենսափոխարկում-Բιօկոնվերտօն-Bioconversion-Ազրոգոյահամակարգում** բուսական օրգանական զանգվածը կենդանականի փոխադրումը: Դրա արդյունավետությունը չափվում է 1 կգ կենդանական սպիտակուց ստանալու համար անհրաժշտ բուսական սպիտակուցի քանակով: Օրինակ՝ 1 կգ տավարի միս ստանալու համար պահանջվում է 20 կգ բուսական սպիտակուց, մսատու հավի 1 կգ-ի համար՝ 8 կգ և այլն:

993. **Կենսաբաղաբակենտրոնություն-Բιոօրգանիստիկա-ճարտարապետության բաժին:** Նպատակ ունի ստեղծել կենսամիջավայր, որտեղ ներդաշնակորեն կը նդգրկվի տեղական բնությունը լրացված և զարգացված ճարտարապետական մեթոդներով:

994. **Կենսոլորտ-Բιոսֆերա-Biosphere-Երկրագնդի բաղանքներից մեկը, որը ձևավորվել է մոլորակի էվոլյուցիայի ընթացքում և բնութագրվում է կյանքի առկայությամբ:** Օրգանիզմների ակտիվ գոյության ոլորտ (ընդգրկում է մթնոլորտի ստորին հատվածը, ջրոլորտը և քարոլորտի վերին նասը): Շատ փոփոխական ու ակտիվ ոլորտ է: Դրա կենդանի մասը (չոր օրգանական նյութ), ըստ Վ. Վեռնադսկու հաշվարկների, կազմում է երկարակեղևի 0,00001%-ը (կենդանի մասի շուրջ 97%-ը բուսական 3%-ը՝ կենդանական օրգանիզմներ են):

995. **Կենսոլորտային արգելոց-Բιոսֆերի զառաօդությունը**

1. Բնության խիստ պահպանվող ընդարձակ տարածք, որը գործնականում չի ենթարկվում մարդու կողմից վերափոխված շրջապատող լանդշաֆտների ազդեցությամբ: Կենսոլորտային արգելոցի տարածքում բնական միջավայրի բաղադրամասերի հաշվեկշռի պայմաններում տեղի են ունենում դարավոր ժառանգական և էվոլյուցիոն գործընթացներ: 2. Տարածք, որտեղ սարքերով կամ կենսանացույցների օգնությամբ դիտարկվում են բնական միջավայրի մարդածին փոփոխությունները:

996. **Կենսոլորտի գոյապահպանություն-Էկոլոգիա նոսօնք-Биосфера-Biosphere ecoLOGY-Երկրագնդի ամբողջ կենսոլորտի գոյապահպանությունը:**

997. **Կենսոլորտի էներգետիկա-Էներգետիկա նոսօնք-Биосфера-Biosphere energetics-**

1. Էներգետիկ գործընթացները գոյահամակարգերում: 2. Առանձին օրգանիզմների էներգետիկան: 3. Կենդանի նյութում հականներփոխիչ գործընթացները: 4. Կենսոլորտի և տիեզերքի միջև ջերմային ու էներգետիկ հաշվեկշիռը:

998. Կենսոլորտի ռեսուրսներ (պաշարներ)-**Resources** ճառագործություն-**Resoures**-Կենսոլորտի սահմաններում կենդանի օրգանիզմների ուղղակի կամ անուղղակի միջամտությամբ առաջացած բնական ռեսուրսները (ձկներ, անտառներ, հողեր, ածուխ, նավթ, տորֆ, ջյուղատնտեսական արտադրանք և այլն):

999. Կենսույթ-**Բնույթ**-1. Տվյալ տարածքում ապրող կենդանի օրգանիզմների պատմականորեն ծևավորված համալիրը (օր: կենսահամակարգի կենսույթ): 2. Պատահական ընտրված տարածաշրջանում ապրող օրգանիզմների միագումարությունը՝ անկախ դրանց միջև եղած գործառնական կամ պատմական կապերից (օր: կարչական շրջանի կենսույթ):

1000. Կենսունակություն-**Viability**-1. Անհատի կամ տեղախմբի ծագումնաբանությամբ պայմանավորված՝ ապրելու և սերունդներ տալու առանձնահատկությունը: 2. Արտաքին անբարենպաստ պայմաններում գոյությունը պահպանելու օրգանիզմի հատկությունը:

1001. Կենցաղային աղմուկ-**Հայտօօմ աղմ-Domestic noice**-Ռադիոտեխնիկական, կենցաղային աղմուկ: Ընդհանուր մակարդակը շենքերում ցերեկը չպետք է գերազանցի 40, իսկ գիշերը՝ 30 դԲ:

1002. Կեչու անտառ-**Berezesovayn leс-Birch forest**-Կեչու: Կեչու տիրապետմանը երկրորդային կամ, ավելի սակավ, առաջնային ծագման անառնականաչ մանրատերև անտառ:

1003. Կերպափոխություն-**Heterozie**-Առաջին սերնդի խաչասերվածների աճի արագացում, չափսերի մեծացում, ծնողական ծերի համեմատությամբ կենսակայունության ու պտղաբերության ուժեղացում: Երկրորդ և հաջորդ սերունդներում սովորաբար այն պակասում է: Լայնորեն օգտագործվում է բուսաբուծության ու անանապահության մեջ, օրինակ՝ որևէ մշակաբույսի բարձր բերքատվություն ունեցող խաչասերված սերմեր ստանալու համար:

1004. Կիսաանապատ-**Պոլուցումնայ-*Semi-desert*, Halfdesert**-Չորային կլիմայի պայմաններում ծևավորվող լանդշաֆտի տեսակ, որն աչքի է ընկնում անտարի բացակայությամբ, բուսածածկում և հողածածկում տափաստանային և անապատային լանդշաֆտների տարրերի ներդաշնակությամբ:

1005. Կիսաթուփ-**Պոլուցումքարնակ-Undershrub**-Բազմամյա բույս, որի ընծյուղների միայն ստորին մասերն են փայտանում ու ծմեռում (վերին մասերը խոտային են և ամեն տարի աշնանը մահանում են): Բույսերի կազմաբանական դասակարգման կենսածներից է:

1006. Կիսախոնավ կլիմա-**Семигумидны́й климат-Semihumid climate**, **Subhumid climate**-Անհրաժեշտից պակաս տեղումներ ունեցող կլիման: Բնորոշ է տափաստանային և անտառափաստանային բուսականություն ունեցող տարածքներին:

1007. Կիսածածկաբույս-**Гемикриптофիտ-Hemicryptophyte**-Երկրամերձ, բողբոջաբեկուկների տակ, բույսերի մահացած մասերի և հաճախ ծյան տակ ծմեռող վերականգնման բողբոջներով բույսեր: Կիսածածկաբույսեր են բարեխառն լայնությունների երկանյա և բազմամյա խոտերը (գորտնուկներ, խատուտիկներ, զանգակածաղիկներ և այլն): Այլ գոտիներում ավելի քիչ են հանդիպում:

1008. Կիսամակաբույս-**Պոլուպարաստ-Semiparasite**-Բույս, որն ապրում է այլ բույսերի գլխավորապես ծառերի հաստ ճյուղերի խեչակներում ու բների վրա: Ունի

յուրացման մակերես, ինչպես նաև ձևափոխված ծծիչ արմատներ՝ այլ բույսերից ջուր և լուծված հանքային աղեր վերցնելու համար: Բնորոշ է արևադարձային և մերձարևադարձային վայրերին:

1009. Կիսաշոր կլիմա-**Семиаридны́ климат-Semiarid climate**-Բարեխառն լայնությունների (օր.՝ Միջին Ասիայի) անապատներին բնորոշ կլիման:

1010. Կիսատեսակ-**Полувл-Semispecies**-Աշխարհագրական կամ գոյապահպանական ռասա: Կազմաբանական, աշխարհագրական կամ գոյապահանական, երբեմն էլ վերականգնողական տեսակետից այնքան է մեկուսացած, որ կարելի է համարել երիտասարդ տեսակ:

1011. Կիրառական գոյապահպանություն-**Прикладная экология-Applied ecology**-Բնական ռեսուրսների և գոյության միջավայրի օգտագործման, դրանց վրա բույլատրելի ծանրաբեռնվածությունների, տարրեր ստորակարգության մակարդակի գոյահամակարգերի ղեկավարման ծերերի, տնտեսության գոյապահպանացման եղանակների չափանիշների մշակումը: Յիմնվում է գոյապահպանության և բնապահպանության օրենքների, կանոնների և սկզբունքների համակարգի վրա:

1012. Կլանում-**Абсорбция-Absorption**-Կարծր մարմինների և հեղուկի՝ լուծություններից կամ գազերից տարրեր նյութերի կլանումը: Կարևոր դեր ունի գոյահամակարգերի նյութափոխանակության մեջ:

1013. Կլիմայագիր-**Климатограмма-Climagram**-Կլիմայի որևէ երկու տարրերի (օր.՝ ջերմաստիճանի և տեղումների) տարեկան ընթացքի գծագրական պատկերում:

1014. Կլիմայական գործոն-**Климатические факторы-Klimatic factor**-Կլիմայի բնույթը որոշող գործոն. աշխարհագրական լայնություն, ծովի մակարդակից ունեցած բարձրություն, լեռնազրություն, սառցածածկ, ձնածածկ, բուսածածկ, օվկիանոսյին հոսանքներ, օվկիանոսից ունեցած հեռավորություն և այլն:

1015. Կլիմայական չափ-**Климатическая норма-Climatic standard**-Կլիմայի քանակական բնութագիրը: Ստացվում է բազմամյա դիտումների շարքից: Կլիմայական չափ կարող են լինել օդերևութաբանական տարրի միջին մեծությունը ամսվա, սեզոնի, տարվա ընթացքում, դրա բազմամյա ծայրագույն նշանակությունները, միջին կրկնողությունը և այլն:

1016. Կլիմայական սահման-**Климатическая граница-Climatic divide**-Երկրային սահման, որի երկարությամբ կլիմայական պայմանները կտրուկ փոխվում են: Ամենից հաճախ դա լեռնազրական արգելք է (օր.՝ Մեծ Կովկասի Գլխավոր լեռնաշղթան) կամ մակերևույթի կտրուկ փոփոխվող ջերմային պայմաններով գոտի (օր.՝ ցամաքը և ծովը):

1017. Կլիմայավարժում-**Акклиматизация-Acclimatization**-Մարդուն օգտակար օրգանիզմներով բնական համակեցությունը հարստացնելու նպատակով նախկինում այդտեղ չեղածների կանխամտածված ներմուծումը ու գոյության նոր պայմաններին հարմարեցումը:

1018. Կլիմայի մարդածին փոփոխություն-**Антропогенное изменение климата-Climatic anthropogenic change**-Մարդու տնտեսական գործունեությամբ պայմանավորված տեղական կլիմայի և միկրոկլիմայի փոփոխությունը: Երկրի մակերևույթի (անտառների ոչնչացում, անտառատնկումներ, հողերի վարում, տարածքի չորացում, ոռոգում, կառուցապատում և այլն) կամ մթնոլորտի հատկությունների (օդի տաքացում արդյունաբերական ջերմային սարքերով, ածխաբթու գագի կուտակման մեծացում և այլն) փոփոխման հետևանք է: 21-րդ դարում ծեռք է բերում համընդհանուր բնույթ:

1019. Կլիմաքս-**Клима克斯-Climax**-Սուրցեսիայի եզրափակիչ փուլը: Բուսական

համակեցություն, որն ապրելատեղի միջավայրի հետ հարաբերական համապատասխանության և շարժընթաց հավասարակշռության մեջ է: Հատ դանդաղ է փոխվում:

1020. Կլիմաքսային բուսականություն-**Կլամակօվայա բաշխութեալ հոգածութեալ**-Սուլքեսիայի փոփոխությունների գործընթացում կլիմայական պայմանների ու միջավայրի կենսածին և ոչ կենսածին բաղադրամասերի ու գործոնների հետ լրիվ համապատասխանության հասած և հարաբերականորեն դանդաղեցված էվոլյուցիոն զարգացումը շարունակող բույսերի համակեցությունը:

1021. Կլորառդասպան-**Նեմատօւծ-Նեմատօւծ-Կլոր** որդերի ոչնչացման համար օգտագործվող նյութեր:

1022. Կղանքակեր-**Կորոֆագ-Соргрофаг-Оրգանիզմ**, որը սնվում է հիմնականում կարնասունների արտարորանքով: Օրինակ՝ կոյաբզեզները, մի շարք ճանճերի թրուլուրը և այլն:

1023. Կմախքային հողեր-**Скелетные почвы-Skeletal soils, Stony soils-**Դիմնականում լեռնային ապարների բույս հողմահարված, 3 մմ-ից խոշոր չափերի բեկորների, միներալների և մանրահողի խառնուրդից կազմված հողերը: Բնորոշվում են ջրի, օդի և ջերմության բարձր թափանցելիությամբ:

1024. Կյանք-**Ժաշին-Life-Եյութի** շարժման առանձնահատուկ ձև: Բնորոշվում է ինքնավերարտադրմանը, ինքնազարգացմանը, ինքնակարգավորմանը, հարմարվողականությամբ, շրջակա միջավայրի հետ ենթագիայի և նյութափոխականությամբ:

1025. Կյանքի գոյապահպանական տևողություն-**Էկոլոգիկական պրոցեսականություն** ժաշին-**Ecological duration of life-Stress** կամ առանձնյակների առավելագույն տարիքը շրջակա միջավայրի բնական պայմաններում: Որպես կանոն՝ մի քանի անգամ փոքր է կյանքի տեսակային տևողությունից:

1026. «Կյանքի թաղանթ»-«,Պլունկա ժաշին»-«,Vitaephore»-Կենդանի նյութի շերտ, կենսուրուսի գրեթե ամբողջ կենդանի նյութը իր մեջ կենտրոնացրած կենսահամակեցությունների միագումարությունը:

1027. Կյանքի կենսաբանական սահմաններ-**Биологические границы жизни-Biological boundaries of life**-Ակտիվ կյանքի ամենաբարենպաստ պայմանները: Այն բավական նեղ սահմաններում է: Կենսաբիմական ռեակցիաների մեծամասնությունը տեղի է ունենում 0-50° C ջերմաստիճանային միջուտում: Լուսափնեցը տեղի է ունենում 6-40° C սահմաններում: Գրեթե ամբողջ կենդանի նյութը կենտրոնացված է 150-200 մ բարձրության և ծովում մինչև 200 մ խորության վրա:

1028. Կյանքի ճնշում-**Давление жизни-Life pressure**-Բազմացման ներուժի և միջավայրի այնպիսի հարաբերություն, որը խոչընդոտում է բազմացման իրականացումը երկրաչափական առաջընթացով: Կենդանի նյութի ստեղծման արագությունը Վ. Վեռնադսկին արտահայտել է  $2^n = N$  բանաձևով (ո-ը բազմացումից սկսած օրերի թիվն է,  $n$ -ը՝ առաջընթացի ցուցանիշը՝ միաբժիշների մեկ օրվա սերունդների քանակը,  $N$ -ը՝ ո օր հետո օրգանիզմների քանակը):

1029. Կյանքի որակ-**Կառեսօ ժաշին-Life quality**-Ծրջակա միջավայրով բավարպելու (առողջություն ապահովող) անհատական ցուցանիշ, որը դիտվում է բնական, բնասոցիալական, սոցիալ-տնտեսական տեսանկյունով: Կարևոր նշանակություն ունի ժողովրդագրական գործընթացներում: Սովորաբար կյանքի ցածր որակը մեծացնում է ծննդիությունը:

1030. Կյանքի պայմաններ-**Условия жизни-Life conditions**-Մարդու ապրելու բնական և սոցիալ-տնտեսական յուրահատկությունների, այդ թվում հանրայնացման գործընթացի ամբողջությունը:

1031. Կյանքի տևողություն-**Продолжительность жизни-Life longevity**-Տարբե-

րում են բացարձակ, տեսակային և գոյապահպանական կյանքի տևողություն: Բացարձակն առանձին օրգանիզմի գոյատելու ժամանակն է (ծնվելու պահից մինչև մահը): Տեսակայինը միջին առավելագույն այն հասակն է, որին հասնում են տվյալ տեսակի առանձնյակները բարենպաստ պայմաններում: Գոյապահպանականը տեսակի առանձնյակների բնական պայմաններում ապրելու միջին սահմանային հասակն է:

1032. Կոացերվատ-Կօպերվատ-Coacervat-տես Կուտակ:

1735. **Վերացում-Extinction**-Ցանկացած բուսական կամ կենդանական տարօտնի (սկսած ենթատեսակից) ոչնչացումը էկուուրցիայի կամ մարդու կանխանական տարածքում գործունեության հետևանքով: Վերացված համարվում է այն խումբը կամ տեսակը, որն իրենից հետո սերունդ չի թողնում: Ոչնչացման արագությունը (հատկապես՝ արևադարձային անտառների) կտրուկ աճել է: Որոշ տվյալներով՝ 1-5 տեսակ՝ օրվա ընթացքում, այլ տվյալներով՝ միջինը տարեկան 20-30 տեսակ, այդ թվում՝ ողնաշարավոր կենդանիների 1 տեսակ կամ ենթատեսակ վերանում են երկրագնդի վրայից: Բույսերի և կենդանիների վերացման ժամանակակից արագությունը 10000 անգամ բարձր է, քան դիմոզավերի բնաշնչան ժամանակ:

1736. **Վերաօգտագործում-Recolonization**-Դողի պտղաբերության վերականգնումը տեխնածին (օր.՝ բաց եղանակով հանքարդյունահանում և այլն) խախտումից հետո:

1737. **Վերերկրյա շարահարկություն-Nadzemnaya grusnost'-Aerial levelling**-Արևի լույսի նկատմամբ տարբեր պահանջնումը ունեցող բույսերի բաշխումն ըստ շարահարկերի: Վերին շարահարկերի բույսերը լուսասեր են, լավ են հարմարված ջերմաստիճանի ու խոնավության տատանումներին: Դրանց սաղարթի տակ ստեղծվում են թույլ լուսավորվածության, կայուն ջերմաստիճանի ու խոնավության պայմաններ: Ստորին շարահարկերը ծևավորված են ավելի ստվերասեր տեսակներով:

1738. Վերերկրուորտ-Եռուցօսֆերա-Երկարագություն-Արտաքին երկրաբաղմանը: Տերմինն առաջարկել է Ա.Գ. Իսաչենկոն «Աշխարհագրական թաղանք» տերմինի փոխարեն: Լայն տարածում չի ստացել:

1739. Վերիամակարդ-Նացիստոմ-Երևան-Ստորակարգության ավելի բարձր համակարգ, քան գործառնությամբ դրա մասը կազմողը (օրգանիզմը վերիամակարդ է օրգանի, հյուսվածքի, քչի նկատմամբ):

1740. Վերպելագիալ-Եռուուագաւալ-Երթելագլալ-Օվկիանոսի բարակ շերտը (մինչև 15 մ) մքնուորտի հետ շփման սահմանում: Զրային խոշոր օրգանիզմների գոյատեղ է:

1741. Վրարային արտանետում-Ավարսների վաճառք-Accidental discharge-Տեխնոլոգիական գործընթացների խախտման կամ արտադրական վրարի հետևանքով աղտոտող նյութերի մուտքը մարդու շրջակա տարածք:

1742. Վիրուս-Վիրուս-Մանրագույն ոչ բջջային մասնիկներ՝ վիրուսպորմեր, որոնց սպիտակուցային քաղանքում պարփակված են նուկլինաթթուների: Բազմանում են միայն կենդանիների ու բույսերի թիզներում: Առաջացնում են վտանգավոր հիվանդություններ (գրիպ, ծաղկախտ, դարադ և այլն):

1743. Վնասակար գործոն-Վրանի ֆակտոր-Harmful factor-Որոշակի պայմաններում աշխատողի առողջությունը վատացնող տեխնոլոգիական ազդեցությունը:

1744. «Վնասակար» տեսակ-„Վրանի” вид-„Harmful” species-Մարդուն տնտեսական վնաս պատճառող կամ հիվանդություններ առաջացնող տեսակ: Դարաբերական հասկացություն է: տեսակը մեկ տեղում կարող է լինել տնտեսապես, բարոյապես կամ սոցիալապես անցանկալի, մեկ այլ տեղում օգտակար, կարող է բացասական ենք խաղալ մեծ թվաքանակի դեպքում և կարևոր դրական նշանակություն ունենալ տեղախմբի միջին կամ բույլ խոտության դեպքում: Օրինակ՝ գայլը, հատկապես խիտ բնակեցված երկրներում մեծ թվաքանակի դեպքում վնասակար տեսակ է, բայց օգտակար է բույլ բնակեցված երկրներում կամ շրջաններում, հատկապես արգելոցներում, որտեղ սանհիտարի դեր է կատարում ոչնչացնելով վայրի հիվանդ կճղակավոր կենդանիների: Դաշտային կրծողները և վնասատու միջատներն անշամ թվաքանակի դեպքում նպաստում են կենսաբանական մթերատվության, իսկ երբեմն էլ բույսների բերքատվության ավելացմանը:

1745. Վրակեն-Եռոնկա-Երկեդ-Օրգանիզմների համակեցության ծել: Խոշոր օրգանիզմների վրա ապրում են ավելի մանրերը:

## S

1746. Տամնոբիոնտ-Տամնոբիոնտ-տեսակ Թփաբնակ:

1747. Տայգա-Տայգա-Taiga, Boreal forest-Բարեխասոն գոտու փշատերև, երբեմն էլ մանրատերև անտառ: Տարբերում են մութ փշատերև (եղևնի, եղկին, մայրի) և լուսավոր փշատերև (սոճի և խեժափիճի) տայգա:

1748. Տանիքապարտեզ-Սադ և կրաքար-Roof garden-Շենքերի տանիքների լցովի հողաշերտով սահմանափակ հատված՝ ծառերի, բիւրի, խոտաբույսերի աճեցման համար:

1749. Տասը %-ի օրենք-Յակոն 10 %-օս-Law of 10%-Էնեգիայի (կամ էներգետիկ արտահայտությամբ՝ նյութի) միջինը 10 - 20 % -ի անցումը գոյապահպանական բուրդի մի սնուցողական մակարդակից մյուսին: Սովորաբար չի առաջացնում գոյահանակարգի համար աննպաստ հետևանքներ:

1750. Տարաբնակեցում-Рассеяние-Dispersal-Տեսակի տարածասահմանից

դուրս օրգանիզմների տարածվելը:

1751. **Տարալվացում-Երօևոն-Երօնային** ապարների և հողի քայքայումն ու մասնիկների տեղափոխումը մի տեղից մյուսը: Պատճառ են դառնում գլխավորապես ջուրը, քամին, միջավայրի աղտոտվածությունը և այլն: Զրային տարալվացնան հետևանքով երկրի մակերևույթի վրա առաջանում են ռելիէֆի գծային դատարկ ձևեր հովհանքներ, ձորակներ, հեղեղատներ և այլն: Տեկտոնական գործոնի հետ որոշակի կապի դեպքում տարածի միջին բարձրությունը որոշակի փուլում իջնում է:

1752. **Տարածագիտություն-Խօրոլոգի-Chorology**-Գիտություն բույսերի և կենդանիների տեսակների, ցեղերի, ընտանիքների տարածասահմանների մասին: Ուսումնասիրվում են տարածասահմանների չափերը, ձևերը, տիպերը, առաջացումն ու զարգացումը, հետքներաց փոփոխությունները և այլն:

1753. **Տարածաշրջան-Քողուն-Region-Խոշոր** տարածքային միավոր: Ֆիզիկաաշխարհագրական, մի քանի վարչական կամ այլ բնական սահմաններով սահմանափակված ցանկացած խոշոր տարածք:

1754. **Տարածասահման-Առեալ-Area, Range-Որևէ** առանձնյակի, տեսակի կամ երևոյիք տարածման սահմանը: Կենսաշխարհագրության հիմնական հասկացություններից մեկն է: Որևէ տեսակի (ցեղ, ընտանիք) գոյատարածքը:

1755. **Տարածման արգելք-Բարեր** *распространеная-Distrіbutіonal barrier-Տեսակի կամ համակեցության տարածման ճանապարհին եղած ցանկացած արգելք:*

1756. **Տարածքային մարդագոյահմանակարգ-Տերրուրալнаѧ անտրոպո-էկոսистемա-Area anthropococesystem-Գոյապահպանական համակարգի** տարատեսակ, որտեղ մարդը կենտրոնական տարրն է «տանտեր», իսկ համակարգի մյուս տարրերը դիտվում են որպես «տանտիրոց» շրջակա միջավայր:

1757. **Տարասուն-Գետերորօֆ-Нетеротропіє-Оրգանիզմ**, որը սննդի համար օգտագործում է ինքնասմվողների պատրաստի օրգանական նյութերը: Դրանք կենդանիներ են, մանրեներ, սնկեր և այլն:

1758. **Տարամիտում-Ճաւերգնույթ-Divergence-1.** Էվոլյուցիայի ընթացքում հատկանիշների ճյուղավորում, որն առաջանում է կարգաբանական կամ տիպաբանական նոր կատեգորիաներ: 2. Արտաքին կամ ներքին պատճառների հետևանքով մի համակեցության բաժանվելը երկու մասի:

1759. **Տարատեսակ-Բազումնություն-Variety**-Կազմաբանորեն և որոշ այլ հատկանիշներով առանձնացող կարգաբանական միավոր ենթատեսակի կազմում:

1760. **Տարափոխ-Сукцессия-Succession-տես Սուլքեսիա:**

1761. **Տարեկան աճ-Годичный прирост-Annual Increment-1.** Բուսահամակեցության (բնական, մշակովի), կենդանիների տեղախմբերի և առանձնյակների կշռի, զանգվածի տարեկան ավելացումը: 2. Մեկ տարում կազմաբանախոսական շերտի (ծառի բուն, ուսկոր, ատամ) առաջացումը:

1762. **Տարեկան ոիք-Годичный ритм-Annual rhythm-Տարվա ընթացքում օրգանիզմների, տեղախմբերի, համակեցությունների և գոյահամակարգերի վիճակի ու գործունեության փոփոխումը: Օրգանիզմները և տեղախմբերը փոխում են ամի ու զարգացման տեմպերը, համակեցությունները և գոյահամակարգերը՝ տեսույթները, արոյունավետ գործունեության տեմպերը, ընդհանուր վիճակը, այդ թվում նաև հողերի վիճակը: Այլ կերպ անվանում են նաև սեզոնային ոիք:**

1763. **Տարեկան սուլքեսիա-Годовая сукцессия-Annual succession-Տարվա ընթացքում բուսականության տարրապատկերի հերթափոխումը:**

1764. **Տարերային աղետ-Շտամանություն-բացտաւություն-Natural catastrophe, Natural disaster-Ցանկացած ավերիչ բնական ու մարդածին երևոյթ (երկրաշարժ, ջրհեղեղ,**

հրաբխի ժայթքում, երաշտ, վնասատուների զանգվածային բազմացում և այլն): Տարերային աղետների մեջ ամենից վտանգավոր են հաճարվում (ըստ ՄԱԿ-ի տվյալների) մրրիկները (հատկապես՝ արևադարձային), երկրաշարժերը, ջրհեղեղները, ցունամիները: Ոչ պակաս հետևանքներ ունեն երաշտները և անապատացումը:

### 1765. Տարրական լանդշաֆտ-Elementary landscape

1. Ամենափոքր բնատարածային հաճալիրը, որը համապատասխանում է աշխարհագրական ֆացիային (կամ ենթաֆացիային), իսկ կենսածին բաղադրամասի առկայության դեպքում՝ կենսաերկրահամակեցությանը: 2. Լանդշաֆտի երկրաքիմիայում համապատասխանում է ծևաբանական ֆացիային կամ դրա մի մասին: Կախված նյութի տեղափոխման տիրապետող ռեժիմից տարբերում են ողողատային, տարանցիկ և կուտակման սկզբնական լանդշաֆտ:

1766. Տարրական տեղախումբ-Elementary population-Կենսաերկրահամակեցությունների առանձին ծևաբանական մասերի բնակչությունը, որոնք չունեն ուրույն գծեր, բայց առանձնանում են վարդի ինքնատիպությամբ:

1767. Տափաստան-Csteppe-Սովորաբար չորասեր, հոծ կամ գրեթե հոծ խոտածածկով (առանց ծառերի) բուսականության տեսակ:

1768. Տափաստանացված մարգագետին-Osteoperennens լուց-Steppe meadow-Հոծ խոտային բուսականության տեսակ, որտեղ տիրապետող հացազգիների և տարախոտի հետ էական դեր ունեն տափաստանային մասին հացազգիները (օր.՝ շուղախոտը), տափաստանային մանր թփիկները, կիսաթփիկները և խոտերը (օշինոր, իշակաբնուկ և այլն):

1769. Տաք աշնանամուտ-Եճեթ-Indian summer-Եվրոպայում սեպտեմբերի կեսերին կամ վերջին, հոկտեմբերի սկզբին տիրապետող տաք, չոր ու խաղաղ եղանակ: Դյուսիսային Ամերիկայում նման եղանակը լինում է մի փոքր ավելի ուշ և կոչվում է «Դնդկացիական ամառ»: Արարատյան դաշտում այն հոկտեմբերի ընթացքում է: Երբեմն անվանում են նաև «Վիոքր ամառ»: Այդպիսի եղանակը պայմանավորված է տվյալ տարածքի վրա անտիցիկլոնի առաջացմամբ կամ օդային զանգվածների շարժմամբ կայունացմամբ:

1770. Տաք ճակատ-Տոռլան ֆրոնտ-Warm front-Մթնոլորտային ճակատ, որը տեղափոխվում է դեպի սառն օդը: Դրա հետ է սովորաբար կապված տաքացումը, որն ուղեկցվում է ամպամածությամբ ու տևական տեղատարափ տեղումներով: Ամռանը ցանքածի վրա հմարավիր են ամպրոպմեր:

1771. Տաքսոն-Տաքսոն-Բույսերի և կենդանիների դասակարգման կարգաբանական միավոր: Տաքեր աստիճանի տաքսոններ են ենթատեսակը, տարատեսակը, տեսակը, ցեղը, ընտանիքը, կարգը, դասը:

1772. Տաք օդային զանգված-Տոռլայ օօզդանային Massca-Warm air mass-Օդային զանգված, որը հարաբերականորեն ավելի բարձր ջերմաստիճան ունի քան սահմանակիցը: Ավելի ցածր ջերմաստիճան ունեցող մակերեսի վրայով անցնելիս տաք օդային զանգվածը նպաստում է նառախույների և ամպերի առաջացմանը:

1773. Տելերգոն-Տելերգոն-Telegon-տեսն Ներազդուս:

1774. Տեխնիկական ռելիէֆ-Technogenic relief-տեսն Մարդարան ռելիէֆ:

1775. Տեխնիկական ջուր-Տեխնիկական ջուր-Technical water-Արտադրության մեջ օգտագործվող ջուրը: Խմելու և հանքային ջրերն այդ նպատակով չեն օգտագործվում:

1776. Տեխնիկական բույլատրելի արտանետում-Տեխնիկական ջուրագործություն-Technical permissible discharge-1. ժամանակակից տեխնիկական հմարավո-

րություններ (փոքրաթափուն տեխնոլոգիաներ, հումքի համալիր օգտագործում, մաքրման կատարյալ սարքավորումներ) ունեցող ձեռնարկությունների համար սահմանված աղտոտող նյութերի առավելագույն քանակը: Զերնարկության աղտոտող նյութերի ծավալը, որը չի հանգեցնում հարևան ձեռնարկության տեխնոլոգիական շարքի խախտմանը:

1777. **Տեխնոլոգիական համակարգի ինքնապարփակություն-Յամակուտում տախնոլոգիական սահմանափակություն**-Technological system reserve-Techmological system reserve-Տեխնոլոգիական բոլորապտույտի ծե, որի դեպքում ներգրավված, բայց վերջնական արտադրանքի մեջ չմտնող բնական ռեսուրսները (որպես կամոն կատալիզատորներ, էներգիա, օդ և ջուր) նորից օգտագործվում են արտադրության ժամանակ:

1778. **Տեխնոլորտ-Տեխնոսֆերա-Technosphere-1.** Կենսոլորտի մաս (մի շարք գիտմականների կարծիքով՝ ժամանակի ընթացքում ամբողջ կենսոլորտը), որը մարդկանց սոցիալ-տնտեսական կարիքներին համապատասխանեցնելու նպատակով տեխնիկական միջոցներով վերափոխվել է: 2. Կենսոլորտի էվոլյուցիայի ժամանակակից փուլ, որի փոփոխման մեջ դեր ունի տեխնիկան:

1779. **Տեղաբնակ-Էնդեմիկ-Endemic-Կենդանիների և բույսերի տեսակներ, որոնք որևէ աշխարհագրական մարզում ունեն սահմանափակ տարածք և այլ վայրերում չեն հանդիպում: Կարող է լինել ինչ-որ ժամանակ գոյություն ունեցած ընդարձակ տարածքի կրծատման (հնատեղաբնակություն) կամ տեսակի ուշ առաջացման ու դրա հետևանքով դեռ լայնորեն տարածված չինելու (նորատեղաբնակություն) հետևանք:**

1780. **Տեղաբնակություն-Էնդեմիզմ-Endemism-Միայն որոշակի տարածքում բույսերի կամ կենդանիների տեսակների տարածվածությունը: Տեղաբնակության աստիճանը որոշվում է տարածքում հանդիպող օրգանիզմների և նույնատիպ այլ վայրերում չհանդիպողների տոկոսային հարաբերությամբ:**

1781. **Տեղախմբային գոյապահպանություն-Պոպուլացիոնա էկոլոգիա-Population ecology-Ծրջապատի հետ տեղախմբի ուղիղ կապերը և միաժամանակ շրջակա միջավայրի հետ միջնորդավորված ներտեղախմբային գործընթացներն ու սումնասիրող գոյապահպանություն:**

1782. **Տեղախմբային գործոն-Պոպուլացիոնի ֆակտոր-Population factor-Տեղախմբի առանձնյակների փոխհարաբերությունների ուղղակի կամ միջնորդավորված ազդեցությունը:**

1783. **Տեղախմբի գրոյական աճ-Կուլեօն որոքություն-Պոպուլացիս-Zero Increment of population-Ծննդիության ու մահացության ռեալ հավասարություն, որն առաջանում է տեղախմբերի կայուն քանակ: Բնական տեղախմբերի սովորական վիճակն է բացառությամբ տարբեր պատճառներով օրգանիզմների զանգվածային բազմացման կամ ոչնչացման տարիների:**

1784. **Տեղախմբի խտություն-Պլատոնում պոպուլացիս-Population density-Տեղախմբի գրանցրած տարածքի միավոր մակերեսին կամ ծավալում առանձնյակների միջին քանակությունը:**

1785. **Տեղախմբի շարժընթաց-Դинամիկա պոպուլացիս-Population dynamics-Ներտեղախմբային գործընթացներով և տարբեր տեղախմբերի փոխազդեցությամբ պայմանավորված քանակության, սեռական ու տարիքային կազմների փոփոխությունները:**

1786. **Տեղախումբ-Պոպուլացիա-Population-Մի տեսակի պատկանող և որոշակի տարածքի վրա աճող, անհատապես զանազանվող բույսերի խմբակցությունը: Ունակ է գոյատևելու և վերարտադրվելու: Տարիքի ու կենսավիճակի պատճառով տար-**

բերվում են կենսաբանական հատկություններով ու գրադեցրած գոյապահպանական խորշերով: Բոլոր առանձնյակներին բնորոշ են ժամանակի ընթացքում, որոշակի պայմաններում միևնույն գոյապահպանական խորշը գրադեցնելը և միևնույն սինուգիայում լինելը:

1787. **Տեղական աղտոտում-Լոկալ զարյանություն-Local pollution-Ը** մեծ շրջանի աղտոտում (սովորաբար՝ արդյունաբերական ծեռնարկության, ոչ մեծ բնակավայրի շրջակայքում):

1788. **Տեղական կլիմա-Մետոքի կլիմա-Local climate-Աշխարհագրական լամուշաֆտի մի խոշոր հատվածի կլիմա,** որը բնութագրվում է մեկ օդերևութաբանական կայանի դիտումներով: Տեղական կլիմային մոտ հասկացություն է մեզոկլիման:

1789. **Տեղաճարակ-Էնդեմիա-Endemism-Որոշակի վայրում որևէ հիվանդության մշտական ի հայտ գալը:**

1790. **Տեղանքի տիպ-Տոպ մետոքություն-Type of locality-1.** Լանդշաֆտային տիպաբանական հիմնական միավորներից մեկը: Կենսավայրերի օրինաչափ գուգորդում (օր.՝ տեղանքի ողողատային տիպ Արևելավրոպական հարթավայրի տափաստանային գոտու սահմաններում): 2. Ընդհանուր տիպաբանական հասկացություն, որը սահմանափակված չէ որևէ կարգաբանական աստիճանով (օր.՝ լեռնային տեղանք):

1791. **Տեղատարափ-Լաւոնь-Downpour, Heavy rain, Cloud-burst-Բարեխառն լայնությունների ցիկլոններում վերընթաց ծագման ուժեղ, բայց կարճատև անծրն կամ սառը ճակատի փորորկային անծրներ:**

1792. **Տեղատարում-Դենудացություն-Denudation-Լեռնային ապարների հողմահարման նյութերի քայլայման ու ջրի և քանու միջոցով, սաղոցով, ծանրության ուժի ազդեցությամբ տեղափոխման գործընթացների ամբողջությունը:** Ընթացքի և բնույթի վրա մեծ ազդեցություն ունեն տեկստոնական շարժումները: Տեղատարման և երկրակեղեկի շարժնան հարաբերակցությունից է կախված ցամաքի ռելիեֆի զարգացման ուղղությունը: Տերմինը երբեմն օգտագործվում է ավելի ներ իմաստով. հողմահարման նյութերի տեղափոխում մակերեսային լվացմամբ:

1793. **Տեղեկատու ռեսուրսներ-Информационные ресурсы-Information resources-Միասնական ռեսուրսի նաև: Սարդուն է հասնում բնական օբյեկտների ու երևույթների միջոցով (հնարանական ծեսեր, ծառերի տարեկան օղակներ, բնության պատկերների տեղեկատուներ):**

1794. **Տեսակ-Вид-Species-Բույսերի և կենդանիների դասակարգման հիմնական կարգաբանական միավոր: Ընդհանուր հատկանիշներով, մոտիկ ազգակցական կապերով, միմյանց հետ հեշտությամբ խաչասերվելու ունակությամբ բնորոշվող և միասնական ծագում ունեցող անհատների խումբ:**

1795. **Տեսակային բազմազանության ցուցիչ-Индекс видового разнообразия-Specific diversity Index-Տեսակների քանակի ու կենսազանգվածի, արդյունավետության և այլ կարևոր ցուցանիշների հարաբերակցությունը:**

1796. **Տեսակային ընտրողականություն-Видовая избирательность-Species selectivity-Իրենց համար հարմար (օր.՝ սեղոնապիտանի) միջավայր ընտրելու՝ տեսակների կամ օրգանիզմների հատկությունը:**

1797. **Տեսակային կազմ-Видовой состав-Species composition-Դամակեցության կամ տարածքի տեսակների լրակազմը:**

1798. **Տեսակարար էներգիա-Եներգիա-Удельная энергия-Specific energy-Միավոր արտադրանքի վրա կատարվող էներգետիկ ծախսերի չափը (բնանբերային կամ արժեքային արտահայտությամբ): Զարգացած երկրներում դիտվում է տեսակարար էնե-**

գիայի ներդրման անկում:

1799. **Տեսակի բնակատեղ-Մետօօնտանաթ վիճա-Species habitat**-Կենսածին և ոչ կենսածին միջավայրի պայմանների տարածականորեն սահմանափակված վայր (ցանաքային կամ ջրային տարածքներ), որն ապահովում է տեղախմբի կամ տեսակի զարգացումը:

1800. **Տեսակի գոյության տևողություն-Պրօճօկութելիություն-Duration of existence species**-Տեսակի առաջացումից մինչև նրա լրիվ ոչնչացման ժամանակաշրջանը: Նվազագույն տևողությունը 20000-50000 տարի է, առավելագույնը՝ մինչև 50 միլիոն տարի:

1801. **Տեսակի հավատարմություն-Վերություն-Fidelity of species**-Միջավայրի որոշակի պայմաններին տեսակի հարմարվածությունը: Լինում է տարածքային, բացարձակ և տեղային:

1802. **Տեսակի տարածասահման-Արեալ վիճա-Species area**-Տեսակի առանձյակների աշխարհագրական տարածման նարզ (ցանաքային կամ ջրային) անկախ այդուն դրանց բնակության աստիճանից: Բացառում է պատահաբար հայտվելը հարկան տարածաշրջաններում:

1803. **Տեսանելիություն-Վիզիբիլիտի-Տարածություն**, որտեղ ցերեկը դադարում է երևալ դիտվող օբյեկտը (գծապատկերը դառնում է չտարբերվող), իսկ գիշերը չի երևում որոշակի ուժգնության լույսի աղբյուրը: Տարբերում են հորիզոնական, ուղղաձիգ, թեր տեսանելիություն: Կարելոր ցուցանիշ է տրանսպորտի համար:

1804. **Տերևություն-Առուրություն-Aspect**-Բուսական համակեցության արտաքին տեսքը, որը կարող է փոխվել վեգետացիայի անբողջ ընթացքում՝ պայմանափորված աճման պայմանների փոփոխմամբ կամ համակեցությունում գերակշռող բույսերի ֆենոլոգիական փուլերով:

1805. **Տերևաբնակ-Փալլօնիոն-Phyllobiont**-Ծառերի և թփերի սաղարի վրա ապրող օրգանիզմները:

1806. **Տերևաթափվող անտառ-Լաւտոպացին լես-Deciduous forest**-Վեգետացիայի համար անբարենպաստ ժամանակաշրջանում (արտարևադային շրջաններում՝ ցուրտ, արևադայինում՝ չոր) տերևաթ ծառերից կազմված անտառ:

1807. **Տերևասեր-Էրոսֆալ-Eriphyle**- Բուսական օրգանիզմներ, որոնք ապրում են ուրիշ բույսերի տերևների վրա, բայց դրանց մակաբույժները չեն (օր. ջրիմուները, քարաքոսները, մամուռները):

1808. **Տերևավոր սուկուլենտ-Լաւտովուն սուկուլենտ-Leaf succulent**-Սուկուլենտ, որի ջրակուտակող հյուսվածքը հյուրալի տերևներում է (քանրոնիկ, գառնադմակ, ագավա, հալվե):

1809. **Տիեզերական ճառագայթներ-Կոսմիկական լուս-Cosmic rays**-Ճառ մեծ էներգիա ունեցող տարրական նասնիկների (պրոտոններ, ջրածնի ատոմի կորիզներ) տիեզերքից եկող հոսքը: Մթնոլորտում ընդհարվելով օդի ատոմներին՝ առաջացնում է երկրորդային ճառագայթում: Կործանարար է կենդանի նյութի համար:

1810. **Տիեզերական ռեսուրսներ-Կոսմիկական ռեսուրսներ-Cosmic resources**-Բնական ռեսուրսների մաս, որը գալիս է տիեզերքից (արևի էներգիա, տիեզերական ճառագայթներ):

1811. **Տիգասպան-Ափսազ, Ակարազ-Aphididae, Acaridae**-Տիգերի դեմ պայքարում օգտագործվող քիմիական նյութեր:

1812. **Տիպորինակ մթնոլորտային ճնշում-Стандартное атмосферное давление-Standard atmospheric pressure**-Ծովի մակարդակի վրա,  $0^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի և  $45^{\circ}$  աշխարհագրական լայնության պայմաններում մթնոլորտի սյան ճնշումը:

**1813.** Տնտեսական «անապատ»-Էկոնոմիկական „պустыնի”-Economic „desert”-Մարդու գործունեության ազդեցությամբ բնության մեջ առաջացած տեղանքանակ է անտառի հատված և այրված ճամբար, պարապուտներ:

**1814.** Տնտեսական գոյապահպանություն-Էկոնոմիկական էկոլոգիա-Economic ecology-Սոցիալական գոյապահպանության նյութ, որն ուսումնասիրում է տնտեսության ու գոյապահպանության փոխադրեցությունը:

**1815.** Տնտեսական ծգնաժամ-Էկոնոմիկական դեպրեսա-Depression-Արդյունաբերական լճացում: Բնորոշվում է ապրանքների պահանջարկի անկմանք, ծեռնարկությունների թերթեռնվածությամբ, զանգվածային գործազրկությամբ: Սովորաբար համգեցնում է բնական միջավայրի պահպանման միջոցառումների համար ներդրումների պակասեցնանք:

**1816.** Տնտեսական օրենսդրության գոյապահպանացում-Էկոլոգիզացիա հոգանության օրենսդրության գոյապահպանացում-Ecologization of economic legislation-Գոյապահպանական չափորոշիչների ներդրումը ծեռնարկությունների, կազմակերպությունների, հիմնարկների և այլ օրյեկտների տնտեսական գործունեությունը կարգավորող օրենսդրության մեջ: Ստեղծում է օրենսդրական ու տնտեսական մեխանիզմների փոխադարձ կապ: Այդպիսի կապի արդյունք է տնտեսաօրենսդրական չափորոշիչների հարստացումը գոյապահպանական իմաստով ու բնապահպանական օրենսդրական կապերի ծևափոխումը գոյապահպանատնտեսականի:

**1817.** Տնտեսապես բույլատրելի արտանետում-Էկոնոմիկական դուրսանցումը՝ վեճրությունը-Discharge-Աղտոտող նյութերի քանակը, որի դեպքում միջավայրի աղտոտման դեմ պայքարի ծախսերը ցածր կամ գոնե հավասար են աղտոտումը կանխելու ծախսերին: Հակառակ դեպքում միջավայրի աղտոտումից կստացվի տնտեսական գգալի վնաս:

**1818.** Տնտեսության ուժգնությունից-Ինտենսիվություն հոգանության օրենսդրությունից-Intensify-Բնությունից վերցված ռեսուրսի (պաշարի) օգտագործման աստիճանը: Որոշվում է ռեսուրսների միավորից ստացվող արտադրանքի ծավալով:

**1819.** Տոլերանտության (Վ.Շելֆորդի) օրենք-Յակոն տոլերանտություն (B. Շալֆորդ)-Tolerance law (V. Sheldford's)-տես Դիմացկունության օրենք (Վ. Շելֆորդի):

**1820.** Տոմիլյար-Տոմուլլեռ, Thymo communis-Կարծրատերև բիկիների և կիսարփերի համակեցություն՝ մշտականաչ, բուրավետ, խիստ խավոտ բույսերի տիրապետմանը: Բնորոշ են միջերկրածովյան շրջաններին:

**1821.** Տոքսիկոգ-Տոքսիկոս-տես Թունավարակ:

**1822.** Տրանսպորտային հիվանդություն-Տրանսպորտային հիվանդություն-Transport illness-Խանգարումներ, որոնք կապված են մարդու հավասարակշռության ապարատի գերձանքաբեռնվածության հետ՝ տեղափոխման ժամանակ կտրուկ տատանումների (ծննումներ, պտտումներ և այլն) հետևանքով: Տարբերում են ծովային հիվանդություն, օդային հիվանդություն և այլն:

**1823.** Տրիփտոն-Տրիպտոն-Trifoliate, Abieseston-Ձրում կախված անկենդան տարրերի ամբողջությունը (մանրագույն օրգանիզմների մնացորդներ, որոշ աղերի բյուրեղիկներ, տիղմի և հանքային ծագման փոշու մասնիկներ և այլն):

**1824.** Տրոհիչ տարածասահման-Դաշտական արեալ-Dilejunct area-Տեսակի գոյության ընդարձակ տարածք, որը տրոհված է մեկուսացած մասերի: Այդ մասերն այնքան հեռու են միմյանցից, որ բույսերի սերմերի կամ սպորների փոխանակությունը կամ կենդանիների գաղթը նեկից նյութը անհնար է: Այդպիսին է արկտիկա-ալպիա-

կամ տարածասահմանը (բարձրլեռնային շրջաններ և արկտիկական մարզեր):

1825. Տրոպիֆիտ-Տրոպօֆիտ-Tropophyte-տես՝ Փոփոխաբույս:

1826. Տրորում-Եղանգական-*Trampling*-Մարդու կամ կենդանիների կողմից հողի պնդացման, խտացման և բուսականության մեխանիկական վնասման գործընթաց: Արտավայրերում դա գերարածեցման հետևանք է: Ազդող գործոններն են զանգվածային գրոսաշրջության բուռն զարգացումը և հանգստի գոտիների սխալ պլանավորումը:

1827. Տուգայ-*Tugai*-Միջին և Կենտրոնական Ասիայի գետահովիտների ողողատների անտառների լանդշաֆտը: Տիրապետում են հիմնականում բարդիները, փշատենիները, թփերից կարմրանը և ուռենին:

## 8

1828. Ցածրախոտ մարգագետին-Հնձկութանական լոց-*Short-grass, Alpine meadow*-Ալպիական մարգագետին՝ 10-15 սմ բարձրությամբ խոտածածկով: Կազմված է բոշխերի, հացազիների և երկշաքիլավորների կարճահասակ տեսակներից:

1829. Ցածրաչերմ բույս-*Geocystotermes* բաշխութանական լոց-*Hedestothermal plant, Hedestotherm*-Բույսեր, որոնք ապրում են 0°C-ից ցածր տարեկան միջին ջերմաստիճան ունեցող մարգերում (օր.՝ Արկտիկայի և լեռների ալպիական գոտու բույսերը):

1830. Ցածրաչերմություն-*Geocystotermes*-*Hedestothermism*- Ցրտադիմացկունություն, նվազագույն ջերմասիրություն:

1831. Ցամաքային գոյահամակարգ-Հազեմայա էկոսիստեմ-Land ecosystem-Ցամաքի մակերևույթի վրա առաջացած գոյապահպանական համակարգ, որին բնորոշ է միջավայրաստեղծ բաղադրամասերի սովորական գուգակցումը:

1832. Ցամաքային կլիմա-*Continental climate*-Օվկիանոսից հեռու գտնվող և դրա խոնավեցնող ազդեցությունից գուրկ տարածքների կլիման: Բնորոշ է Եվրասիայի և Հյուսիսային Ամերիկայի ներքին մասերին: Հարավային կիսագնդում տարածում չունի: Բնորոշվում է մննողությունը բարձր ճնշումով (հատկապես՝ ձնոանը), տաք ամառով, հաստատուն ձնածածկությունը և ցուրտ ձմեռով, հարաբերականորեն քիչ տեղումներով: Ձերմաստիճանի տարեկան տատանումները մեծ են և աճում են դեպի մայրցամաքների ներքին շրջանները:

1833. Ցամաքեցում-*Soil drainage*-Չրային և օդային ռեժիմների բարելավման նպատակով հողից ավելցուկային խոնավության հեռացումը: Հողաբարելավման եղանակներից մեկն է: Իրագործվում է ջրատեխնիկական, ագրոտեխնիկական և տնտեսական միջոցառումներով:

1834. Ցամաքուրդ-*Drenаж-Drainage*-Գերխոնավացած հողերը չորացնելու նպատակով մակերեսային ու ստորգետնյա ջրերը հասուկ ջրատարների և ստորգետնյա խողովակների միջոցով հեռացնելը: Դժ պայմաններում օգտագործվում է նաև հողերն աղազերենելու համար:

1835. Ցամաքուրդի ջրեր-*Drenажи-Drainage waters*-Մակերեսային կամ ստորգետնյա ջրեր, որոնք հավաքվում են ցամաքուրդային կառուցվածքներով և տեղափոխվում այլ վայր: Կառուցվածքները լինում են մակերեսային և ստորգետնյա:

1836. Ցանկաշար-*Шпалера*-*Espalier*, *Trellis*-Խիտ տնկված ցածրահասակ ծառերի կամ թփերի խուզված շարք՝ պատի նման կամ հենարանների վրա:

1837. Ցանքաբույս-*Севетмалъное расщепление*-*Segetal plant*-Մշակաբույսերի հետ աճելուն լավ հարմարված մոլախոտեր:

1838. Ցանքաշրջանառություն-*Cropping-system, Rotation*-Հաջոր-

դական կամ պարբերաբար մշակաբույսերի փոփոխմամբ աճեցման համակարգ: Կիրառվում է հողի արգավանդությունը բարձրացնելու նպատակով:

1839. Ցեխաբուժություն-**Գրչօլութեան-Mud treatment**-Կավային ցեխերի (հանքային աղերի մեջ պարունակությամբ և բարձր ճառագայթմամբ կամ տղմատորֆային օրգանական նյութերով) օգտագործումը բուժական նպատակներով:

1840. Ցեխատեսակ-**Պորոդ-Bræed, Strain-1**. Արհեստական ընտրությամբ ստացված որոշակի տեսակի կենոդանիների խումբ: Ունի յուրահատուկ կազմաբանական, բնախոսական և տնտեսական ժառանգականություն: 2. Նման կենսաբանական կամ տնտեսական հատկանիշներ (կորիգավորներ, ընկույզազգիներ և այլն) ունեցող ծառարփային բուսատեսակների ամբողջությունը:

1841. Ցենորիոդ-**Ցենօբիոզ-Coenobiosis**-տես Համակեցութակյանք:

1842. Ցենոզ-**Coenosis**-տես Համակեցություն:

1843. Ցենոտիպ-**Ցենոտիպ-Coenotype**-տես Համակեցութատիպ:

1844. Ցող-**Poca-Dew**-Գիշերային ճառագայթմամբ սառած հողի (մինչև  $0^{\circ}$  C-ին մոտ ջերմաստիճանը) մակերեսին, բույսերի և այլ առարկաների վրա օդի հեղուկացված գոլորշու նստելը:

1845. Ցողակետ-**Տուկա րօսы-Dew point**-Օդի սառեցման ընթացքում այն ջերմաստիճանը, երբ օդում եղած ջրագոլորշին փոխվում է հագեցման վիճակի կարիլահեղուկի (տվյալ խոնավության ու անփոփոխ ճնշման դեպքում):

1846. Ցողունային սուկուլենտ-**Ծածկավոան ցուացւութ-Stem succulent**-Սուկուլենտ, որի ջրակուտակող հյուսվածքը ցողուններում է. դրանք նաև լուսասինթեզ են կատարում: Տերևները վերածվել են փշերի, թեփուկների (կորիններ, իշակաթնուկներ):

1847. Ցրտաբույս-**Պաշխօֆիտ-Psychrophyte**-Խոնավ և ցուրտ վայրերի (տունդրայի, բարձրլեռների) բույսեր: Սովորաբար ցածրահասակ, մանրատերև բույսեր են, աճում են դանդաղ: Մշտականաչ և ամառնականաչ թփիկներ, խտավարդակավոր ու բարձանման բույսեր են:

1848. Ցրտադիմացկունություն-**Խոլոդուցտօնիստ-Cold resistance**-Միջավայրի դրական ցածր ջերմաստիճաններին ( $1-10^{\circ}\text{C}$ ) դիմանալու օրգանիզմների ունակությունը:

1849. Ցրտակենսաբանություն-**Կրսօնսոլոգի-Суточное**-Կենսաբանության բաժին: Ուսումնասիրում և ցածր ջերմաստիճանների ազդեցությունը կենսաբանական գործընթացների և օրգանիզմների վրա:

1850. Ցրտահարություն-**Յամօրօզօկ-Frost**-Օդի ցերեկային դրական ջերմաստիճանի պայմաններում գիշերայինի իջեցում  $0^{\circ}\text{C}$ -ից ցածր: Լինում է գարնանը և աշնանը: Պայմանավորված է սառը օդային զանգվածների ներխուժմամբ կամ հողի մակերեսի ու բուսածածկությի ջերմության գիշերային ճառագայթմամբ:

1851. Ցրտահարություն հողի վրա-**Заморозок на почве-Soil frost**-Գիշերային արյունավետ ջերմային ճառագայթման հետևանքով հողի մակերեսի և բուսածածկությի ջերմաստիճանի իջեցում մինչև  $0^{\circ}\text{C}$  և ավելի ցածր: Ըստ որում՝ 2 մ և ավելի բարձրության վրա այդ ժամանակ ջերմաստիճանը դրական է:

1852. Ցրտահողմահարություն-**Морозохое взвешивание-Frost weatting**, **Congelification**-Լեռնային ապարների քայլայման գործընթացի տարատեսակ: Տեղի է ունենում  $0^{\circ}\text{C}$ -ից բարձր և ցածր ջերմության հաճախակի տատանումների պայմաններում: Հալիլողի ժամանակ ցերեկը գոյացած սաղցածուրը բափանցում է ապարների ծեղբերը, գիշերը սառչում է և, մեծացնելով ծավալը, ապարի զանգվածից կտորներ է պոկում:

1853. Ցուցադրություն-**Էռուառութա-Erüdelikla**-Կենդանիների վարքի ազդանշաննե-

րի համակարգ, ըստ որի՝ հնարավոր է դատել տեղախմբերի առանձնյակների խտության մասին:

## Ա

1854. Ուրիկվիստ-Ենսկաստ-Ենկվիստ-տես Ամենատարած:

1855. Ուղեկցող-Ասքեկտատոր-Asseccator-Բուսահամակեցությունում առկա, բայց ներքին միջավայրի ստեղծման վրա փոքր ազդեցություն ունեցող բույսերի տեսակներ:

1856. Ուղեփակյալ տեր-Տպուկօսին հօզյան-Final host-Տվյալ կարգաբանական խմբի մակարույններով պատահականորեն վարակված տեսակ: Առանց սերունդ տալու ոչնչանում է:

1857. Ուղղակի ներգործում բնության վրա-Պրյամօ Յօզեմիստաւուս և որոգության անմիջական, բայց ոչ բոլորովին պլանավորվող և ցանկալի փոփոխություն տնտեսական գործունեության ընթացքում: Տարբերում են մարդկային (մարդու անմիջական ազդեցություն), մարդածին (մարդու տնտեսական գործունեությամբ առաջացած), միացյալ, կուտակային և այլ ձևեր:

1858. Ուղղաձիգ ջերմաստիճանային աստիճանափոխում-Վերտիկալին տառության ցրաւում-Vertical temperature gradient-տես Բարձունքային ջերմաստիճանային աստիճանափոխում:

## Փ

1859. Փակ հիմնահող-Զաքրյան ցրում-Shutting soil-Ապակու, բափանցիկ բաղանքի պաշտպանության տակ գյուղատնտեսական բույսերի (հիմնականում բանջարեղեն, ծաղիկ, ջերմասեր տարաշխարհիկ բույսեր) աճեցում: Լինում է չտաքացվող (ջերմատուն, վեգետացիոն տնակ և այլն) և տաքացվող (տարրեր կառուցվածքների ջերմունքում): Տարվա ընթացքում մի քանի անգամ թերզ է տալիս, տնտեսապես շահութաբեր, բայց էներգատար ու աշխատատար է:

1860. Փափուկ ջուր-Մլցեա вода-Soft water-Կալցիումի և մագնիումի կարբոնատների փոքր պարունակություն ունեցող ջուր:

1861. Փոխարույս-Ալոֆիտ-Aporphyte-Տեղական բուսականության տեսակ, որը հեշտությամբ անցնում է դաշտերը, այգիները, բանջարանոցները ու վերածվում մոլախոտի (օր. կտավավախոտ):

1862. Փոխադարձություն-Մուտալիզմ-Mutualism-1. Համարնակության ձև, որը հավասարապես օգտավետ է օրգանիզմներից յուրաքանչյուրի համար: 2. Օրգանիզմների համատեղ գոյակցության ձև, որի դեպքում նրանցից յուրաքանչյուրը չի կարող գոյություն ունենալ առանց մյուսի:

1863. Փոխազդեցախտ-Ալլելոպատիա-Allelopathy-Համատեղ ապրող օրգանիզմների փոխադարձ ազդեցությունը կենսագործունեության նյութերի արտազատման միջոցով:

1864. Փոխակերպություն-Մետամորֆոզ-Metamorphosis-Օրգանիզմի կողմից զարգացման ձևաբանորեն պարզ արտահայտված մի շարք ընթացաշրջանները (օր. միջատներն անցնում են թրթուր, հարսնյակ և հասուն փուլերը):

1865. Փոխարինելի ռեսուրսներ (պաշարներ)-Յամունայա քուրուս-Substitution of resources-Բնական ռեսուրսներ, որոնք տնտեսության մեջ կարող են փոխարինվել ուրիշներով. օրինակ ջերմաէներգետիկ ռեսուրսները ջրաներգիայով

և ատոմային էներգիայով:

1866. **Փոխգոյացնող տեսակներ-Բնաբարուցածք և առաջապահապահողներ**, *Vicarious species*-Բոլուսի աշխարհագրականորեն կամ գոյապահապահողներ մոտիկ տեսակներ, որոնք առաջացել են ծնողական տեսակի տարածասահմանի առանձին շրջանի մեկուսացման հետևանքով (բոզի տեսակները Ալպերում և Կարպատներում, կակաչածառի տեսակները Հյուսիսային Ամերիկայում, Չինաստանում և այլն): Մեկուսացնող գործող կարող է լինել և հիմնահողի տարատեսակությունը (օր. ուրցի և շուդախոտի ավագահողային ու սևահողային տեսակները):

1867. **Փոխհատուցվող ռեսուրսներ (պաշարներ)-Վօզմեստումներ քերերա քուուս-Ռեսուրսների այն տեսակները, որոնք տնտեսության մեջ նոր աղբյուրների փնտրման ճանապարհով (օր. Երկրաբանական հետախուզման օգնությամբ) կարող են փոխարինվել ուրիշներով:**

1868. **Փոխհարմարվածության (Մերիուսի-Մորոզովի) կանոն-Պրաված բաւարարությունություն** (*Mebius-Morozova*)-*Interaadaptability rule (Mebius-Morozov's)*-Կենսահամակեցությունում տեսակները միմյանց այնքան են հարմարված, որ, չնայած ներքին հակասություններին, կազմում են միասնական ու փոխկապացված ամրողություն:

1869. **Փոշեմրիկ-Պեսահան բոր-*Sant storm*-Մրիկ**, որը բուսականությամբ չպաշտպանված մակերեսից տեղափոխում է մեծ քանակությամբ ավագ ու փոշի: Բնորոշ է չոր տափաստաններին և անապատներին:

1870. **Փոշի-Պևլ-*Dust*-Մրնոլորտում կախված մանրագույն ( $10^{-2}$ - $10^{-4}$  սմ) մասնիկների միագունարությունը**: Ի տարբերություն ծիփ կարող է անհողմ եղանակին իշնել առարկաների վրա:

1871. **Փոփոխաբույս-*Tropophyte*-Բույս, որը ջրային փոխանակության կարգավորմամբ հարմարվել է խոնավ և չոր ժամանակահատվածներով կանոնավոր փոփոխություններ ունեցող տարածքներում աճելուն**: Որոշ փոփոխաբույսներ (օր. տերևավոր բույսերը) չոր ժամանակահատվածում քափում են տերևները, ծյուղերի ծայրերը, ուրիշները (օր. հողի վրա տարածված քարաքսերից շատերը) կորցնում են խոնավությունը:

1872. **Փոփոխականություն-*Variability*, *Variation*-Առանձնյակների, համակեցությունների, գործոնների ցանկացած (կազմաբանական, գործառնական և այլն) փոփոխությունները**: Լինում է ժառանգվող կամ ժագումնաբանական, չժառանգվող կամ արտաքին պայմանների ազդեցությամբ:

1873. **Փոփոխունը-*Succession*-տես Սուրբեսիա:**

1874. **Փշաքայքայում-*Deflation*-Օդային հոսանքներով (փշելով կամ տարութերումով)** լեռնային ապարների, հողերի և ավագների քայլայումը: Տեղատարման տեսակներից մեկն է:

1875. **Փողաշերտ-*Pedoturbation*-Ալեր-Փոքր հաստության (մինչև 15 սմ) մակերևությային հորիզոն, որը կազմված է քայլայվող օրգանական նյութից (Ենթահորիզոնները գտնվում են քայլայման տարբեր աստիճաններում)՝ մասնակիորեն խառնված հանքային բաղադրամատերի հետ (հիմնականում ստորին մասում):**

1876. **Փովածքաբնակ-*Stratobiont*-Անտառային փովածքում ապրող օրգանիզմներ:**

1877. **Փովող բույս-*Стволиоющие растения*-*Prostrate plant*-1.** Յորիգոնական Երկրամերը ընծառական խոտային բույսեր, որոնք փուլում են հողի մակերեսին և ամեն ընթացքում կարող են արմատակալել: Կոչվում են սողացողներ (արմատակալող ընծառականներով) և պառկածներ (չարմատակալող ընծառականներով): 2. Ծառաբույս, որի

Վերցեստնյա շիվերը փռվում են հողի վրա: Գլխավոր բունք կամ արտահայտված է ծառերի ննամ, կամ չի նկատվում (թվերի ննան):

1878. Փսամոբիոնտ-Պսամմօբիոնտ-Պսամմօబլոնտ-տեսն Ավազաբնակ:

1879. Փաշմոֆիլի-Պսալտոֆիլ-*Psammophile*-ներ Ավագանու:

1880. Փայմբիստ-Պամֆուլ-Բամբորովսկի Ավագանու:

1881. Փիխուէկոլոգիա-Psychoecology-ին Հոգեգոյապահ-պանություն:

1882. Φυτωριευ-**Saprophytē**-Συναντήσαμε την περίοδο της απόλυτης θερμότητας στην περιοχή της Καστοριάς, όπου η γη ήταν πλήρως διαβρωμένη από την άνθηση των φυτών, και οι οργανισμοί της φύσης ήταν σε ιδιαίτερη ανάπτυξη. Το Σαπροφύτη ήταν ένα από τα πιο διαδεδομένα φυτά στην περιοχή, με πολλές διάφορες ειδηστικές αποτυπώσεις. Το φυτό ήταν μεγάλης ύψους, με μεγάλα φύλλα και με πολλές λεπτές, άσπρες λουλούδια.

1883. Φιταկեր-Կարօֆգար-Saprophage-Մեռած հյուսվածքներով ու քայրայվող օրգանական մնացորդներով սնվող կենդանիներ: Ստորաբաժանվում են մի քանի խմբերի (մեռելակերներ, կղակերներ և այլն):

1884. Փտայմություն-Saprobičy-Օրգանական մնացուրդներով ջրի հագեցվածության աստիճանը:

1885. **Φιτασπιύ-Σαροτροφ-Saprotroph-Մահացած** կենսազանգվածով և օրգանական մնացորդներով սնվող օրգանիզմներ: Ստորաբաժանվում են փուտակերների և փուտաբույսերի:

1886. Φιωτιήλ-Σαρπονελ-*Saroponel*-Ορφωνικάν τηήλ: Θαμωράχην χρωμ-  
ρωμέτρηι ορφωνικάν έγινετερήι πι χρωμήι ορφωνικόμέτρηι μνωγηρημέτρηι ρωηκα-  
δωά θυτψώδη: Ορφωνηρόψηι ε ηράκει ωρωρωτωνάγιει:

2

1887. Քաղաքակենտրոնացում-**Մասնակիության առաջնային գործընթացը**-Urbanization-Գյուղական բնակավայրերի քաղաքաներին բնորոշ արտաքին, ինչպես նաև սոցիալ-տնտեսական գործառությունների ձեռքբերումը:

1888. Քաղաքակենտրոն գոյապահպանություն-**Արբանիստիկական էկոլոգիա**-  
**Urbanistic ecology**-Սոցիալական գոյապահպանության բաժին, որն զբաղվում է քաղաքակենտրոնացված բնակավայրերի շրջակա միջավայրի պահպանության խնդիրներով:

1889. Քաղաքակուտակ-Ացլոմերացի-Agglomeration-Մի քանի քաղաքների և բնակավայրերի տարածքային ամբողջություն: Ստեղծվում է ընդհանուր սոցիալ-տնտեսական և գոյապահպանական համակարգ:

1890. Քաղաքային գոյահանակարգ-*Городская экосистема-Urban ecosystem*-Մարդու ստեղծած և վերափոխած գոյահանակարգ: Քաղաքները բացասական են ազդում շրջակա միջավայրի վրա (բազմազան ֆիզիկական ու քիմիական աղտոտիչների առևլուր են):

1891. Քաղաքային կլիմա-Գործությունները կլիմա-*Climate* և կլիմա-*Climate* է բնական միջավայրի վրա քաղաքային կառուցապատճան, արդյունաբերության, տրանսպորտի և այլ գործուների ազդեցությամբ: Բնորոշվում է բարձր ջերմաստիճանով, գոլորշիացման, արևափայլքի ժամերի և հարաբերական խոնավության պակասեցմամբ, օդափոխանակության մեծացմամբ և, դրա հետևանքով, տեղատարակի տեղումների հաճախականության ու քանակի ավելացմամբ, մառախչապատ օրերի (հատկապես տարիվա ցուրտ կեսին) և օդի աղտոտվածության ավելացմամբ:

1892. მარტონ თავადავით მეტროპოლიტესკია არეალ-Metropolitan area-ის მხარე თავადობის წარმატება, იმ მატებულებების გადასაცემა.

բելակերպ ունեն: Սովորաբար կազմված է քաղաքային միջուկից և հարակից փոքր բնակավայրերից: Տերմինն առաջն հատուկ բնորոշում չունի. ԱՄՆ-ում առաջարկվում է հաշվի առնել հեռուստատեսային կայանի, կիրակնօրյա լրագրի, օդային կանոնավոր կապի, քաղաքային ավտորուսային տրանսպորտի, քառամյա ուսուցմամբ քոլեզի, մասնագիտացված հիվանդանոցի, թանգարանի առկայությունը:

1893. Ջաղցկեղածին-Կոնցերոց-*Carcinogen*-Օրգանիզմներում չարորակ գոյացություններ առաջացնող քիմիական ու ֆիզիկական գործոններ, կենսաբանական օրգանիզմներ:

1894. Ջամիների վարդ-*Rosa* Վետրօս-*Windrose*-Տվյալ վայրում ամսվա, սեղոնի կամ տարվա քամիների ռեժիմի պատկերնան գծագրական եղանակ: Պատկերված է կետ կամ շրջան, որի ներսում նշված է առանց քամի օրերի թիվը: Շրջանի կենտրոնից հորիզոնի հիմնական ուղղություններով տարածվում են ճառագայթներ, որոնց երկարությունը համենատական է տվյալ ուղղության քամիներով օրերի թվին:

1895. Ջամու էներգետիկա-Վետրօներգետիկա-*Windenergetics*-տես Հողմաէներգետիկա:

1896. Ջամու տարալվացում-Վետրօվայ էրոզա-*Wind erosion*-Փխրում նյութի (ավազ, լոս, լճային ավազակավ) տեղատարումը քամու միջոցով հաճախ՝ ռելիէֆով պայմանավորված գծերի ուղղությամբ: Երբեմն ավելի լայն իմաստով հասկանում են որպես հողմատարում:

1897. Ջայջայակեր-Դետրոֆագ-*Detrrophage*-Ջայջայուկով սնվող ջրային և ցամաքային օրգանիզմներ (ամձրևորդեր, քազմոտամիներ, հողակերներ և այլն):

1898. Ջայջայուկ-Դետրոմ-*Detritus*-Օրգանական տիղմը և օրգանիզմների մնացուկները ջրային միջավայրում:

1899. Ջանականկում-*Depressusia* Կուսւենոստի-*Depression of numbers*-Առանձնյակների թվի՝ նարդու գործունեության հետ չկապված կտրուկ նվազումը:

1900. Ջարաբնակ-Լատօնիոն-*Lithobiont*-Ջարուրուտում ապրող օրգանիզմ:

1901. Ջարաբույս-Լատօֆիտ-*Lithophyte*-Ջարերի և ժայռերի վրա արմատավորվող բույս (հիմնականում՝ ջարաքսեր և ջրիմուներ): Հաճախ առաջացնում է բարձիկներ, ճնածածկ կամ փուլող թփիկներ:

1902. Ջարածին լանդշաֆտ-Լատօգենիկ լանդշաֆտ-*Lithogenetic landscape*-Լանդշաֆտ, որի էական հատկությունները պայմանավորված են մակերևությամբ լեռնային ապարների յուրահատկությունների, ռելիէֆի, հողերի վրա ջրի ունեցած ազդեցությամբ: Սահմանները պայմանավորված են լանդշաֆտաստեղծ, համասեռ երկրաբանական ստվարաշերտի տարածմամբ և ուրվագծերով:

1903. Ջարակենսուլորտ-Լատօնիօսֆերա-*Lithobiocerphere*-Կենսուլորտի մի մասը՝ ջարուրուտի վերին շերտերում (1-2 կմ խորությամբ):

1904. Ջարաքաղաք-Կամոնիք գործ-Rock cityee-Լանդշաֆտ, որը բնորոշ է հիմնականում անապատին (ուժգին ֆիզիկական հողմանահարության և քամու միջոցով տեղափոխվող ավագի զանգվածի մեխանիկական ազդեցությամբ նայի ապարները ծեռք են բերում արտասովոր՝ քաղաքների ավերակներ հիշեցնող ձևեր):

1905. Ջարուրուտ-Լատօսֆերա-*Lithosphere*-Երկրագնդի վերին ջարանքը՝ 50-200 կմ խորությամբ: Ընդգրկում է երկրակեղեց և դրա տակ գտնվող մանթիայի վերին մասը: Մինչև 20-րդ դարի 60-ական թվականները հասկացվում էր որպես երկրակեղեցի հոմանիշ:

1906. Ջարտեզագրական մեթոդներ-Կարտոգրաֆիական մեթոդ-*Cartographical methods*-Ջարտեզների օգնությամբ բնական ու մարդածին երևույթների ուսումնասիրման մեթոդներ:

**1907. Թիմիական գոյապահպանություն-Химическая экология-Chemical ecology**-Գոյապահպանության բաժին: Ուսումնասիրում է բնության բոլոր բաղադրամասերի քիմիական կապերը և փոխարարերությունները:

**1908. Թիմիական գործոն-Химический фактор-Chemical factor**-Միջավայրի քիմիական կազմի փոփոխության (այդ բվում՝ աղտոտման) ազդեցությունը:

**1909. Ջլորացում-Хлорированиe-Chlorinating**-Վարակագերծման նպատակով խմելու ջրի կամ կեղտաջրերի մշակումը ջլորի լուծույթով: Անցանկալի հետևանքներից խուսափելու համար հաճախ խմելու ջուրը ջլորացման փոխարեն օգնացնում են:

**1910. Զնափություն-Справка-Accertification-Swarpva ցուրտ (ծմբառային) կամ չոր ու շոգ (ամառային) պայմաններին դիմակայելու համար կենդանիների՝ քնած կամ թմրած անցկացնելը:**

**1911. Թոշ-Կոչեвք-Migration**-Գոյության անբարենպաստ պայմանների պատճառով կամ կերի հայրայրման նպատակով կենդանիների ոչ հեռու տարածքներ կարծանանակով տեղափոխվելը: Լինում է սեզոնային, պարբերական կամ պատահական:

**1912. Թսերոֆիլ-Կօրօֆալ-Херофиле-տես Չորասեր:**

**1913. Թսիլորինտ-Կսլուօնոմ-Хյօլօնտ-տես Ծառաբնակ:**

**1914. Թվոտա-Կքոտա-Quota-1.** Տնտեսապես արժեքավոր տեսակի տեղախմբի առանձնյակների ծեռքբերման (որս, բռնել, հավաքում) օրենքով սահմանված չափը: 2. Օրենսդրութեն կամ միջազգային համաձայնագրերով որոշված բնական ռեսուրսի օգտագործման աստիճանը կամ ցանկացած ազդնան չափաքանակը (որոշակի նյութով աղտոտում, զբոսաշրջիկների կուտակում և այլն):

## ○

**1915. Օգտագործող-Կոնսումենտ-Consumer-Օրգանական նյութով սմվող օրգանիզմ (բոլոր կենդանիները, այդ բվում՝ մարդը, միկրոօրգանիզմների մի մասը, մակաբույժ ու միջատակեր բույսերը): Այն կենսահամակեցության դեկավառող օղակն է:**

**1916. Օգտագործողի կարգ-Порядок консумента-Order of consumer**-Գոյապահպանական բուրգում օգտագործողի տեղը: Տարբերում են առաջին կարգի օգտագործող, որը սնվում է արտադրող բույսերով (խոտակեր), երկրորդ կարգի օգտագործող, որը սնվում է բուսակեր օրգանիզմներով (գիշատիչ) և երրորդ կարգի օգտագործող, որի համար կեր են ավելի թույլ գիշատիչները: Օգտագործողների նյութ շարքը մակաբույժներն են:

**1917. Օգտահանում-Ստումազայ-Utilization-Արդյունաբերական և կենցաղային մնացորդներց օգտակար արտադրանք ստանալը: Տարբերում են արտանետումների, կեղուաջրերի, կենցաղային բափումների, անջատվող գագերի ջերմության և այլ օգտահանումներ:**

**1918. Օդաբույս-Աէրօֆիտ-Аэрофит-Բույս, որը հիմնական բոլոր սննդանյութերը ստանում է օդից (օր. որոշ խոլործագիններ, քարաքոսեր և այլն): Ապրում են հիմնականում ծառերի բների, ծյուղերի, տերևների վրա:**

**1919. Օդագիտություն-Աէրոլոգիա-Аэробиология-Ռւսմունք ազատ մքնոլորտում (ներքնոլորտ, շերտոլորտ) տեղի ունեցող ֆիզիկական գործնքացների հետազոտման մեթոդների մասին:**

**1920. Օդագնահատում-Աէրոտակսացիա-Аэrotaxacion-Բնական ռեսուրսների (հիմնականում անտարի) որակական ու քանակական գնահատում աչքաչափական**

կամ լուսանկարների վերլուծման միջոցով:

1921. **Օդալուծույթ-Ազրօզօլ-Ազրօզօլ**-Գազաննան միջավայրում կախված կարքը կամ հեղուկ նյութերի մասնիկներ: Նեղուկ մասնիկներով օդալուծույթը մառախուղ է, կարքը մասնիկներովը ծուփ:

1922. **Օդակենսուլորտ-Ազրօնոսօֆերա-Ազրօնօսթերե-Մթնոլորտի** (6-7 կմ բարձրությամբ) երկրամերձ շերտ, որտեղ մշտապես գոյություն ունեն կենդանի օրգանիզմներ ունակ ապրելու և բազմանալու համապատասխան սննդառու միջավայրում:

1923. **Օդակյանք-Ազրօնոս-Ազրօնօս-Մթնոլորտի** ներքին շերտի և ցամաքի շփնդան հատվածի (մթնոլորտում և ցամաքում) օդաբնակ օրգանիզմների ամբողջությունը:

1924. **Օդակյաց-Ազրօն-Ազրօն**-Օրգանիզմ, որը գոյատևում է միայն ազատ թթվածի առկայության պայմաններում: Օդակյաց են գրեթե բոլոր կենդանիները և բույսերը, ինչպես նաև շատ միկրոօրգանիզմներ, որոնք իրենց կենսագործունեության համար օգտագործում են ազատ թթվածի կլանումով օքսիդացման ռեակցիայի ժամանակ ազատվող էներգիան:

1925. **Օդահարստացում-Ազրացա-Ազրացա-Ազրացա-Օդակյաց**-Որևէ միջավայր (ջուր, հող և այլն) ողի բնական կամ արհեստական ներհոսք: Կարող է իրագործվել տեխնիկական միջոցներով կամ տվյալ միջավայր ողի բնական անցումը խանգարող արգելքի վերացմամբ:

1926. **Օդաճեցում-Ազրոփոնիկա-Ազրոփոնիկ-Ազրոփոնիկ**-Առանց հողի, խոնավ օդում բույսերի աճեցում՝ արնատները պարբերաբար սննդառու լուծույթով ցողելով: Օգտագործվում է ջերմատներում, ջերմոցներում, տիեզերական նավերում և այլն:

1927. **Օդապլանկտոն-Ազրոլանկտոն-Ազրոլանկտոն-Մանրագույն**, երեմն ավելի խոշոր կենդանական ու բուսական օրգանիզմների միագումարությունը, որը օդային հոսանքներով տեղափոխվում է:

1928. **Օդաջրաբույս-Ազրօդրօֆում-Ազրօդրօֆում-1**. Ջրային բույսեր, որոնք ծաղկման ընթացքում փոշոտվում են օդում: 2. Բույսեր, որոնք սննդառու նյութերը ստանում են մթնոլորտի խոնավությունից: 3. Լավ օդապիրման կարիք ունեցող հողի բույսեր:

1929. **Օդերևութաբանական տարրեր-Մետեօրոլոգիչеские элементы-Meteorological elements**-Օդի վիճակի մի շարք բնութագրումների (ջերմություն, տեղումներ, ճնշում, խոնավություն, անպամաճություն, արևափայլք, տեսանելիություն և այլն) ու մթնոլորտային երևույթների (մառախուղ, ծյունամրիկ, անպրոպ, փոշեմրիկ և այլն) ընդհանուր անվանումը:

1930. **Օդերևութաբանական տարրերի տարեկան ընթացք-Годовой ход Метеорологических элементов-Annual march of meteorological elements**-Տարվա ընթացքում ջերմաստիճանի, օդի խոնավության, մթնոլորտային ճնշման, տեղումների և այլ մթնոլորտային տարրերի փոփոխությունը: Հաշվարկվում է բազմանյա միջին և առանձին տարրերի համար:

1931. **Օդերևութաբազմաթիվ մետեօրոլոգիչеские элементы-Метеосенсорность-Եղանակի կամ երկրաֆիզիկական գործուների փոփոխությունների նկատմամբ օդանիզմի արձագանքը**:

1932. **Օդերևութաբարակ-Մետեօրոլոգիա-Մետեօրոլոգիա-Метэоропати**-Օդի ջերմաստիճանի ու մթնոլորտային ճնշման տատանումներից, էլեկտրամագնիսական դաշտի լարվածության և օդային զանգվածների փոփոխությունից օրգանիզմի հիվանդագին կախվածությունը:

1933. **Օդի խոնացման գործելակարգ (ռեժիմ)-Ионизационный режим воздуха-**

**Air Ionization management**-թերև և ծանր իոնների հարաբերությամբ որոշվող օդի մաքրության ռեժիմ: Ինչքան մաքուր է օդը, այնքան մեծ է դրանում թերև իոնների կուտակումը:

1934. Օդի խոնավություն-**Վլախոստ վազդուխ-Air humidity**, **Atmospheric humidity**-Զրային գոլորշու պարունակությունը օդում: Բնութագրվում է բացարձակ և հարաբերական խոնավությամբ, խոնավության պակասորդով, ջրային գոլորշու առաջականությամբ, ցողակետով, տեսակարար խոնավությամբ:

1935. Օդի մաքրում-**Օսւառու վազդուխ-Air clean-up**-Տարբեր եղանակներով օդը կողմնակի խառնուրդներից մաքրելու և բնական մակարդակին հասցնելու գործընթաց:

1936. Օդի որակ-**Կառետու վազդուխ-Air quality**-Մարդու կամ տեխնոլոգիական պահանջների համար օդի ֆիզիկաքիմիական հատկությունների և միկրոօրգանիզմներով հագեցվածության համապատասխանության աստիճանը:

1937. Օդի փոշոտվածություն-**Dust content**-Մանր և կարծր մասնիկների փոշու առկայությունն օդում: Փոշին լինում է բնական (օր.՝ չորային շրջաններում քամիների միջոցով) կամ մարդածին (օր.՝ ավտոմեքենաների շարժման ընթացքում կամ հանքահորերում հորատման ժամանակ): Օդի մշտական փոշին և բարձր խտությունը հիվանդությունների աղբյուր են:

1938. Օդուղուտ-**Ազօսքեր-Ազօսքեր**-Երկրագնդի քաղանք՝ մթնոլորտի և ստորգետնյա օդի զանգվածները:

1939. Օգոն-**Օզոն-Օզոն**-Թթվածին եռատու մոլեկուլը:

1940. Օգոնային պատովածք-**Օզոնայ ձյրա-Ozone hole**-Երկրագնդի օգոնուրոտի քավական մեծ հատված, որտեղ օգոնի պարունակությունը գգալիորեն (մինչև 50%) պակաս է: Ներկայում այն արագ ընդարձակվելու միտում ունի: Դատկապես մեծ է Անտարկտիդայի վրա: Մարդու գործունեության հետևանք է:

1941. Օգոնուրոտ-**Օզոնօսքեր-Օզոնօսքեր**-10-50 կմ բարձրություններում մթնուրոտի շերտ, որտեղ կենտրոնացած է օգոնի հիմնական զանգվածը: Օգոնի առավելագույն կուտակումը 25-35 կմ վրա է: Օգոնի շերտը պահում է տիեզերական ճառագայթման մեծ մասը, որը մահացու է կենդանականի համար:

1942. Օլիգոտրոֆ-**Oligotroph**-տեսն Սակավասուն:

1943. Օլիգոֆագ-**Oligophag**-տեսն Սակավակեր:

1944. Օղակավարում-**Կոլցեվանիք-Ringing**-Կենդանիներին կամ թոշուններին պիտակավորված օղակների ամրացում՝ ուսումնասիրնան կամ հաշվառման նպատակով: Լինում է կենդանու համարը, պետության անունը, տեղը և ժամանակը:

1945. Օջախ-**Օւագ-Focus-1**. Անկախ ծևավորման գործուներից (էվոլյուցիա կամ արիեստական ընտրություն) տեսակների, սորտերի սկզբնական ծագման ու զարգացման տարածք, որտեղից այդ ծևերը տարածվել են, կամ կարող են տարածվել այլ վայրերում (բնական ճանապարհով կամ մարդու միջամտությամբ): 2. Որոշակի վնասատուի զանգվածային բազմացման տարածք:

1946. Օվիցիդ-**Ovicide**-տեսն Զվասպան:

1947. Օտար տեսակ-**Կոյջան բալ-Alien species**-Տվյալ բուսական համակեցությանը ոչ բնորոշ տեսակ:

1948. Օրական միջուտ-**Ծոտուա ամուստու-Daily range**, **Diurnal range**-Օրվա ընթացքում օդերևության տարրերի (ջերմաստիճան, խոնավություն, ճնշում և այլն) ամենամեծ և ամենափոք նիշերի տարբերությունը: Դաճախ նկատի ունեն այս կամ այն ամսվա կամ տարվա օրական միջին լայնությունը՝ հաշվարկված բազմայա տվյալներով:

1949. Օրական ոիթմ-Ծոտօնի բյութ-Մարդու օրգանիզմի մեկորյա կենսաբանական ոիթմերը: Դրանց հաճախակի խախտումները հիվանդությունների պատճառ են դառնում:

1950. Օրգանական հողմահարում-**Organic weathering**-Օրգանիզմների և նրանց քայլայնան նյութերի ազդեցությամբ լեռնային ապարների քայլայման ու քիմիական փոփոխման գործընթացը: Տեղի են ունենում մեխանիկական քայլայում՝ բույսերի արնատներով, ու քիմիական ներգործում՝ բույսերի արտաշնչած ածխաբը վկվով և օրգանական բրուներով:

1951. Օրգանաշրջում-**Tropism**-Միջավայրի արտաքին գործուների միակողմանի կայուն ազդեցությամբ բույսերի ճողուտերի, տերևների, արմատների կողմանուշման փոփոխությունը: Լինում են լուսային, ծանրության ուժի և քիմիական ազդեցությամբ առաջացած օրգանաշրջումներ:

1952. Օրգանիզմի և միջավայրի փոխարաբերություններ-**Ենումությունը օրգանական ս քրծք-Organism and environmental relation**-Շրջակա կենուանի և անկենդան բնության (այդ բվում նույն տեսակի առանձնյակների) ազդեցությունն օրգանիզմի վրա, և այդ օրգանիզմի հակազդեցությունը գոյամիջավայրին: Այլ օրգանիզմների ու համակեցությունների հետ շփումներում տարբերում են միջավայրի պասսիվ կամ անուղղակի և ակտիվ կամ ուղղակի փոխազդեցություններ:

1953. Օրգանիզմների գաղութ-**Կոլոնիա օրգանազմություն-Colony of organisms**-Դամատեր ապրող օրգանիզմների խումբ, որոնցից յուրաքանչյուրը կարող է ինքնուրույն գոյություն ունենալ, բայց էվոլյուցիայի ընթացքում հարմարվել է սերտ հարևանությամբ ապրելուն և դրանից ինչ-որ օգուտ է ստանում:

1954. Օրգանիզմների զանգվածային բազմացման բանկում-**Եռուսակա մասսով բազմության օրգանազմություն-Break of reproduction**-Որևէ տեսակի օրգանիզմների քանակի կտրուկ, բազմակի աճ, որը տեղի է ունենում լիաշրջան, պարբերաբար կամ կրկնման անթկատնելի օրինաչափությամբ՝ սովորաբար միջավայրի կայուն բնական կամ մարդագին փոփոխման (անտառների երիտասարդացում, հերկում, կլիմայի փոփոխություն և այլն) պատճառով:

1955. Օրգանիզմների թվաքանակ-**Կուլունություն օրգանազմություն-Number of organisms**-1. Միավոր մակերեսի վրա տեսակի առանձնյակների բացարձակ թվաքանակը: 2. Տարածքի վրա առանձնյակների և տեղախմբի տեսակների ընդհանուր քանակը (հարաբերական թվաքանակ):

1956. Օրգանիզմների քանակի հաշվառում-**Կուլունություն օրգանազմություն-Numerical estimate of organisms**-Միավոր մակերեսին կամ ծավալին ընկնող առանձնյակների բացարձակ քանակության կամ հարաբերական խության հաշվարկումը:

1957. Օրգանիզմ-նշանացույց-**Օրգանազմ-սևակատոր-Organism-indicator**-1. Օրգանիզմը որպես գոյապահապահական հարմարվողականության ներ սահմաններ ունեցող տեսակի ներկայացուցիչ, որն իր սեփական վարքով, բնախոսական հակագումամբ կամ հենց գոյություն ունենալու հնարավորությամբ ցույց է տալիս շրջակա միջավայրի փոփոխությունները, բնական կամ մարդագին բնութագրումները: 2. Օրգանիզմ, որի ճնշված վիճակը, ոչնչացումը կամ արագ բազմացումն ու աճը նախազգուշացնում են միջավայրի աղտոտվածության, աղտոտիչների կազմի, մակարդակի և կուտակումային ազդեցությունների մասին:

1958. Օրնիտոխոր-**Օրնիտոքօր-Omnithochore**-տես թռչնացիր:

1959. Օրնիտոխորիա-**Օրնիտօքօրիա-Omnithochory**-տես թռչնացրում:

1960. Օրնիտոֆագ-**Օրնիտօքօգ-Omnithophag**-տես թռչնակեր:

1961. Օրնիտոֆաունա-Օրնիտոֆաունա-տես Թռչնաշխարհ:  
1962. Օրնիտոֆիլիա-Օրնիտոֆիլիա-Օրնիտոֆիլի-տես Թռչնափոշոտում:  
1963. Օքսիլոֆիլ-Օքսիլոֆիլ-Օքսիլոֆիլ-տես Թթվուտասեր բույս:

## Ֆ

1964. Ֆաներօֆիլ-Փաներօֆիլ-Phanerophyte-Բույս, որի վերականգնման բողոքները հիմնականում ծառեր, բիեր և բիկիներ:

1965. Ֆացիա-Փացիա-Facies-1. Նոյս կենսատեղում գոյատեղի պայմանների անշան տարրերություններով հատվածներ: 2. Լանդշաֆտագիտությունում՝ աշխարհագրական լանդշաֆտի ծևաբանական տարրական միավոր: “Պարզագույն բնական համալիր է կապված է մեզոռելիքի մեկ տարրին (օր. բլիր զագար կամ միկրոռելիքի առանձին ձև): Ընդգրկում է մեկ կամ մի քանի մոտիկ կենսահամակեցություններ: 3. Շողագիտությունում հողային գոտու կամ ենթագոտու մաս:

1966. Ֆաունա-Փանա-Փանա-տես Կենդանաշխարհ (Կենդանական աշխարհ):

